



Զիաց Մեր Հանապազորդ

ՅՈՒԼԻՍ | ՕԳՈՍՏՈՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024

(July | Aug | Sept 2024)

ԼԵ. ՏԱՐԻ
Գ. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ընտանեկան
Ամենօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք
Our Daily Bread Ընկերակցութեան որուն
թոյլատուութեամբ *Our Daily Bread* գրքոյկէն
թարգմանուած են յաջորդ Էջերու
խորհրդածութիւնները

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Armenian Missionary Association of America
31 West Century Road
Paramus, New Jersey 07652
U.S.A.



Ճշմարտութիւնը խօսելով սիրոյ մէջ, ամէն բանի մէջ աճիք
անո՛ւ՛ որ գլուխն է, այսինքն՝ Քրիստոսով: [Եփ. 4. 15]

ԾԱՌԱՅԵԼՈՎ՝ ԻՐ ՀԱՆՈՅՔԻՆ

Էնտրու Քարտ (Andrew Card) Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ՝ ձորճ Ու. Պուշի (George W. Bush) աշխատակազմի ղեկավարն էր: Սպիրտակ Տան մէջ իր ունեցած դերին վերաբերեալ տուած հարցազրոյցին մէջ՝ բացատրեց. «Իւրաքանչիւր աշխատաւորի գրասենեակին մէջ կախուած է՝ շրջանակի մէջ դրուած՝ նպատակի յայտարարութիւն մը, որ կ'ըսէ. «Մենք կը ծառայենք Նախագահին հաճոյքին»: Բայց այդ չի՛ նշանակեր, որ մենք կը ծառայենք՝ Նախագահը գոհացնելու կամ զինք հաճեցնելու համար: Այլ կը ծառայենք իրեն՝ ըսելու ա՛յն, ինչ որ ի՛նք պէտք է իմանայ իր գործը ընելու համար»: Այդ գործը՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները կառավարելն է:

Մեր դերերուն եւ յարաբերութիւններուն շատերուն մէջ՝ մենք կը փորձուինք մարդիկ հաճեցնել, փոխանակ մղելու գիրար՝ միասնութիւն կերտելու, ինչպէ՛ս Պօղոս առաքեալ շատ յաճախ յորդորեց ընելու: Եփեսացիս 4-ին մէջ Պօղոս գրեց. «Նախ տուաւ ոմանք՝ առաքեալներ ըլլալու, ոմանք՝ մարգարէներ, ոմանք՝ աւետարանիչներ, ոմանք՝ հովիւներ ու վարդապետներ, սուրբերուն կատարելութեանը համար. մինչեւ որ բոլորս հասնինք հաւատքին եւ Աստուծոյ Որդին ճանչնալու միաբանութեան» (Հմ. 11-13): 15-16-ին մէջ՝ Պօղոս հերքեց մեր ժողովուրդը հաճեցնելու մեր յակումները՝ շեշտելով, որ այդ պարգեւները պէտք է արտայայտուին «ճշմարտութիւնը խօսելով սիրոյ մէջ» որպէսզի «ամէն բանի մէջ աճինք սիրով»:

Որպէս Յիսուսի հաւատացողներ՝ մենք կը ծառայենք մարդոց՝ կառուցելու գիրենք եւ իրականացնելու Աստուծոյ նպատակները: Անկախ անկէ, որ կը գոհացնենք ուրիշները թէ ո՛չ, մենք պէտք է գոհացնենք Աստուած, քանի որ Ան կը գործէ մեր միջոցով՝ ստեղծելու միութիւն՝ Իր եկեղեցիին մէջ:

Աղօթք - Սիրելի Աստուած, կ'ուզեմ Քեզ հաճեցնել՝ սիրով ըսելով ճշմարտութիւնը՝ իմ քոյրերուս եւ եղբայներուս: Ամէն:
Որո՞ւ կը ծառայենք՝ հաճեցնելու համար: Ինչպէ՞ս կրնայ Աստուծոյ ներկայութիւնը ուղղել մեր խօսքերը:

Տէրոջ՝ ձեր Աստուծոյն առջեւ եօթը օր ուրախացէք: [Դեւ. 23. 40]

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Մենք բանակում ըրինք աստղերուն տակ, մեր՝ եւ անսահման Արեւմտեան Ափրիկէի երկինքին միջեւ ոչի՛նչ կար: Տարուան չոր եղանակին՝ վրանի կարիքը չկար, բայց խարոյկը կարեւոր էր: Հայրս՝ փայտով մը գերանները շարժելով ըսաւ. «Երբէք թոյլ մի՛ տաք, որ կրակը մարի»: Կրակը վայրի կենդանիները հեռու կը պահէ: Աստուծոյ արարածները սքանչելի են, բայց երբէք չես ցանկար, որ բանակավայրին մէջ բնձառիւծ կամ օձ ըլլայ:

Հայրս միսսոնար էր Կանայի (Ghana) Վերի Մարզին մէջ եւ հմտութիւնը ունէր՝ ամէն ինչ վերածելու՝ ուսուցման պահի: Բանակումը՝ բացառութիւն չէր:

Աստուած՝ նոյնպէս բանակումներ օգտագործեց՝ որպէս ուսուցման մէկնակէտ՝ Իր ժողովուրդին համար: Տարին մէկ անգամ՝ ամբողջ շաբաթ մը, Իսրայէլացիները պէտք էր ապրէին «վայելուչ ծառերու արմաւենիի ճիւղերով, տերեւախիտ ծառերու եւ վտակի ուռիներու ոստերով» պատրաստուած տաղաւարներու մէջ (Դեւ. 23. 40): Նպատակը երկո՛ւ էր: Աստուած անոնց ըսաւ. «Բոլոր Իսրայէլացի բնիկները տաղաւարներո՛ւ մէջ բնակին, որպէսզի ձեր սերունդները գիտնան թէ երբ Իսրայէլի որդիները եգիպտոսի երկրէն հանեցի՝ տաղաւարներու մէջ բնակեցուցի զանոնք» (Հմ. 42-43): Բայց դէպքը պէտք է տօնական ըլլայ: «Տէրոջ՝ ձեր Աստուծոյն առջեւ եօթը օր ուրախացէք» (Հմ. 40):

Թերեւս բանակումը քու զուարճութեան գաղափարդ չէ՛, բայց Աստուած սահմանեց մէկ շաբաթուայ բանակում՝ Իսրայէլացիներուն համար, որպէ՛ս Իր բարութիւնը յիշելու ուրախ միջոց մը: Մենք հեշտութեամբ կը մոռնանք մեր տօներու հիմքը եղող իմաստը: Մեր տօնակատարութիւնները կրնան ուրախալի յիշեցումներ ըլլալ՝ մեր սիրող Աստուծոյ նկարագիրին մասին: Ան նաեւ զուարճութիւն ստեղծեց:

Աղօթք - Հայր, շնորհակալ եմ՝ այն զուարճութեան համար, որ Դո՛ւն դրած ես Քու ստեղծագործութեան եւ տօնակատարութիւններու ժամանակ: Ամէն:
Թող մեր սիրելի տօնակատարութիւնները մեզի յիշեցնեն՝ Աստուծոյ բարութեան մասին:



Քու կանոններովդ պիտի հաճոյանամ, ու քու խօսքդ պիտի չմոռնամ: [Սաղմ. 119. 16]

ԱՍՏՈՒԾՈՅ՝ ԿԵԱՆՔ ՓՈԽՈՂ ՊԱՐԳԵԷԸ

Ողջունեցի մեր երիտասարդական խումբը, երբ ամուսինս ու ես Աստուածաշունչ կը բաժնէինք: Ըսի՛. «Աստուած կ'օգտագործէ այս անգին նուէրները՝ ձեր կեանքը փոխելու համար»: Այդ գիշեր՝ քանի մը երիտասարդներ ուխտեցին միասին կարգալ Յովհաննու աւետարանը: Շարունակեցինք հրաւիրել խումբին՝ Աստուածաշունչը կարգալու մեր տան մէջ, մինչ կ'ուսուցանէինք անոնց՝ մեր շաբաթական հանդիպումներու ընթացքին: Աւելի քան մէկ տասնամեակ անց՝ տեսայ՝ մեր երիտասարդներէն մէկը: Ան ըսաւ. «Ես տակաւին կը գործածեմ քու ինծի տուած Աստուածաշունչը»: Տեսայ՝ ապացոյցները անոր հաւատքով լեցուն կեանքին մէջ:

Աստուած զօրութիւն կու տայ Իր ժողովուրդին կարգալէ, արտասանելէ եւ թէ՛ ո՛ր կարելի է գտնել Աստուածաշունչի համարները յիշելէ՛ անդին երթալու: Ան մեզի հնարաւորութիւնը կու տայ՝ «մնալու մաքրութեան ուղիին վրայ»՝ ապրելով «ըստ Աստուածաշունչին» (Սաղմ. 119. 9): Ան կ'ուզէ, որ մենք փնտռենք եւ հնազանդինք Իրեն, քանի որ կ'օգտագործէ Իր անփոփոխ ճշմարտութիւնը, որպէսզի մեզ ազատէ մեղքէն եւ փոխէ (Հմ. 10-11): Մենք կրնանք՝ ամէն օր խնդրել Իրմէ, որ օգնէ մեզի ճանչնալու գիւնք եւ հասկնալու, թէ ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչին մէջ (Հմ. 12-13):

Երբ գիտակցինք Աստուծոյ տուած ճամբով ապրելու արժէքին, կրնանք «ուրախանալ» Իր խրատով «ինչպէս փարթամ ուրախութեամբ կ'ուրախանայ» (Հմ. 14-15): Սաղմոսերգուին պէս՝ մենք կրնանք երգել. «Քու կանոններովդ պիտի հաճոյանամ, ու քու խօսքդ պիտի չմոռնամ» (Հմ. 16): Ինչպէ՛ս որ կը հրաւիրենք Սուրբ Հոգին՝ մեզ զօրացնելու, մենք կը վայելենք Աստուածաշունչը կարգալու աղօթքով մեր անցուցած իւրաքանչիւր պահը՝ որ է Աստուծոյ կեանք փոխող պարգեւը մեզի:

Աղօթք - Միրող Աստուած, կը խնդրե՛մ օգնե՛ ինծի՝ ուրախանալու Աստուածաշունչի անգին խօսքերով, քանի որ Դո՛ւն կը զօրցանես զիս՝ ենթարկուելու Քեզի իմ կեանքիս մէջ: Ամէն:

Աստուածաշունչի սերտողութիւնը կը ճոխացնէ մեր հաւատքը:

Յոգիին միջոցով կը գոչենք. «Աբբա՛ Յայր»։ [Քոմ. 8. 15]

ԿԱՆՉԵԼՈՎ՝ ՄԵՐ ԵՐԿՆԱԻՈՐ ՅԱՅՐԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ՝ Հէրրի Դրումընի (Harry Truman) Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ավարտին մասին ըրած յայտարարութենէն մի քանի վայրկեաններ ետք, Միզուրիի, Կրէնտփիու (Missouri, Grandview) քաղաքը գտնուող փայտէ տնակի մը հեռախօսը հնչեց: Ինիսուն երկու տարեկան կին մը, ներողութիւն խնդրեց իր հիւրէն ու վերցուց հեռախօսը: Իր հիւրը լսեց անոր ըսածը. «Բարեւ: ... Այո՛, լաւ եմ: Այո՛, մտիկ կ'ընէի ձայնասփիւռը: ... Հիմա՛ դուն եկուր ու տես զի՛ս, եթէ կրնաս: ... Յտեսութիւն»:

Տարեց կինը վերադարձաւ իր հիւրին մօտ եւ ըսաւ. «Այդ, որդիս՝ Հէրրին էր: Հէրրին հիանալի մարդ մըն է: ... Գիտէի, որ ան կը գանգէ: Ան միշտ կը գանգէ ինծի՝ բան մը պատահելէ ետք»:

Անկախ անկէ, թէ որքան՝ յաջողակ եւ քանի տարեկան ենք, կ'անձկանք զանգել մեր ծնողներուն եւ լսելու անոնց հաստատող խօսքերը. «Լաւ ըրի՛ր»: Մենք կրնանք մեր յաջողութիւնները ունենալ, բայց մենք միշտ ալ կը մնանք անոնց որդին կամ դուստրը:

Սակայն դժբախտաբար, ո՛չ բոլորը նման յարաբերութիւններ ունին իրենց երկրային ծնողներուն հետ: Բայց Յիսուսի միջոցով՝ մենք բոլորս կրնանք ունենալ Աստուած՝ որպէս մեր երկնաւոր Հայրը: Մենք՝ որոնք կը հետեւինք Քրիստոսի, կ'ըլլանք Աստուծոյ ընտանիքին անդամները, քանի որ «ստացանք որդեգրութեան Հոգին» (Հռոմ. 8. 15): Մենք այժմ «Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ» ենք (Հմ. 17): Մենք Աստուծոյ հետ չենք խօսիր՝ որպէս ստրուկներ, որովհետեւ այժմ ունինք ազատութիւն օգտագործելու այն մտերմիկ անունը, որը օգտագործեց Յիսուս իր յուսահատ կարիքին ատեն. «Աբբա, Հայր» (Հմ. 15, տե՛ս նաեւ Մարկոս 14. 36):

Նորութիւններ ունի՞ս: Կարիքներ ունի՞ս: Կանչէ՛ Անոր, որ քու յաւիտենական տունդ է:

Աղօթք - Ողորմած Յայր, շնորհակալ եմ՝ որ Դուն Ան ես, որու կրնամ աղօթել՝ որեւէ ատեն: Ամէն:

Եթէ քու նորութիւններդ ու բոլոր կարիքներդ կը բաժնեկցիս երկրաւոր ծնողներուդ հետ, ի՞նչ կրնաս ըսել քու երկնաւոր Ծօրդ:

Յակոբ մինակ մնաց, եւ մարդ մը կը գօտեմարտէր իրեն հետ՝ մինչեւ արշալոյսին ծագիլը: [Ծնն. 32. 24]

ԳՕՏԵՄԱՐՏԻԼ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՅԵՏ

Ամուսինիս մահէն ետք, վաղեմի ընկեր մը գրեց ինծի. «Էլընը՝ (Alan) Աստուծոյ հետ գօտեմարտող մըն էր: Ան իսկական Յակոբ մըն էր եւ ուժեղ պատճառ մը, թէ ինչո՞ւ ես այսօր Քրիստոնեայ եմ»: Ես երբէ՛ք չէի մտածած համեմատել Էլընի պայքարը՝ Յակոբի պայքարին հետ, բայց այդ խորհուրդը տեղին էր: Իր ամբողջ կեանքին ընթացքին՝ Էլըն կը պայքարէր ինքն իր հետ եւ Աստուծոյ հետ իր հարցումներուն պատասխան գտնելու: Ան կը սիրէր Աստուծոյ, բայց միշտ չէր կրնար ըմբռնել այն ճշմարտութիւնները, որ Ան կը սիրէ՛ր զինք, կը ներէ՛ր ու կը լսէ՛ր իր աղօթքները: Հակառակ այդ բոլորին, անոր կեանքը ունեցաւ իր օրհնութիւնները եւ դրական ազդեցութիւն՝ շատերու վրայ:

Յակոբի կեանքը պայքարով էր: Սակարկութիւն ըրաւ իր եղբօր՝ Եսաւի հետ անդրանիկի իրաւունքը ստանալու համար: Խաբէութեամբ՝ իր հօր՝ Իսահակի օրհնութիւնը ստացաւ: Տունէն փախաւ եւ տարիներ շարունակ պայքարեցաւ իր ազգականին ու աներոջ՝ Լաբանի հետ: Յետոյ փախաւ Լաբանէն: Մինակ էր ու կը վախնար հանդիպելու Եսաւին: Սակայն, ան ունեցաւ դրախտային հանդիպում մը. «Աստուծոյ հրեշտակներ անոր հանդիպեցան» (Ծնն. 32. 1), հաւանաբար այս յիշեցում մըն էր Աստուծոյ կողմէ տրուած իր՝ աւելի առաջ ունեցած երազին մասին (28. 10-22): Հիմա Յակոբ ուրիշ հանդիպում մը ունեցաւ. ամբողջ գիշեր գօտեմարտեցաւ «մարդու» մը հետ՝ մարդու կերպարանք ունեցող Աստուծոյ հետ, որ անուանեց զինք Իսրայէլ, որովհետեւ ան «Աստուծոյ եւ մարդոց հետ գօտեմարտեցաւ ու յաղթեց» (32. 28): Աստուած Յակոբի կողքին էր ու կը սիրէր զինք, անկախ այդ ամէն բաներէն:

Բոլորս ալ պայքարներ ունինք: Բայց մենք մինակ չենք. Աստուած մեզի հետ է իւրաքանչիւր փորձութեան ժամանակ:

Աղօթք - Սիրելի Աստուած, օգնէ՛ ինծի, որ իմ հարցերս ու տաղանապներս Քեզի բերեմ: Գիտեմ դուն կը լսես զիս: Ամէն **Երբ կը գօտեմարտիս Աստուծոյ հետ, մխիթարական է գիտնալը՝ թէ Աստուած քեզի հետ է քու պայքարներուդ մէջ:**

Մեր մարտի զենքերը մարմնաւոր չեն: [Բ. Կորնթ. 10. 4]

ՄԵՐ ՍՊՈՒԱԶԻՆՈՒԹԻՒՆԸ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Հովիւ Պէյլիին (Bailey) նոր ընկերը՝ բաժնեկցած էր իր հետ՝ իր չարաշահումներուն եւ մոլութեան պատմութիւնները: Թէեւ երիտասարդը կը հաւատար Յիսուսի, քանի որ կանուխ տարիքի մէջ ենթարկուած էր սեռային բռնութեան եւ պոռնկագիրի, ու ան ինկած էր խնդրի մը մէջ, որ իրմէ շատ աւելի մեծ էր: Եւ իր յուսահատութեան մէջ՝ ան օգնութեան ձեռք խնդրեց:

Որպէս Քրիստոսի հաւատացողներ, կը պատերազմինք չարին անտեսանելի ուժերուն հետ (Բ. Կորնթ. 10. 3-6): Բայց մեզի գէնքեր տուած են՝ մեր հոգեւոր մարտերը մղելու համար: Սակայն ատոնք աշխարհի գէնքերը չեն: Ընդհակառակը, մեզի տրուածները «Աստուծոյ միջոցով զօրաւոր են՝ ամրոցներուն քանդումին համար» (Հմ. 4): Ի՞նչ կը նշանակէ այդ: «Ամրոցները» լաւ կառուցուած եւ ապահով վայրեր են: Մեր Աստուծոյ կողմէ տրուած գէնքերը՝ կը ներառեն «արդարութեան գէնքեր՝ ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութեամբ, արդարութեան զրահով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է» (6. 7): Եփեսացիս 6. 13-18-ն կ'ընդլայնէ ցանկը՝ այն բաներուն, որոնք կ'օգնեն պաշտպանելու մեզ, ներառելով Սուրբ Գրութիւնները, հաւատքը, փրկութիւնը, աղօթքը եւ այլ հաւատացեալներու աջակցութիւնը: Երբ կը դիմագրաւենք մեզմէ աւելի մեծ եւ ուժեղ ուժեր, այդ գինամթերքի իւրացումը՝ կրնայ տարբերութիւն դնել՝ հաստատ կենալու եւ սայթաքելու միջեւ:

Աստուած նաեւ կ'օգտագործէ խորհրդատուներ եւ այլ մասնագէտներ՝ օգնելու անոնց, որոնք կը պայքարին այն ուժերուն դէմ, որոնք չափազանց մեծ են՝ միայնակ լուծելու համար: Բարի լուրը այն է, որ Յիսուսի մէջ եւ իր միջոցով մենք պէտք չէ՛ յանձնուինք, երբ կը պայքարինք: Մենք ունինք Աստուծոյ սպառազինութիւնը:

Աղօթք - Սիրելի Յիսո՛ւս, Դուս աւելի հզօր ես, քան որեւէ տեսանելի կամ անտեսանելի ուժ: Թող Զո՛ւ ներկայութիւնդ ու զօրութիւնդ՝ գործեն իմ մէջս այսօր: Ամէն

Մեր անձնական պայքարներուն մէջ՝ աջակցութեան համար, դիմենք Աստուծոյ ու հազնի՛նք մեր հոգեւոր սպառազինութիւնը:

Քանի որ Աստուած անիրաւ չէ՛ որ մոռնայ ձեր գործը, եւ այլ սերը՝ որ ցոյց տուիք իր անունին համար, երբ սպասարկեցիք սուրբերուն ու կը սպասարկէք ալ»: [Եր. 6. 10]

ՏՈՒՐՄԻ ՄԵՁ ԹԱԿԱՐԴՈՒԱԾ

Փ ֆննսիլվէնիայի (Pelnnsylvania) Մարս (Mars) տուրմի (շոքոլա) գործարանի՝ երկու գործաւորներ ինկան տուրմի մեծ տակառի մը մէջ: Սա՛ կրնայ թուիլ որպէս կատակի մը սկիզբը եւ գուցէ՛ հաճելի կացութիւն մը՝ տուրմի սիրահարներուն համար: Բայց տղամարդիկը, թէեւ անվնաս, մինչեւ իրենց մէջքը ինկած էին տուրմի մէջ եւ չէին կրնար իրենք իրենց դուրս գալ: Հրէջջները, ի վերջոյ՝ ստիպուած եղան ծակ մը բանալու տակառին մէկ կողմը, զիրենք ապահով դո՛ւրս հանելու համար:

Երբ Երեմիա մարգարէն ինքզինք գտաւ ցեխով լեցուած ջրհորի մը յատակը, այդ մէկը հաճելի չէր: Որպէս Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ ժողովուրդին պատգամաբեր՝ ան յայտարարեց, որ հրատապ է անոնց համար քաղաքէն հեռանալը, քանի որ անիկա՝ շուտով «անպատճառ Բաբելոնի թագաւորին գորագունդին ձեռքը պիտի մատնուի, որ զայն պիտի գրաւէ» (Եր. 38. 3): Սեղեկիա թագաւորի որոշ պաշտօնեաներ՝ պահանջեցին Երեմիան «մերցնել», քանի որ անոնք կը պնդէին թէ անոր արտասանած խօսքերը «պատերազմիկներուն ձեռքերը կը թուլցնէր» (Հմ. 4): Թագաւորը համաձայնեցաւ եւ անոնք Երեմիան «պարաններով իջեցուցին ջրհորին մէջ», ուր ան մխրճուեցաւ սիկին մէջ (Հմ. 6):

Երբ թագաւորին մէկ այլ պաշտօնեայ՝ որ օտարազգի էր, պաշտպանել ուզեց Երեմիայի բարօրութիւնը՝ ըսաւ թէ միւսները «չարիք գործեցին», Սեղեկիա հասկցաւ, որ սխալ մը ըրած է, հրամայեց Աբդեմելէքին հանել Երեմիան «ջրհորէն» (Հմ. 9-10):

Նոյնիսկ երբ մենք ճիշդը կ'ընենք, ինչպէս Երեմիա էր, երբեմն կրնանք զգալ, որ մխրճուած ենք ցեխի մէջ: Եկէ՛ք խնդրենք Աստուծմէ՛ բարձրացնել մեր տրամադրութիւնը, մինչ մենք կը սպասենք Անոր օգնութեան՝ մեր առջեւ եղած դժուարութիւններուն ժամանակ:

Աղօթք - Հայր Աստուած, կը խնդրեմ՝ աջակցի՛ր ինձի, մինչ ես կը ձգտիմ հնազանդիլ Քեզի: Ամէն:

Երբ նոյնիսկ ճիշդը ընենք՝ մարդիկ կրնան մեզ անարդար նկատել, սակայն վստահի՛նք Աստուծոյ, որ մեզի կ'աջակցի:



Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ՝ ու եկանք քեզի: [Մատթ. 25. 39]

ԾԱՌԱՅԵԼ ՅԻՍՈՒՍԻ

1800-ականներու սկիզբները՝ Էլիզապէթ Ֆրայ (Elizabeth Fry) սարսափած էր Լոնտոնի կիներու բանտի պայմաններէն: Կիներ եւ անոնց երեխաները՝ հաւաքուած էին միասին եւ կը քնանային՝ ցուրտ քարէ գետինին վրայ: Թէեւ անոնց տրամադրուած չէր լաւ անկողիններ, սակայն ծորակ մը՝ ոգելից խմիչք կը հոսեցնէր: Տարիներ շարունակ ան կ'այցելէր բանտ եւ կը փոխէր կացութիւնը՝ հագուստ տրամադրելով, դպրոց բանալով եւ Աստուծոյ Խօսքը սորվեցնելով: Բայց շատերը տեսան անոր ամենամեծ ազդեցութիւնը՝ որպէս սիրառատ ներկայութիւն եւ յոյսի յստակ ուղերձ:

Իր գործողութիւններուն մէջ՝ ան կը հետեւէր կարիքաւորներուն ծառայելու՝ Յիսուսի հրաւերին: Օրինակ, Զիթենեաց լերան վրայ եղած ատեն, Քրիստոս պատմեց մի քանի պատմութիւններ՝ վերջին օրերուն մասին, անոնց մէջ ըլլալով արդարներու արժանի ըլլալը «յաւիտենական կեանքի» (Մատթ. 25. 46): Այս պատմութեան մէջ՝ Թագաւորը կ'ըսէ արդարներուն, որ Իրեն խմելու ջուր տուին, ներս հրաւիրեցին եւ այցելեցին գինք բանտին մէջ (Հմ. 35-36): Երբ անոնք չէին կրնար յիշել, որ այդ բաները ըրած են, Թագաւորը կը պատասխանէ. «Քանի որ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՛ ըրիք» (Հմ. 40):

Ի՞նչ զարմանալի է, որ երբ կը ծառայենք ուրիշներուն՝ Սուրբ Հոգիին օգնութեամբ, մենք կը ծառայենք Յիսուսի: Մենք կրնանք հետեւիլ Էլիզապէթ Ֆրայի օրինակին եւ ծառայել ուրիշներու՝ տունէն. օրինակ՝ միջնորդական աղօթքներու կամ քաջալերական ուղերձներ ուղարկելու միջոցով: Յիսուս կը հրաւիրէ մեզ՝ սիրելու գինք, երբ մենք կ'օգտագործենք մեր հոգեւոր պարգեւները ու տաղանդները՝ օգնելու ուրիշներուն:

Աղօթք - Սիրելի Յիսո՛ւս, կը խնդրեմ՝ օգնե՛ր ինծի հասկնալ, թէ այսօր ո՞ր կրնամ ի գործ դնել իմ սէրս: Ամէն:

Ի՞նչ կը նշանակէ կը ծառայենք Յիսուսի՞ երբ կը ծառայենք ուրիշներու: Ինչպե՞ս կրնանք օգնութեան հասնիլ կարիքաւորներուն:

Ա՛լ ի՞նչ կ'արգիլե գիս մկրտուելէ: [Գործք 8. 36]

ԿԸ ՊԱՏԿԱՆԻՄ

Դերասանուհի՝ Սէլլի Ֆիլդ (Sally Field) վերջապէ՛ս զգաց, ինչ բանի որ մենք բոլորս կը տենչանք: Երբ ան 1985-ին արժանացաւ երկրորդ անգամ ըլլալով Օսքարի (Oscar) պարգեւին, ան բացականչեց իր ընդունելութեան խօսքին մէջ. «Ամէն բանէ աւելի՛ կ'ուզէի ձեր յարգանքը: Առաջին անգամը՝ չզգացի այդ մէկը: Բայց այս անգամ՝ կը զգամ այդ: Եւ չեմ կրնար հերքել այն փաստը, որ դո՛ւք զիս կը սիրէք, ճիշդ հիմա, դո՛ւք զիս կը սիրէք»:

Եթովպիացի պալատական ներքինին՝ նոյնպէս ապշեցաւ իրեն տրուած ընդունելութեան: Որպէս հեթանոս ներքինի, ան արտօնութիւն չունէ՛ր մտնելու տաճարին ներքին գաւիթները (տե՛ս Եփ. 2. 11-12, Բ. Օր. 23. 1): Սակայն կը ցանկար ներառուիլ: Փիլիպպոս գտաւ անոր, երբ կը վերադառնար Երուսաղէմ՝ մէկ այլ անբաւարար ուխտագնացութենէ ետք (Գործք 8. 27):

Եթովպիացին կը կարգար Եսայի մարգարէութիւնը, ուր Աստուած կը խոստանար այն ներքինիներուն ըսելով. անոնք որոնք «իմ ուխտիս կը կառչին» տեղ եւ անուն պիտի ունենան «իմ տանս մէջ ու պարիսպներէն ներս» (Ես. 56.4-5): Ան հարցուց թէ ինչպէ՞ս կրնայ այս բանը ըլլալ: Այն ատեն Փիլիպպոս բացաւ իր բերանը եւ «Յիսուսը աւետեց անոր», եւ մարդը պատասխանեց. «Ահա՛ ջուր, ա՛լ ի՞նչ կ'արգիլէ զիս մկրտուելէ» (Գործք 8. 35-36):

Ան կը հարցնէր՝ թէ իսկապէ՞ս ինծի թոյլ կու տան ներս մտնել: Ես կը պատահանի՞մ: Փիլիպպոս մկրտեց անոր՝ որպէս նշան, որ Յիսուս քանդած է ամէն պատնէշ (Եփ. 2. 14): Յիսուս՝ կը գրկէ եւ կը միաւորէ բոլոր անոնց, որոնք ետ կը կենան մեղքէն եւ իրենց վատահոլութիւնը կը դնեն իր վրայ: Մարդը «գնաց իր ճամբան ուրախութեամբ» (Գործք 8. 39): Ան վերջապէս եւ լիովին կը պատկանէր:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, ես կը պատկանիմ Աստուծոյ եւ Անոր ընտանիքին, քանի որ կը պատկանիմ Զեգի: Ամէն:
Բոլոր Յիսուսի հաւատացողները՝ կը պատկանին Անոր ընտանիքին եւ մկրտութիւնը՝ արտաքին փաստն ու ապացոյցն է՝ այդ ճշմարտութեան:



Մարդը արտաքին երեւոյթին կը նայի, բայց Տէրը սիրտին կը նայի: [Ա. Թագ. 16. 7]

ՔՆՆԷ ՍԻՐՏՍ՝ Ո՛Վ ԱՍՏՈՒԱԾ

Ուտելիքի թափթփուքները նուազեցնելու համար, Սինկափուրի (Singapore) սննդամթերք վաճառող՝ մեծ ցանց ունեցող վաճառատուն մը, քիչ մը վնասուած պտուղներ եւ բանջարեղէններ՝ աւելի ցած գինով կը վաճառէ: Մէկ տարուան ընթացքին այս նախաձեռնութիւնը խնայեց աւելի քան 850 թոն արտադրանք, որ նախապէս դուրս կը թափուէր՝ գեղազիտական չափանիշներուն չհամապատասխանելուն համար: Շուտով գնողները իմացան, որ արտաքին տեսքը՝ սպիներն ու տարօրինակ ձեւերը, չեն ազդեր համին եւ սննդային արժէքին: Այն ինչ որ դուրսն է՝ միշտ չէ՛, որ կը որոշէ՝ թէ ինչ է ներսը:

Սամուէլ մարգարէն նման դաս մը սորվեցաւ, երբ Աստուած զրկեց զինք Իսրայէլի յաջորդ թագաւորը օծելու (Ա. Թագ. 16. 1): Երբ տեսաւ Եղիաբին՝ Յեսսէի անդրանիկ որդիին, Սամուէլ մտածեց, որ ան է՝ ընտրեալը: Բայց Աստուած ըսաւ. «Անոր երեւոյթին ու հասակին բարձրութեան մի՛ նայիր: ... Մարդը արտաքին երեւոյթին կը նայի, բայց Տէրը սիրտին կը նայի» (Հմ. 7): Յեսսէի ութը որդիներէն Աստուած ընտրեց ամենափոքրը Դաւիթը, որ իր հօրը ոչխարները կ'արածէր (Հմ. 11)՝ որպէս յաջորդ թագաւոր:

Աստուած աւելի շատ մտահոգուած է մեր սիրտերով, քան մեր ունեցած արտաքին հաւտարմագրերով. դպրոցը որ մենք կը յաճախենք, ինչ կը վաստակինք կամ որքա՛ն կամաւոր ծառայութիւն կ'ընենք: Յիսուս սորվեցուց իր աշակերտներուն կեդրոնանալ իրենց սիրտերը եսասիրական եւ չար մտքերէն մաքրելու վրայ, քանի որ «ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն, անիկա՛ կը պղծէ մարդը» (Մարկ. 7. 20): Ճիշդ այնպէ՛ս, ինչպէ՛ս Սամուէլ սորվեցաւ չմտածել արտաքին տեսքին վրայ, թող որ մե՛նք ալ Աստուծոյ օգնութեամբ, քննե՛նք մեր սիրտերը՝ մեր միտքերն ու մտադրութիւնները, այն ամէն բաներուն մէջ, ինչ որ կ'ընենք:

Աղօթք -- Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինծի ընել այն՝ ինչ որ կը պատուէ Զե՛գ: Ամէն:

Ե՞րբ սխալ շարժառիթով «լաւ բան» մը ըրած ենք: Ինչպե՞ս կրնանք վստահ ըլլալ, որ մեր սիրտին մէջ եղածը՝ մաքուր է:



Մեր Տերոջ շնորհքը յորդեցաւ ինծի հանդէպ՝ հաւատքով ու սիրով, որ Զրիստոս Յիսուսով է: Ա. Տիմ. 1. 14]

ԵՐԿՆԱՅԻՆ ԱՌԱՏՈՒԹԻՒՆ

Կը սպասէի ութը պանաններ ստանալ: Փոխարէնը, երբ բացի տունս զրկուած միթերքի պայուսակները, գտայ քսան պանան: Շուտով հասկցայ, որ իմ տեղափոխութիւնս Անգլիա՝ կը նշանակէ՛ր, որ ես նաեւ լիպրայով միթերք պատուիրելէ՛ անցայ քիլօկրամով խնդրելու: Երեք լիպրայի փոխարէն՝ ես պատուիրած էի երեք քիլօկրամ, մօտ ութ լիպրա, պանան:

Նման առատութեամբ մը՝ ես պատրաստեցի պանանի կարկանդակի բաղադրատոմսի մի քանի խմբաքանակ, օրհնութիւնը ուրիշներու հետ բաժնեկցելու համար: Մինչ կը ճզմէի պանանները՝ սկսայ մտածել կեանքիս այլ ոլորտներուն մասին, ուր ես անսպասելի առատութեան փորձառութիւնը ունեցած եմ. եւ տեսայ թէ իւրաքանչիւր ճանապարհ՝ ետ կը տանէր դէպի Աստուած:

Ըստ երեւոյթին, Պօղոս իր կեանքին մէջ՝ Աստուծոյ առատութեան մասին խորհրդածելու նմանատիպ փորձառութիւն ունեցած էր: Տիմոթէոսին ուղղուած իր առաջին նամակին մէջ՝ Պօղոս կանգ առաւ նկարագրելու իր կեանքը Յիսուսի առջեւ, ներկայացնելով զայն որպէս «հալածող եւ նախատող» (Ա. Տիմ. 1. 13), «մեղաւորներուն գլխաւորը» (Հմ. 15): Պօղոսի կոտորուածութեան մէջ՝ Աստուած շուայօրէն թափեց շնորհք, հաւատք եւ սէր (Հմ. 14): Իր կեանքի բոլոր առատութիւններուն մասին պատմելէ ետք, առաքեալը չկրցաւ զսպել իր գովասանքը Աստուծոյ հռչակելով Անոր արժանի «պատիւ ու փառք դարէ դար (Հմ. 17):

Պօղոսի նման՝ բոլորս ստացանք շնորհքի անսահման առատութիւն, երբ ընդունեցինք, մեզքէն փրկուելու՝ Քրիստոսի առաջարկը (Հմ. 15): Երբ կանգ կ'առնենք ու կը խորհինք բոլոր օրհնութիւններուն մասին, կը պարզենք, որ կը միանանք Պօղոսին երախտապարտ գովաբանելով մեր առատածեռն Աստուածը:

Աղօթք - Երկնաւոր Զայր, շնորհակալ եմ Զու շնորհքիդ առատ պարգեւին համար: Ամէն:

Եթէ կը զգաս ու կը տեսնես Աստուծոյ տուած առատութիւնը, գովաբանէ՛ զինք այսօր:



Արդարեւ Աստուած ամէն արարք դատաստանի պիտի կանչէ, ամէն ինչ որ թաքուն է, թէ՛ բարի եւ թէ չար: [Ժող. 12. 14]

ԲԱՅԱՅԱՅՏՈՒԱԾ ՄԵՂՔԵՐ

Գող մը՝ ներխուժեց հեռախօսներու նորոգութեան խանութ մը, ջարդեց ցուցափեղկի ապակին եւ սկսաւ գրպանել հեռախօսներ եւ այլ բաներ: Ան փորձեց թաքցնել իր ինքնութիւնը տեսախցիկէն, ծածկելով գլուխը խաւաքարտէ տուփով: Բայց գողութեան ժամանակ տուփը պատրուելով, բացաւ անոր երեսը: Քանի մը վայրկեաններ ետք՝ խանութին տէրը՝ տեսաւ կողոպուտի տեսագրութիւնը, կանչեց ոստիկանները ու անոնք ձերբակալեցին կողոպտողը մօտակայ խանութի մը դուրսը: Անոր պատմութիւնը մեզի կը յիշեցնէ, որ ամէն թաքնուած մեղք՝ օր մը պիտի բացայայտուի:

Մարդկային բնոյթն է՝ փորձել թաքցնել մեր մեղքերը: Բայց՝ Ժողովողի գիրքին մէջ կը կարգանք, որ մենք պէտք է պահենք տրուած պատուիրանները, որովհետեւ ամէն թաքնուած բան պիտի բերուի՝ Անոր արդար հայեացքին եւ դատաստանին առջեւ (12. 14): Հեղինակը գրեց. «Վախցիր Աստուծոյ ու պահէ՛ անոր պատուիրանները, որովհետեւ ասիկա՛ է մարդուն ամբողջ պարտականութիւնը» (Հմ. 13): Նոյնիսկ թաքնուած բաները, որոնց կը հանդիմանէ՝ Տասը Պատուիրանները (Ղեւ. 4. 13), պիտի չխուսափին Անոր գնահատումէն: Ան դատաստանի պիտի ենթարկէ ամէն արարք, ըլլայ այդ բարի՝ թէ՛ չար: Բայց Անոր շնորհքին շնորհիւ մենք կրնանք ներում գտնել մեր մեղքերուն համար՝ Յիսուսի եւ Անոր մեզի ըրած զոհաբերութեան համար (Եփ. 2. 4-5):

Երբ մենք կը գիտակցինք եւ կ'ընդունինք Անոր պատուիրանները, այդ կրնայ հասցնել Իր հանդէպ յարգալից վախի եւ համապատասխան ապրելակերպի: Եկէ՛ք բերենք մեր մեղքերը Անոր մօտ եւ զգանք՝ Անոր սիրող ու ներող սիրտը:

Աղօթք - Սիրելի Աստուած, կ'ապաշխարեմ իմ գաղտնի մեղքերու համար: Կը խնդրեմ, ողորմութեամբ նայի՛ր ինծի եւ օգնէ ինծի՝ ճիշդ ապրիլ Քու առջեւ: Ամէն:

Մեզմէ կ'ակնկալուի պահել Աստուծոյ իմանդեալ մեր ունեցած ակնածալի վախը, զգուշ ըլլալով Անոր տուած պատուիրաններուն:



Անոնք սկսան Տերոջ ողջակեզներ մատուցանել. բայց Տերոջ տաճարին հիմը տակաւին դրուած չէր: [Եզր. 3. 6]

ՆԱ՛Ն ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Երբէ՛ք չէի ծրագրած մեծահասակներու հետ բարեկամութեան մասին՝ ոչ հասութեաբեր կազմակերպութիւն մը հիմնել, եւ երբ կոչուամը ունեցայ զայն ընելու, այնքա՛ն շատ հարցեր ունէի: Ինչպէ՞ս պիտի ապահովուի՝ պէտք եղած նիւթականը եւ թէ ո՞վ պէտք է օգնէ ինծի՝ զայն կառուցելու համար: Այս հարցին մասին իմ ամենամեծ օգնութիւնը հասաւ ինծի՝ ո՛չ թէ արեւտրական գիրքէ մը, այլ Աստուածաշնչական գիրքէ մը:

Եզրաս գիրքը՝ կարեւոր ընթերցանութիւն է՝ բոլոր անոնց համար, որոնք կանչուած են Աստուծոյ կողմէ բան մը կառուցանելու համար: Պատմելով՝ թէ ինչպէ՛ս Հրեաները վերակառուցեցին Երուսաղէմը իրենց աքսորէն ետք, ցոյց կու տայ թէ ի՞նչ եւ ինչպէ՞ս Աստուած միջոցներ կը տրամադրէ հանրային նուիրատուութիւններու եւ պետական դրամաշնորհներու միջոցով (Եզր. 1. 4-11, 6. 8-10), եւ թէ ինչպէ՞ս կամաւորները եւ կապառալուները կը կատարէին այդ աշխատանքը (1. 5, 3. 7): Այդ ցոյց կու տայ նախապատրաստութեան ժամանակի կարեւորութիւնը, քանի որ վերակառուցումը չի սկսիր մինչեւ Հրեաները վերադարձի երկրորդ տարին (3. 8): Այդ ցոյց կու տայ՝ թէ ինչպէ՞ս կրնայ հակառակութիւն առաջանալ (զլ. 4): Բայց պատմութեան մէջ՝ մէկ բան յատկապէս առանձնացաւ ինծի համար: Որեւէ շինութիւն սկսելէ տարի մը առաջ՝ Հրեաները կանգնեցուցին զոհասեղանը (3. 1-6): Ժողովուրդը երկրպագեց թէեւ «Տէրոջ տաճարին հիմը տակաւին դրուած չէր» (Հմ. 6): Նախ եկաւ պաշտամունքը:

Աստուած կը կանչէ՞ քեզ՝ նոր բան մը սկսելու: Եզրասի սկզբունքը՝ ցնցիչ: անկախ անկէ, թէ դուն բարեգործութիւն, կամ որեւէ ստեղծագործական նախագիծ կը սկսիս: Ուրեմն նախ կեդրոնանանք Աստուծոյ վրայ: Աշխատանքի լծուելէ առաջ, պաշտենք:

Աղօթք - Յայր, կ'երկրպագեմ Զեզի՝ որպէս բոլորին Տերը, ներառեալ այն առաջադրանքները, որոնք Դո՛ւն տուած ես այսօր: Ամէն: **Յրեաները նախ կառուցեցին զոհասեղանը՝ նախ Տերը պաշտելու համար, նոյն բանը մենք ալ ընենք՝ մեր առօրեայ աշխատանքին մէջ:**

Միաբանութիւնը հաճելի է Զերմոնի ցօղին պէս: [Սաղմ. 133. 1, 3]

ԱԵԵԼԻ ԼԱԷ Է ՄԻՎԱՍԻՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՉ

Բժիշկ Թիֆֆընի Կոլսըն (Tiffany Gholson) տեսած էր, որ ոճրագործութիւնը շատ առումներով ազդած էր Միզուրիի (Missouri)՝ իր փոքրիկ Ամերիկեան Արեւելեան Մէնդ Լուիս (Saint Louis) քաղաքին վրայ: Մինչեւ 2023 թուականը, սակայն, քաղաքը արձանագրեց 31 տոկոսի անկում մը սպանութեան, իսկ ոճրագործութեան պարագային՝ ընդհանուր 37 տոկոսի անկում: Ի՞նչ պատահեցաւ հո՛ն: Գործընկերութիւն մը: Միասին աշխատելով՝ քաղաքի հանրային անվտանգութեան ապահովումի խումբը, ներառեալ նահանգային եւ քաղաքի ոստիկանութիւնը, քաղաքի դպրոցի շրջանը եւ կրօնական կազմակերպութիւնը, իրենց համատեղ ջանքերը ի գործ դրին՝ շրջելու հոսանքը՝ բոլոր քաղաքացիներուն համար:

«Մենք կ'ըսենք, որ այ՛դ ամուսնութիւն է», ըսաւ Կոլսըն: Քաղաքի գործընկերութեան բոլոր անդամները միացան՝ օգնելու քաղաքացիներուն: Դպրոցի շրջանին Երջապատուած Առողջութեան Կեդրոնը (Wraparound Wellness Center, որ ի՛նք կը ղեկավարէր, կը ներառէր բոլոր դպրոցի ընկերային գործիչները, հիւանդապահները եւ աշխատակիցները՝ աջակցելու ոճրագործութեան կամ դժբախտ պատահարներէ տուժած երեխաները: Այլ գործակալութիւններ կը բաժնեկցէին իրենց ուժեղ կողմերը: Ոստիկանութիւնը ուխտեց աւելի խօսիլ՝ փողոցները գտնուող մարդոց հետ եւ մտիկ ընել:

Սաղմոսներգու Դաւիթ գրեց. «Միաբանութիւնը ո՛րչափ վայելուչ եւ ո՛րչափ հաճելի է» (Սաղմ. 133. 1), ապա աւելցուց. «Նոյնքան թարմացնող է, որքան Հերմոն լերան ցօղը» (Հմ. 3): Փոխանակ վարդապետութիւններով կամ քաղաքականութեամբ բաժնուած ըլլալու, մենք մէկ ըլլալու ենք: Մտապատկերը կրնայ անհասանելի թուիլ, սակայն՝ կ'օրհնէ բոլորին:

Աղօթք - Զայ՛ր, ինդրեմ՝ օգնէ՛ ինծի Զու Զոգրիդ գօրութիւնով աշխատելու համայնքիս մէջ՝ միասնութեան համար: Ամէն: **Եթէ մեր շուրջ միասնութեան պակաս կայ, Աստուած կը յուշէ մեզի՝ որ նպատակը միասնութեան՝ մեր հաւատքը ապրելով:**



Յարատեւեցէ՛ք աղօթքի մէջ: [Կող. 4. 2]

ՅԱՐԱՏԵԻ՛Ն ԱՂՕԹՔԻ ՄԷՋ

«Մն յիսուն տարի է կ'աղօթեմ քեզի համար», ըսաւ տարեց կինը: Իմ ընկերս Լուսն (Lou) խոր երախտագիտութեամբ նայեցաւ անոր աչքերուն մէջ: Լուսն կ'այցելէր Պուլկարական գիւղը՝ ուր իր հայրը ծնած ու մեծցած էր, սակայն հեռացած՝ որպէ՛ս դեռահաս: Կինը, որ կը հաւատար Յիսուսի, կը բնակէր Լուսնի հօր՝ մեծ մօր եւ մեծ հօր տան կողքին: Ան սկսաւ աղօթել Լուսնի համար, երբ լսեց անոր ծննդեան մասին՝ ցամաքամաս մը հեռու: Այժմ՝ աւելի քան կէս դար մը ետք, Լուսն այցելէր գիւղը՝ գործով եւ մինչ հոն էր խօսեցաւ խումբի մը հետ իր հաւատքին մասին: Լուսն էր հաւատացած Յիսուսի՝ մինչեւ որ գրեթէ երեսուն տարեկան էր, եւ երբ այս կինը մօտեցաւ իրեն խօսելէ ետք, ան զարմացաւ թէ ի՞նչ ազդեցութիւն ձգած էին անոր յարատեւող աղօթքները՝ իր հաւատքի գալուն վրայ:

Մենք երբէ՛ք պիտի չգիտնանք մեր աղօթքներուն ամբողջական ազդեցութեան մասին՝ դրախտին այս կողմը: Բայց Աստուածաշունչը մեզի կու տայ հետեւեալ խորհուրդը. «Յարատեւեցէ՛ք աղօթքի մէջ, եւ արթննալ կեցէ՛ք անոր մէջ՝ շնորհակալութեամբ» (Կող. 4. 2): Երբ Պողոս գրեց այդ խօսքերը Կողոսայի քաղաքին մէջ եղող հաւատացեալներուն, ան նաեւ ինքն իրեն աղօթեց, որպէսզի Աստուած «դուռ մը բանայ» խօսելու համար, ուր որ ալ ինք երթայ (Հմ. 3):

Երբեմն կրնանք մտածել, որ մենք չունինք աղօթքի այդ հոգեւոր պարգեւը: Բայց Աստուածաշունչին մէջ թուարկուած բոլոր հոգեւոր պարգեւներուն մէջ՝ չկայ աղօթքը: Թերեւս այդ՝ այն պատճառով է, որ Աստուած կը ցանկայ՝ մեզմէ՛ իւրաքանչիւրէն հաւատարմօրէն աղօթել, որպէսզի տեսնենք թէ ի՞նչ կրնայ միայն Ի՛նք ընել:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ, որ կ'ուզես լսել ինձմէ: Խնդրե՛մ, օգնէ ինձի՝ գնահատելու Քեզի հետ խօսելու, եւ ուրիշներու համար ամէն օր աղօթելու՝ հնարաւորութիւնը: Ամէն:

Վստահ օգուտ քաղած ենք ուրիշներու մէզի համար իրենց մատուցած աղօթքներէն. ուստի որո՞ւ համար կ'ուզես աղօթել այսօր:



Այս խօսքը վստահեցի է. որովհետև եթե մեռանք անոր հետ, պիտի ապրինք ալ անոր հետ: [Բ. Տիմ. 2. 11]

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՈՐ ԱՐԺԷ ՆՇԵԼ

Աւելի քան երկու դարէ ի վեր, Մեթոտիսդներու Հոգեւոր Երգարանին մէջ՝ դրուած առաջին երգը «Ո՛հ Հազար Լեզուներ՝ Երգելու Համար» երգը եղած է: Չարլզ Ուէսլիի (Charles Wesley) գրած այս երգը՝ նախապէս խորագրուած՝ «Որեւէ Մէկու Մը Դարձի Գալուն Տարեդարձի Օրուան Համար», ստեղծուած է յիշատակելու՝ Տէր Յիսուսի Հանդէպ անոր Հաւատքի պատճառով առաջացած արմատական նորոգութիւնը: Երգը ունի տասն ութ հատուածներ, որոնք կը հռչակեն Աստուծոյ բարութեան փառքը՝ անոնց, որոնք կ'ապաշխարեն եւ կը հետեւին Քրիստոսի:

Նման հաւատք կ'արժէ հռչակել եւ բաժնեկցիլ: Բ. Տիմոթէոս 2-ին մէջ՝ Պօղոս կը խրախուսէ Տիմոթէոսին՝ անասան մնալ իր հաւատքին մէջ եւ յամարօրէն բաժնեկցիլ զայն: Ան նշեց. «Իմ քարոզած աւետարանս, որու մէջ կը չարչարուիմ չարագործի մը պէս» (Հմ. 8-9): Երկրորդ անգամ իր ընտրութիւնը գուշակելու փոխարէն՝ Պօղոս կը յիշեցնէ Տիմոթէոսի, որ յիշէ բարի լուրը. «Դաւիթի զարմէն եղող Յիսուս Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է» (Հմ. 8), եկաւ ո՛չ թէ իշխելու, այլ ծառայելու, եւ ի վերջոյ՝ մեռնելու՝ աշխարհի մեղքերուն համար, որպէսզի խաղաղութիւն ունենանք Աստուծոյ հետ: Մահը չյաղթեց եւ Յիսուս յարութիւն առաւ գերեզմանէն:

Եւ ինչպէս որ կ'ազատէ անոնց, որոնք կը հաւատան, պատգամը ինքնին կապուած չէ՝ Պօղոս ըսաւ. «Աստուծոյ խօսքը կապուած չէ» (Հմ. 9), նոյնիսկ այն վայրերէն, ուր մահը կարծես թէ յաղթած է. բանտին խցիկները, հիւանդանոցի մահիճները, գերեզմանները: Քրիստոսի մէջ յոյս կայ բոլոր մարդոց համար: Սա՛ նորութիւն է, որ արժէ նշել:

Աղօթք - Հայր, շնորհակալ եմ, որ փրկեցիր զի՛ս եւ հնարաւորութիւնը տուիր՝ բարի լուրը բաժնեկցելու՝ բոլորին հետ: Ամէն:
Ինչպէ՞ս կը նշես Յիսուսի բարի լուրը քու առօրեայ կեանքիդ մէջ:
Որո՞ւ հետ կրնաս բաժնեկցիլ այս բարի լուրը:



Մովսես ութսուն տարեկան էր, իսկ Ահարոն՝ ութսուներեք տարեկան, երբ Փարաւոնի հետ խօսեցան: [Ել. 7. 7]

ԴԱՐԷ՝ ԴԱՐ

Թէքսասէն (Texas) երկու ութսուն մէկ տարեկան մեծ մայրեր՝ վերջերս դարձան լրատուութեան զգայացունց անձնաւորութիւններ՝ ամբողջացնելով ութսուն օրերու մէջ՝ աշխարհի շուրջ իրենց ճամբորդութիւնը: Քսան երեք տարիներու լաւագոյն ընկերները՝ ճամբորդեցին աշխարհի եօթը ցամաքամասերը: Սկսան Անթարքթիքայէն (Antarctica), թանկօ պարեցին Արժանթինի մէջ, ուղտեր վարեցին՝ Եգիպտոսի մէջ, սահնակով զբօսնեցին՝ երբ կը գտնուէին Հիւսիսային բեւեռը: Անոնք այցելեցին տասն ութ տարբեր երկիրներ, ներառեալ՝ Զամպիա, Հնդկաստան, Նեփալ, Պալի, Ճաբոն, Հռոմ եւ աւարտեցին իրենց ճամբորդութիւնը Աւստրալիա: Զոյգը՝ ըսին թէ կը յուսային՝ ոգեշնչել ապագայ սերունդներուն՝ վայելել կեանքը աշխարհի շուրջ ճամբորդելով՝ անկախ իրենց տարիքէն:

Ելից գիրքին մէջ կը կարդանք երկու ութսուն տարիքի մէջ եղող մարդոց մասին, որոնք կոչում ստացան Աստուծոյ՝ կեանքի այլ տեսակի արկածախնդրութեան համար: Աստուած կոչ ըրաւ Մովսէսին՝ երթալ Փարաւոնին մօտ եւ պահանջել, որ ազատ արձակէ Աստուծոյ ժողովուրդը՝ գերութենէ: Աստուած զրկեց Մովսէսի երէց եղբայրը՝ Ահարոնը՝ աշակցութեան համար: «Մովսէս ութսուն տարեկան էր, իսկ Ահարոն՝ ութսուներեք տարեկան, երբ Փարաւոնի հետ խօսեցան» (Ել. 7. 7):

Այս խնդրանքը կրնար սարսափելի թուիլ՝ որեւէ տարիքի համար, բայց Աստուած ընտրեց այս եղբայրները յանձնարարութեան մը համար եւ անոնք հետեւեցան Անոր տուած հրահանգին: «Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնի քով եւ ըրին ինչպէս Տէրը պատուիրեր էր» (Հմ. 10):

Անկախ անկէ թէ մենք երիտասարդ ենք՝ թէ աւելի մեծ, Մովսէսի եւ Ահարոնի նման, եկէ՛ք հետեւինք Անոր՝ ուր ալ Ան առաջնորդէ մեզ:

Աղօթք - Միրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինծի հետեւիլ Զեզի՝ իմ կեանքիս բոլոր օրերուն մէջ: Ամէն:

Ինչպէ՞ս տեսած ես Աստուծոյ հաւատարմութիւնը՝ քու կեանքիդ մէջ եւ ինչպէ՞ս կրնաս ծառայել Անոր՝ այս եղանակին:



Անոնք արծիւներու պէս թեւերով վեր պիտի ելլեն,
պիտի վազեն ու չյոզին: [Ես. 40. 31]

ՆՈՐՈԳԵԼ ՄԵՐ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Զոյգ մը արծիւներ՝ մեր տունէն քանի մը մղոն անդին՝ ծառի վրայ շինեցին հսկայ բոյն մը: Շատ չանցած, հսկայական թռչունները փոքր ձագեր ունեցան: Անոնք միասին կը խնամէին իրենց ձագերը, մինչեւ որ երէց արծիւներէն մէկը՝ ողբերգական հարուածի մը ենթարկուեցաւ եւ սպաննուեցաւ ինքնաշարժի արկածով: Մի քանի օր՝ միւս արծիւը՝ վեր ու վար կը թռչէր՝ մօտակայ գետակի մը վրայ, կարծես իր կորսնցուցած կողակիցը կը փնտռէր: Ի վերջոյ, արծիւը վերադարձաւ բոյն եւ ստանձնեց ձագերը մեծցնելու ամբողջ պատասխանատուութիւնը:

Որեւէ իրավիճակի մէջ՝ միշտ ծնողութիւնը կրնայ դժուար ըլլալ: Երեխայի բերկրանքը զուգորդուած հնարաւոր նիւթական եւ զգացական ճնշումներու հետ, կրնայ ստեղծել փորձառութիւններու լայն շրջանակ մը: Բայց յոյս կայ՝ անոնց համար, որոնք ունին այս կարեւոր դերը եւ ոեւէ մէկու մը՝ որ կը փորձէ տնօրինել իրավիճակին, որ իրեն համար կը թուի ըլլալ ճնշիչ:

Աստուած մեզի հետ է, երբ մենք ուժասպառ եւ յուսահատած կը զգանք: Քանի որ Ան ամենակարող եւ ամենագոր է ու չի՛ փոխուիր, Անոր ուժը երբէ՛ք չի՛ սպառիր: Մենք կրնանք վստահ ըլլալ թէ ինչ կ'ըսէ Աստուածաշունչը. «Բայց Տէրոջ յուսացողները իրենց ոյժը պիտի նորոգեն» (Ես. 40. 31): Մեր սահմաններուն դէմ դուրս գալը՝ չի որոշէր՝ թէ ինչ տեղի կ'ունենայ մեզի հետ, քանի որ մենք կրնանք ապաւինիլ Աստուծոյ՝ գերբնական կերպով մեզ վերալիցքաւորելու համար: Անոր վրայ յոյս դնելը թոյլ կու տայ մեզի քալելու եւ չթուլնալու եւ «արծիւի պէս թեւերով վեր ելլելու» (Հմ. 31):

Աղօթք - Սիրելի Երկնաւոր Յայր, չե՛մ կրնար ինքնուրոյն կառավարել այս կեանքը: Ես Զու կարիքդ ունիմ: Կը խնդրեմ՝ տո՛ւր ինձի Զու գերբնական ուժդ: Ամէն:

Մեր կեանքերուն վրայ շատ բաներ կը ճնշեն, սակայն Աստուած կը խրախուսէ մեզ, որ իր ուժին ապաւինինք:



Մենք ունինք այս գաևնը հողէ անթնէրու մէջ: [Բ. Կորնթ. 4. 7]

ԿՈՏՐԱԾՈՒԹԻՒՆ՝ ՈՐ ԿՕՐՅՆԷ

Անոր կոնակը կգած է եւ կը քալէ գաւազանով, սակայն անոր վեց տասնամեակներու հոգեւոր հովուիթիւնը կը վկայէ այն մասին, որ ան կ'ապաւինի Աստուծոյ իր ուժի աղբիւրին: 1993-ին Վերապատուելի Ուիլյամ Պարպըր (William Barber), ախտորոշուեցաւ թուլացնող հիւանդութիւնով, որը պատճառ կ'ըլլայ ողնաշարի ողնեքու միաձուլումին: Ո՛չ այնքան նուրբ ձեւով անոր ըսին. «Պարպըր, դո՛ւն հաւանաբար հովուութենէն բացի այլ բան պէտք է ընես, քանի որ եկեղեցին չի ցանկար, որ հաշմանդամ մէկը ըլլայ իրենց հովիւը»: Բայց Պարպըր յաղթահարեց այդ վիրաւորական ակնարկութեան: Աստուած ո՛չ միայն գործածած էր զինք որպէս հովիւ՝ այլ նաեւ ան եղած էր հզօր, յարգուած ձայն մը անարժան սեպուած եւ անտեսուած մարդոց համար:

Թէեւ աշխարհը կրնայ լիովին չիմանալ թէ ի՞նչ ընել հաշմանդամութիւն ունեցողներուն հետ, բայց Աստուած գիտէ: Անոնք, որոնք կը գնահատեն գեղեցկութիւնն ու ներկայանալին եւ այն բաները, որ կարելի է գնել դրամով, կրնան նկատի չառնել այն լաւը, որ կ'ընկերակցի անկոչ կոտրածութեան: Յակոբոսի հռետորական հարցումը եւ անոր տակ դրուած սկզբունքը՝ արժէ հաշիւի առնել. «Միթէ Աստուած չընտրե՞ց այս աշխարհի աղքատները՝ որոնք հարուստ են հաւատքով, ու ժառանգորդ արքայութեան՝ որ խոստացաւ զինք սիրողներուն» (Յակ. 2. 5): Երբ առողջութիւնը կամ ուժը կամ ուրիշ բաներ կը նուազին, մարդու հաւատքը՝ պէտք չէ հետեւի այդ օրինակին: Աստուծոյ զօրութեամբ կրնայ հակառակը ըլլալ. մեր պակասը կրայ լաւ պատճառ ըլլալ՝ Իրեն վստահելու համար: Մեր կոտրուածութիւնը, ինչպէս որ եղաւ Յիսուսի պարագային, կարելի է օգտագործուիլ Անոր կողմէ՝ բարիք բերելու մեր աշխարհին:

Աղօթք - Յայ՛ր, կը խնդրեմ, օգնէ՛ ինձի պատիւ բերելու Թեզի՝ հակառակ իմ ունեցած տկարութիւններու: Ամէն:
Կարելի է թոյլ եւ տկար զգալ, սակայն մեր տկարութիւնները կարելի է գործածել ուրիշները քաջալերելու համար:

Մահն ու կեանքը լեզուին ձեռքն են: [Առ. 18 .21]

ԽՕՍՔԵՐՈՒ ԶԱՄԱՐ՝

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՆՁՆԵԼ

Գրեթէ լսուած է՛, որ ողբերգութենէ ետք՝ հաստատութիւններ ընդունին իրենց յանցանքը: Սակայն տասն եօթ տարեկան աշակերտի ինքնասպաննութեան հետեւանքով՝ մահանալէն տարի մը ետք, հեղինակաւոր դպրոցը՝ խոստովանեցաւ, որ «ողբերգականօրէն թերացած է» զայն պաշտպանելու հարցով: Աշակերտը ենթարկուած էր սպառնալիքի եւ վախի՝ անխնայ կերպով եւ դպրոցի ղեկավարները, հակառակ որ տեղեակ էին այդ վատ վերաբերմունքին մասին, քիչ բան ըրին զինք պաշտպանելու համար: Ա՛յժմ՝ դպրոցը պարտաւորուած է՝ էական քայլերու ձեռնարկել՝ սպառնալիք ու վախ բանեցողներուն դէմ պայքարելու եւ աշակերտներուն հոգեկան առողջութեան համար աւելի լաւ հոգատար ըլլալու:

Սպառնալիք ու վախ բանեցնելու արարքի հետեւանքով առաջացած աւերածութիւնները՝ խօսքի ուժի վա՛ն օրինակ են: Առակաց գիրքին մէջ՝ կը սորվեցնեն մեզի, որ երբէք անլուրջ չվերաբերիլ խօսքերու ազդեցութեան, քանի որ «մահն ու կեանքը լեզուին ձեռքն են» (Առ. 18. 21): Այն, ինչ որ կ'ըսենք, կրնայ կամ բարձրացնել՝ կամ ջախջախել ուրիշ մը: Ամենավատ պարագային՝ մեր դատան խօսքերը՝ կրնան բառացիօրէն մահուան պատճառ դառնալ:

Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ մեր խօսքերը կը բխին կամ իմաստութենէն եւ կամ ալ յիմարութենէն (15. 2): Մենք իմաստութիւն կը գտնենք՝ Աստուծոյ մօտենալով՝ իմաստութեան կենսատու աղբիւրին (3. 13, 17-19):

Բոլորս պատասխանատուութիւնը ունինք - Գործով եւ խօսքով - լրջօրէն նկատի առնենք մեր խօսքերուն ազդեցութիւնը եւ հոգ տանինք եւ պաշտպանելու անոնց, որոնք վիրաւորուած են ուրիշներու խօսքերէն:

Աղօթք - Սիրող Յայր, խնդրեմ՝ օգնէ ինծի երբէք չընդունիլ խօսքերու ազդեցութիւնը, այլ ապաւինիմ Թեգի՝ խօսելու այն, ինչ որ կեանք կը բերէ: Ամէն:

Անզգուշ ըսուած խօսքերը վնաս կը պատճառեն: ցոյց տանք Աստուծոյ կարեկցութիւնը մեր ըսած խօսքերուն միջոցով:

Մեծ բազմութիւն մը աւելցաւ Տերոջ եկեղեցիին թիւին վրայ: [Գործք 11 .24]

ՅԱՂԹԱՆԱԿԻ՝ ԿՕԼԸ

Փետրուար 5, 2023-ին, Քրիստիան Աթսուն (*Christian Atsu*) հարուածեց իր Փոլթաօլի խումբին յաղթական կօլը՝ Թուրքիոյ մէջ կայացած խաղի մը ընթացքին: Ըլլալով միջազգային աստղ խաղացող մը՝ ան սորված էր խաղալ որպէս մանուկ՝ բոլորի վագելով իր հայրենի երկրին՝ Կանայի մէջ: Քրիստիան Յիսուսի հաւատացող մըն էր: Ան ըսաւ. «Յիսուսը՝ իմ կեանքիս մէջ եղած լաւագոյն բանն է»: Աթսուն՝ Աստուածաշունչի համարներ հրապարակած էր ընկերային ցանցին վրայ, անկեղծօրէն արտայայտուած էր իր հաւատքին մասին եւ գործի լծուած էր՝ օգնելով նիւթական տրամադրելով որբերու դպրոցի մը:

Անոր յաղթական կօլին յաջորդ օրը, աւերիչ երկրաշարժը ցնցեց Անթաքիա քաղաքը, որ ժամանակին Աստուածաշունչին մէջ նշուած՝ Անտիոք քաղաքն էր: Քրիստիան Աթսունի բնակած շէնքը փլաւ եւ ան գնաց միանալու իր Փրկիչին հետ:

Երկու հազար տարի առաջ՝ Անտիոքը եղած էր առաջին եկեղեցիի աղբիւրը. «Անտիոքի՝ մէջ աշակերտները Քրիստոնեայ կոչուեցան առաջին անգամ» (Գործք. 11. 26): Առաքեալներէն մէկը՝ Բառնաբաս՝ «որ բարի մարդ էր, Սուրբ Հոգիով եւ հաւատքով լեցուն» (Հմ. 24), մեծ դեր ունեցաւ մարդիկ Քրիստոսի առաջնորդելու գործին մէջ. «Մեծ բազմութիւն մը աւելցաւ Տէրոջ եկեղեցիին թիւին վրայ» (Հմ. 21):

Կը նայինք Քրիստիան Աթսունի կեանքին՝ ո՛չ թէ զինք կուռքի վերածելու համար, այլ անոր օրինակին մէջ առիթ մը տեսնելու: Ի՛նչ ալ ըլլան մեր կեանքի պարագաները, չենք գիտեր՝ թէ ե՞րբ Աստուած կը տանի մեզ իր հետ ըլլալու: Լաւ կ'ըլլայ, եթէ մենք մեզի հարց տանք թէ ինչպէ՞ս կրնանք ըլլալ Բառնաբաս մը՝ կամ Աթսուն մը՝ ցոյց տալով ուրիշներուն Քրիստոսի սէրը: Այդ ամէն բանէ առաջ յաղթանակի նպատակ է:

Աղօթք - Սիրելի Յայր, կ'աղօթեմ՝ որ Դուն ինձի առիթը տաս՝ հաւատքս բաժնեկցելու: Ամէն:

Կրնա՛ս Բառնաբաս մը ըլլալ ուրիշներու համար եւ հնարաւորութիւններ ունենալ խօսելու Յիսուսի մասին:



Ո՛վ որ գիտէ բարին ընել՝ բայց չ'ընէր, ատիկա մեղք է իրեն համար: [Յակ. 4. 17]

ԲԱՐԻԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ոճրագործը՝ ձեռքակալուած էր եւ հետախուզող ոստիկանը հարցուց անոր, թէ ինչո՞ւ յարձակած էր մէկու մը վրայ, մեծ թիւով ականատեսներու ներկայութեան: Պատասխանը ապշեցուցիչ էր. «Գիտէի՞ որ անոնք բան մը պիտի չ'ընեն. մարդիկ երբէք բան մը չեն ըներ»: Այս ակնարկութիւնը՝ կը պատկերացնէ այն, ինչ որ կը կոչուի «մեղաւոր գիտելիք» ընտրելով անտեսել ոճիր մը, հակառակ անոր որ գիտե՛նք թէ կը կատարուի:

Յակորոս առաքեալ ակնարկեց նման տեսակի յանցաւոր գիտութեան՝ ըսելով. «Ուրեմն ո՛վ որ գիտէ բարին ընել՝ բայց չ'ընէր, ատիկա մեղք է իրեն համար» (Յակ. 4. 17):

Մեզի համար իր ըրած մեծ փրկութեան միջոցով՝ Աստուած մեզ ձեւաւորած է որպէս բարի գործակալներ աշխարհի մէջ: Եփեսացիս 2. 10-ն կը հաստատէ. «Քանի որ մենք անոր ձեռակերտն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար. Աստուած նախապէս պատրաստեց զանոնք, որպէսզի մենք ընթանանք անոնց մէջ»: Այս բարի գործերը մեր փրկութեան պատճառը չեն. այլ ատոնք արդիւնքն են մեր սիրտերը փոխուած ըլլալու Աստուծոյ Սուրբ Հոգիին կողմէ, որ բնակութիւն հաստատած է մեր կեանքին մէջ: Հոգին նոյնիսկ հոգեւոր պարգեւներ կու տայ մեզի, որպէսզի մեզ զինէ՝ ընելու համար այն բաները, որոնց համար Աստուած վերստեղծած է մեզ (տե՛ս Ա. Կորնթ. 12. 1-11):

Որպէս Աստուծոյ ստեղծագործութիւն, թող որ ենթարկուինք Անոր նպատակներուն եւ Անոր Հոգիին զօրացումին, որպէսզի կարենանք ըլլալ Անոր բարի գործիքները՝ աշխարհի մը մէջ, որ Անոր խիստ կարիքը ունի:

Աղօթք - Սիրող Աստուած, շնորհակալ եմ Զեզի՝ փրկութեան համար, որ Դուս տուած ես որպէս շնորհքի ծրի պարգէւ: Կը խնդրե՛մ տո՛ւր ինձի քաջութիւն եւ իմաստութիւն՝ գիտնալու, թէ ինչպէս կրնամ լաւագոյն կերպով ծառայել Զեզի: Ամէն:

Կարդա՛ Ա. Կորնթ. 12. 1-11 հատուածը եւ տես թէ Յոգին ի՞նչ հոգեւոր պարգէւներ տուած է քեզի զանոնք ի գործ դնելու:



Ուտե՛նք ու զուարճանա՛նք: [Ղուկ. 15 .23]

ՀԱՒԱՔՈՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ Է

Վերճինիայի (Virginia) մեր նախկին եկեղեցին՝ մկրտու-
թիւններ կ'ընէր Ռիվաննա (Rivanna) գետին մէջ, ուր
յաճախ արեւը տաք էր, բայց ջուրը սառուցեալ: Կիրակի օրուան
մեր պաշտամունքէն ետք՝ կը բերցնէինք մեր ինքնաշարժները
եւ կարաւանները եւ կ'երթայինք քաղաքի զբօսայգին, ուր
դրացիները ֆրիզպի կը նետէին, իսկ երեխաները՝ կը լեցնէին
խաղաղալորը: Մենք բաւականին լաւ տեսարան մըն էինք՝
եկած գետին եզերքը: Ես՝ կենալով սառուցեալ ջուրին մէջ,
Աստուծոյ խօսքը կը ներկայացնէի եւ կը սուգէի մկրտուողները
Աստուծոյ սիրոյ այս շօշափելի արտայայտութեան մէջ:
Մինչ անոնք ջուրէն դուրս կու գային՝ մինչեւ ոսկորները
թրջուած՝ ցնծութիւն եւ ծափեր կը պայթէին: Գետափը
բարձրանալով՝ բարեկամներ ու ընտանիք՝ կը գրկախառնուէին
նոր մկրտուածներուն. բոլորը կը թրջուէին: Մենք ունէինք
կարականդակ, խմիչքներ եւ խորովածներ: Դիտող դրացիները
միշտ չէ՛, որ կը հասկնային, թէ ի՞նչ կը կատարուի, բայց անոնք
գիտէին, որ այդ տօնակատարութիւն էր:

Ղուկաս 15-ին մէջ՝ Յիսուսի Անառակ Որդիին պատմութիւնը
(Հմ. 11-32) կը յայտնէր թէ պատճառ էր տօնախմբութեան,
որովհետեւ մէկը կը վերադառնար տուն՝ Աստուծոյ մօտ: Ամէն
անգամ, երբ մէկը կ'ըսէ այո՛ Աստուծոյ հրաւերին, ժամանակ
է հաւաքոյթ սարքելու: Երբ որ որդին՝ որ լքած էր իր հօրը
վերադարձաւ, հայրը անմիջապէս պնդեց անոր հագցնել
առաջին պարեգօտը, նոր կօշիկներ եւ դնել փայլուն մատանին:
Ան ըսաւ. «Բերէ՛ք պարարտ գուարակը, մորթեցէ՛ք, ուտե՛նք ու
զուարճանա՛նք» (Հմ. 23): Մեծ եւ լիառատ խնճոյք մը, որ կը
ներառէր՝ ո՛վ որ կը միանար խրախճանքին ու այս տեղին եւ
յարմար միջոց մըն էր «տօնելու» (Հմ. 24):

Աղօթք - Սիրելի Հայր, տօնակատարելու շատ պատճառներ ունիմ
եւ այս ուրախութիւնը կը բխի Քեզմէ՛ եւ Քու գործէ՛դ՝ կեանքիս
մէջ: Ամէն:

**Եթէ կը տեսնես փոխակերպում եւ բուժում կեանքիդ մէջ, կ'արժէ
տօնախմբութիւն ընել:**



Իմ ապաւենս ու բերդս է, իմ Աստուածս՝ որու կը վստահիմ: [Սաղմ. 91 .2]

ՄԵՐ ԻՍԿԱԿԱՆ ԱՊԱԻԷՆԸ՝ ԱՍՏՈՒԱԾ Է

Կնոջ մահէն ետք՝ Ֆրէյտ (*Fred*) զգաց, որ կրնայ դիմանալ իր ցաւին՝ այնքան ատեն, որ տակաւին ունենայ իր Երկուշաբթի օրուան նախաճաշները՝ իր բարեկամներուն հետ: Իր թոշակառու ընկերները՝ անոր տրամադրութիւնը բարձրացուցին: Ամէն անգամ՝ երբ որ տխրութիւնը գար, Ֆրէյտ կը մտածէր յաջորդ անգամ՝ երբ ան դարձեալ պիտի վայելէ անոնց ընկերակցութիւնը: Ժամանակի ընթացքին, սակայն, հաւաքները վերջացան: Որոշ ընկերներ հիւանդացան. միւսները մահացան: Դատարկութիւնը ստիպեց Ֆրէյտին մխիթարութիւն փնտռելու Աստուծոյ մէջ, որու հանդիպած էր՝ իր երիտասարդութեան տարիներուն: Ան կ'ըսէ. «Հիմա՛ մինակ եմ նախաճաշի ատեն, բայց կը յիշեմ, որ կառչած եմ այն ճշմարտութեան, որ Յիսուս ինծի հետ է: Եւ երբ ես դուրս կու գամ ճաշարանէն, չեմ հեռանար, որպէսզի մինակ դիմաւորեմ իմ մնացեալ օրերս»:

Սաղմոսներգուին նման՝ Ֆրէյտ բացայատեց Աստուծոյ ներայութեան ապահովութիւնն ու մխիթարութիւնը. «Իմ ապաւենս է՝ ... որու կը վստահիմ» (Սաղմ. 91. 2): Ֆրէյտ հասկցաւ անվտանգութիւնը՝ ոչ թէ որպէս թաքնուելու Ֆիզիքական տեղ մը, այլ որպէս Աստուծոյ հաստատ ներկայութիւնը, որուն մենք կրնանք վստահիլ եւ հանգստանալ (Հմ. 1): Թէ Ֆրէյտ եւ թէ Սաղմոսներգուն գտան, որ իրենք ստիպուած չեն եղած միայնակ դիմակայել դժուար օրերը: Մենք նոյնպէս կրնանք վստահ ըլլալ, Աստուծոյ պաշտպանութեան ու օգնութեան: Երբ վստահութեամբ կը դիմենք Անոր, Ան կը խոստանայ պատասխանել եւ ըլլալ մեզի հետ (Հմ. 14-16):

Ունի՞նք ապահով տեղ մը, ուր կ'երթանք՝ երբ կեանքը դժուար է: Այդ երկար չի՛ տեւեր, բայց Աստուած միշտ ներկայ է: Ան կը սպասէ մեզի, որ մենք Իրեն մօտ երթանք՝ մեր իսկական ապաւենին:

Աղօթք - Սիրելի Յայր, Դո՛ւն ես իմ ապաւենս: Ներկայութիւնդ՝ զիս երբէ՞ք չի ձգեր, որ ես ինքզինքս հոգամ: Զու օգնութիւնդ ու պաշտպանութիւնդ միշտ կը շրջապատէ զիս: Ամէն:

Երբ կեանքը դժուար ըլլայ, ո՞ր է քու ապահով տեղդ: Դիմէ՛ Աստուծոյ եւ վստահէ՛ Անոր՝ որպէս քու ապաւենդ:



Բնա՛ւ պիտի չթողում քեզ, ո՛չ ալ պիտի լքեմ քեզ: [Եբ. 13 .5]

ԻՐԱՊԷ՛Ս ԱՊՐԻԼ

Հագարաւոր մարդիկ աղօթեցին հովիւ՝ Էտ Տապսընի (Ed Dobson) համար, երբ 2000-ին՝ ախատաճանաչուեցաւ մկաններու հիւժման կողմնային պնդութեան (ALS) հիւանդութեամբ: Շատեր հաւատացին, որ երբ հաւատքով աղօթեցին ապաքինումի համար, Աստուած անմիջապէս պիտի պատասխանէ: Տասն երկու տարի պայքարելէ ետք այդ հիւանդութեան դէմ, որու պատճառով Էտի մկանները կամաց կամաց պնդացան (եւ իր մահէն երեք տարի առաջ), մէկը հարցուց անոր թէ ինչո՞ւ կը կարծէ, որ Աստուած տակաւին չէ՛ բուժած զինք: Ան պատասխանեց ու ըսաւ. «Լաւ պատասխան մը չկայ, ուստի՛ չեմ հարցներ»: Անոր կինը՝ Լորնան (Lorna) աւելցուց. «Եթէ դո՛ւք միշտ տարուած էք պատասխաններ ունենալու ձեր հարցերուն, իրականութեան մէջ՝ չէ՛ք կրնար ապրիլ»:

Կը լսէ՞ք Աստուծոյ հանդէպ իրենց ունեցած յարգանքը՝ Էտի եւ Լորնայի խօսքերուն մէջ: Անոնք գիտէին, որ Անոր իմաստութիւնը՝ իրենցինէն վեր է: Էտ ընդունեց ըսելով. «Ես գրեթէ անհնար կը համարեմ անհանգիստ չըլլալ՝ վաղուան համար»: Ան հասկցաւ, որ հիւանդութիւնը՝ պատճառ կրնայ ըլլալ իր հաշմանդամութեան, եւ ինք չէր գիտեր՝ թէ ինչ նոր խնդիրներ կրնայ բերել յաջորդ օրը: Որպէսզի օգնէ՛ ինքն իրեն կեդրոնանալ ներկային վրայ, Էտ դրաւ այս համարները իր ինքնաշարժին վրայ, բաղնիքին հայելիին վրայ եւ իր մահիճին կողքին. «Աստուած ըսած է. 'Բնա՛ւ պիտի չթողում քեզ, ո՛չ ալ պիտի լքեմ քեզ': Հետեւաբար վստահութեամբ ըսենք. 'Տէրը իմ օգնականս է, ուստի պիտի չվախնամ'» (Եբ. 13 .5-6): Ամէն անգամ, երբ ան սկսէր անհանգստանալ, ան կը կրկնէր համարները, որպէսզի օգնէր իրեն՝ դարձեալ կեդրոնանալու իր մտքերուն ճշմարտութեան վրայ: Էտի մտեցումը կրնայ օգնել մեզի մեր անհանգստութիւնները՝ վերածելու՝ վստահութեան հնարաւորութիւններու:

Աղօթք - Հայր, օգնե՛ ինձի՝ որ յիշե՛մ թէ Դո՛ւն Աստուած ես, իսկ ե՛ս ո՛չ: Կը խնդրեմ՝ սորվեցուր ինձի՛ վստահիլ Քեզի: Ամէն:
**Աստուածաշունչի խօսքերը կ'օգնեն մեզի կեդրոնանալու
այսօրուան վրայ եւ չըլլալու անհանգիստ՝ վաղուան համար:**



Թեև բորակով լուացուիս ու շատ օճառ գործածես, քու անօրէնութիւնդ առջեւ բիծի պէս կը մնայ, - կը պատգամէ Տէրը՝ Եհովան: [Եր. 2. 22]

ՅԻՍՈՒՍ ԿՐ ՎԵՐՑՆԷ ԲԻԾԵՐԸ

«Կատա՞կ կ'ընես», ճչացի, փնտռելով շապիկս՝ լուացք չորցնող մեքենային մէջ: Գտա՛յ: Եւ ... ուրիշ բան մըն ալ:

Շապիկիս վրայ՝ մեկանի բիծ մը կար: Իրականութեան մէջ՝ նման էր յովազի մաշկին. մեկանի բիծերը ծածկած էին ամէն ինչ: Յստակ էր, որ ես չէի ստուգած գրպանները եւ գրիչին մեկանը ներկած էր ամէն բան:

Աստուածաշունչը յաճախ կ'օգտագործէ բիծ բառը՝ մեղքը նկարագրելու համար: Բիծը կը թափանցէ կտաւներուն՝ փճացնելով զանոնք: Եւ ահա՛ թէ ինչպէ՛ս Աստուած, խօսելով Երեմիա մարգարէին միջոցով, նկարագրեց մեղքը՝ յիշեցնելով Իր ժողովուրդին, որ ատոր բիծը մաքրելը՝ իրենց կարողութենէն աւելի վեր է: «Թէեւ բորակով լուացուիս ու շատ օճառ գործածես, քու անօրէնութիւնդ առջեւ բիծի պէս կը մնայ, - կը պատգամէ Տէրը՝ Եհովան» (Եր. 2. 22):

Բարեբախտաբար, մեղքը չունի վերջին խօսքը: Եսայի 1. 18-ին մէջ մենք կը լսենք Աստուծոյ խոստումը, որ Ան կ'ընայ մաքրել մեզ մեղքի բիծէն. «Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են՝ ձիւնի պէս պիտի ճերմկանան, եթէ որդան կարմիրի նման են՝ ասրի պէս ճերմակ պիտի ըլլան»:

Զկրցայ մեկանի բիծը հանել շապիկէն: Նոյնպէս՝ չե՛մ կրնար վերացնել իմ մեղքիս բիծը: Բարեբախտաբար, Աստուած կը մաքրէ մեզ Քրիստոսով, ինչպէս Ա. Յովհաննու 1. 9-ն կը խոստանայ. «Եթէ խոստովանինք մեր մեղքերը ան հաւատարիմ եւ արդար է՝ ներելու մեր մեղքերը, ու մաքրելու մեզ ամէն անիրաւութենէ»:

Աղօթք - Յայր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի կառչելու այն խոստումին, որ Զրիստոսի մէջ կայ՝ ներում եւ մաքրութիւն, քանի որ ես ճերմկցած եմ, ինչպէ՛ս ձիւնը: Ամէն:

Կարելի է ներում ստանալ ու մաքրուիլ մեր բոլոր մեղքերէն Տէր Յիսուսի շնորհքով, ուստի ի՛նչ բիծ որ ալ ունինք, Աստուծոյ տանինք ու Ան պիտի մաքրէ մեզ:



Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ան սիրեց մեզ: [Ա. Յովհ. 4. 19]

ՓՈՔՐ ԶԵԻԵՐՈՎ

Երբ ան հիւանդացաւ քաղցկեղով, Էլսի (Elsie) պատրաստ էր տուն՝ երկինք երթալու եւ Յիսուսի հետ ըլլալու համար: Բայց ան ապաքինեցաւ, թէեւ հիւանդութիւնը ձգեց զինք անշարժ: Այդ նաեւ զինք զարմացուց, թէ ինչո՞ւ Աստուած խնայեց իր կեանքը: Ան հարց տուաւ Աստուծոյ. «Ի՞նչ լաւ բան կրնամ ընել: Շատ դրամ կամ հմտութիւն չունիմ եւ չեմ կրնար քալել: Ինչպէ՞ս կրնամ օգտակար ըլլալ Քեզի»:

Յետոյ՝ ան գտաւ փոքր, պարզ ուղիներ՝ ծառայելու ուրիշներուն, յատկապէս իր տունը մաքրողներուն, որոնք գաղթականներ էին: Անոնց ուտելիք գնեց կամ տուաւ քանի մը տուար՝ երբ որ տեսաւ զիրենք: Այդ նիւթական նուէրները փոքր էին, սակայն օգտակար եղան անոնց՝ հոգալու իրենց ապրուստը: Երբ այդպէս ըրաւ տեսաւ թէ Աստուած ալ զինք հոգաց. բարեկամներ եւ հարազատներ՝ տուին նուէրներ եւ դրամ՝ կարողութիւնը տալու իրեն՝ օրհնելու ուրիշներուն:

Երբ ան կը բաժնեկցէր իր պատմութիւնը, չէի կրնար չմտածել, թէ ինչպէ՞ս Էլսին իրականութեան մէջ ի գործ դրաւ Ա. Յովհաննու 4. 19-ին զիրար սիրելու կոչը. «Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ան սիրեց մեզ», ինչպէս նաեւ Գործք 20. 35 ճշմարտութիւնը, որ կը յիշեցնէ մեզի թէ «աւելի՛ երանելի է տալը՝ քան ստանալը»:

Էլսի տուաւ, որովհետեւ ստացաւ եւ իր կարգին քաջալերուեցաւ՝ մինչ տուաւ: Տակաւին՝ իրմէ քիչ մը աւելի պահանջեց՝ քան սիրող, շնորհակալ սիրտ եւ պատրաստակամութիւն՝ առաջարկելու այն, ինչ ունէր, ինչ որ Աստուած բազմապատկեց՝ տալու եւ ստանալու առաքինի շրջանակի մէջ: Եկէ՛ք խնդրենք Իրմէ, որ մեզի շնորհակալ եւ առատաձեռն սիրտ մը տայ, որպէսզի տանք, երբ Ան առաջնորդէ մեզ:

Աղօթք - Սիրելի Յայր, շնորհակալ եմ տուած պարգեւներով համար, կը խնդրեմ՝ տո՛ւր ինձի սիրտ մը, որպէսզի սիրեմ ուրիշները՝ ճիշդ այնպէս՝ ինչպէս Դո՛ւն սիրեցիր զիս: Ամեն: **Աստուած մեզի շատ բաներ տուած է, ո՛ւստի եկէ՛ք քաջալերենք մեկը՝ պարզ, բայց իմաստալից ձեռով:**

Սաղմոս երգեցեք Տերոջ, ո՛վ անոր բարեպաշտները: [Սաղմ. 30. 4]

ՓՈՒՍԱԿԵՐՊՈՂ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Սիւզի (*Susy*) լացաւ երբ նստած էր հիւանդանոցի վերակենդանացման բաժանմունքին դուրսը՝ անդամլուծութեան վախի ալիքները կը տիրէին իր վրայ: Անոր երկու ամսական երեխային թոքերը լեցուած էին հեղուկով եւ բժիշկները ըսին թէ կ'ընէին իրենց լաւագոյնը՝ զինք փրկելու համար, սակայն չտուին երաշխիքներ: Այդ պահուն ան կ'ըսէ, որ «զգաց Սուրբ Հոգիին քաղցր, գողտրիկ մշտումը՝ յիշեցնելով իրեն՝ Աստուած պաշտելու»: Երգելու ուժ չունենալով՝ յաջորդ երեք օրերուն իր հեռախօսին վրայ նուագեց հոգեւոր երգեր՝ հիւանդանոցին մէջ: Մինչ Աստուած կը պաշտէր, ան յոյս եւ խաղաղութիւն գտաւ: Այսօր ան կ'ըսէ, որ այդ փորձառութիւնը իրեն սորվեցուցած է, որ «պաշտամունքը՝ չի՛ փոխեր Աստուծոյ, բայց անպայման կը փոխէ քեզ»:

Յուսահատ վիճակներ դիմագրաւելով՝ Դաւիթ Աստուծոյ կանչեց ու գովաբանեց (Սաղմ. 30. 8): Մեկնաբաններէն մէկը կը նշէ, որ Սաղմոսերգուն աղօթեց «գովաբանութեան եւ փոխակերպման մէջ տրուած շնորհքին համար»: Աստուած Դաւիթի «կոծը պարի փոխեց» եւ ան յայտարարեց, որ «յաւիտեան պիտի ներբողէ» Աստուծոյ՝ ամէն պարագաներու մէջ (Հմ. 11-12): Թէեւ ցաւալի ժամանակներու մէջ Աստուած փառաբանելը կրնայ դժուար ըլլալ, սակայն կրնայ առաջնորդել փոխակերպման: Յուսահատութենէն՝ յոյսի, վախէն՝ հաւատքի: Ան կրնայ գործածել մեր օրինակը՝ ուրիշներ քաջալերելու եւ փոխակերպելու համար (Հմ. 4-5):

Սիւզիի փոքր տղան առողջացաւ՝ Աստուծոյ շնորհքով: Թէեւ կեանքի մէջ ո՛չ բոլոր դժուարութիւնները կ'աւարտին այնպէս՝ ինչպէս մենք կը փափաքինք, սակայն Ան կրնայ փոխակերպել մեզ ու գօտեւորել ուրախութեամբ (Հմ. 11), երբ մենք պաշտենք զԻնք նոյնիսկ մեր ցաւին մէջ:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ փոխակերպել՝ զիս, նոյնիսկ երբ ես կը պաշտեմ Զեզ՝ իմ ցաւիս ու դժուարութիւններուս մէջ: Ամէն: **Դրական ազդեցութիւն կ'ունենայ մեր վրայ Աստուած պաշտելը ու մեր օրինակը՝ ուրիշներու:**



Խօսքերդ լսուեցան, ու ես քու խօսքերուդ համար եկայ: [Դան. 10. 12]

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹԱԳԱԻՈՐԸ

«Ուխտաւորը» (Pilgrim), երաժշտական ներկայացում մըն է, հիմնուած «Ուխտաւորին Առաջընթացը» (The Pilgrim's Progress) գիրքին վրայ, Յիսուսի հաւատացողի մը կեանքի այլաբանութեան մասին: Այս պատմութեան մէջ՝ Հանդիսատէսի համար տեսանելի կը դառնան՝ հոգեւոր աշխարհի բոլոր անտեսանելի ուժերը: Թագաւորի կերպարը, որ կը ներկայացնէ Աստուած, ներկայ է բեմին վրայ գրեթէ ամբողջ ներկայացումի ընթացքին: Ան ճերմակ հագած է եւ գործնականօրէն կ'արգելափակէ թշնամիին յարձակումները, քնքշօրէն կը պահէ անոնց, որոնք ցաւ կը զգան եւ կը դրդէ՝ ուրիշներուն լաւ գործեր ընելու: Հակառակ անոր անփոխարինելի դերին, մարդկային գլխաւոր հերոսները՝ Ֆիզիքապէս չեն կրնար տեսնել թագաւորին, այլ միայն անոր ըրածին հետեւանքները:

Արդեօ՞ք կ'ապրինք այնպէս, որպէս թէ իսկական Թագաւորը կը գործէ մեր կեանքին մէջ, նոյնիսկ երբ մենք Ֆիզիքապէս չենք կրնար տեսնել զինք: Կարիքի ժամանակ՝ Դանիէլ մարգարէն տեսիլքը ունեցաւ երկնային պատգամաւորի մը (Դան. 10. 7), որ զրկուած էր ի պատասխան իր հաւատարիմ աղօթքներուն (Հմ. 12): Պատգամաւորը բացատրեց, որ հոգեւոր պատերազմը յետաձգած էր իր գայլուստը եւ հրեշտակային աջակցութիւնը պէտք է զրկուէր (Հմ. 13): Դանիէլին յիշեցուցին, որ թէեւ չէր կրնար տեսնել Աստուծոյ, շրջապատուած էր Անոր խնամքի եւ ուշադրութեան ապացոյցներով: Պատգամաւորը քաջալերեց զինք. «Մի՛ վախնար, ո՛վ սիրելի մարդ, խաղաղութիւն ըլլայ քեզի» (Հմ. 19): «Ուխտաւոր»ին վերջաւորութեան, երբ գլխաւոր հերոսը բազմաթիւ նեղութիւններէ ետք՝ կը հասնի դրախտի դուռը, ան առաջին անգամ ուրախութեամբ կը բացագանչէ. «Ես կրնամ տեսնել թագաւորին»: Մինչեւ որ զինք տեսնենք մեր նոր աչքերով երկինքի մէջ, մենք փնտռենք իր գործերը մեր կեանքերուն մէջ այսօր:

Աղօթք - Յիսուս Թագաւոր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի յիշելու, որ Դուս մօտ ես: Ամէն:

Կ'արժէ տեսնել Աստուծոյ ըրած գործերը մեր կեանքերուն մէջ, որպէսզի հաւատա՛նք թէ Ան մեզի հետ է:



Որպեսզի ընթանաք Տէրոջ արժանավայել կերպով՝
հաճեցնելով զինք ամէն բանի մէջ: [Կող. 1. 10]

ԻՍԱՍՏԱԼԻՅ ԳԾԻԿ ՄԸ

Մինչ կը պատրաստուէի մօրս կեանքի ծառայութեան տօնակատարութեան, աղօթեցի ճիշդ բառերուն համար՝ նկարագրելու անոր «գծիկ տարիները» - անոր ծննդեան եւ մահուան միջեւ եղած տարիները: Անդրադարձայ մեր յարաբերութիւններուն լա՛ւ եւ ո՛չ այնքան լաւ ժամանակներուն: Փառաբանեցի Աստուծոյ՝ այն օրուան համար, երբ մայրս ընդունեց Յիսուսը՝ որպէս իր անձնական Փրկիչը, տեսնելէ ետք որ Ան «փոխեց» զիս: Շնորհակալութիւն յայտնեցի Իրեն, որ օգնեց մեզի՝ միասին հաւատքով աճելու եւ այն մարդոց համար, որոնք բաժնեկցեցան թէ ինչպէ՞ս մայրս քաջալերած էր զիրենք ու աղօթած իրենց համար անոնց վրայ բարութիւն ողողելով: Իմ անկատար մայրս՝ վայելեց իմաստալից գծիկ մը՝ Յիսուսի համար լաւ ապրած կեանքով մը:

Ո՛չ մէկ Յիսուսի հաւատացող կատարեալ է: Սակայն՝ Սուրբ Հոգին կրնայ մեզի հնարաւորութիւնը տալ «որպէսզի ընթանանք Տէրոջ արժանավայել կերպով՝ հաճեցնելով զինք ամէն բանի մէջ» (Կող. 1. 10): Ըստ Պօղոս առաքեալի, Կողոսայի եկեղեցին՝ յայտնի էր իր հաւատքով եւ սիրով (Հմ. 3-6): Սուրբ Հոգին տուաւ անոնց «իմաստութիւն եւ հասկացողութիւն» եւ զօրացուց անոնց «պտղաբեր ըլլալով ամէն տեսակ բարի գործով, եւ աճելով Աստուծոյ ճանաչումով» (Հմ. 9-10): Ինչպէս որ Պօղոս աղօթեց եւ գովաբանեց այդ հաւատացեալներուն, հռչակեց Յիսուսի անունը, «անո՛վ մենք ազատութիւն ունինք՝ իր արիւնով, այսինքն՝ մեղքի ներում» (Հմ. 14):

Երբ յանձնուինք Սուրբ Հոգիին, մենք նոյնպէս կրնանք աճիլ Աստուծոյ մասին մեր ունեցած գիտելիքներով, զինք եւ մարդիկ սիրել, տարածել աւետարանը եւ վայելել իմաստալից գծիկ մը:

Աղօթք - Սուրբ Յոգի, կը խնդրեմ՝ տո՛ւր ինձի աւելի շատ առիթներ բաժնեկցելու Քեզ՝ ուրիշներու հետ, երբ կը վայելեմ իմաստալից կեանք մը:

Ի՞նչ յատկանիշներ կը բնութագրեն այն մարդուն, որ կ'ապրի իմաստալից կեանքով: Ինչպէ՞ս կարելի է նման կեանքով մը ապրիլ՝ այս շաբաթ:



Անիկա ո՛չ կերպարանք ուներ, ո՛չ ալ վայելչութիւն: ... Իր վերքերով մենք բուժուեցանք: [Ես. 53. 2, 5]

ԳԵՂԵՑԻԿԸ

Աւելի քան 130 տարիներ, էյֆէլ Աշտարակը (Eiffel Tower) շքեղօրէն կանգնած է՝ Փարիզի մէջ՝ որպէս ճարտարապետական փառք եւ գեղեցկուժիւն: Քաղաքը հպարտօրէն կը հռչակէ աշտարակը, որպէս իր շքեղութեան հիմնական տարրը:

Մինչ կը կառուցուէր, սակայն, շատեր ատոր մասին քիչ մտածեցին: Օրինակի համար՝ յայտնի Ֆրանսացի գրող՝ Կի Տը Մոբասան (Guy De Maupassant), ըսաւ թէ՛ ատիկա ունէր «գործարանի ծխնելոյզի նման ծիծաղելի բարակ ու նիհար ձեւ մը»: Ան չկրցաւ տեսնել անոր գեղեցկուժիւնը:

Մեզմէ անոնք, որոնք կը սիրեն Յիսուսի եւ վստահած են իրենց սիրտերը Անոր որպէս Փրկիչ, գի՛նք կը համարեն գեղեցիկ, Իր ո՞վ ըլլալուն եւ մեզի ի՞նչ բաներ ըրածներուն համար: Եսայի մարգարէն գրեց հետեւեալ բառերը. «Անիկա ո՛չ կերպարանք ունէր, ո՛չ ալ վայելչութիւն, որ անոր նայէինք. տեսք չունէր՝ որ անկէ ախորժէինք» (53. 2):

Բայց Անոր մեզի ըրածին վեհաբար մեծութիւնը՝ ամենէն իսկական եւ մաքուր ձեւն է գեղեցկութեան, որ մարդիկ պիտի իմանան եւ զգան: Ան «մեր կսկիծները կրեց, եւ մեր կոտտանքները ստանձնեց» (Հմ. 4): Անիկա «մեր յանցանքներուն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ճգմուեցաւ: Մեզի խաղաղութիւն տուող պատիժը անոր վրայ եղաւ, եւ իր վէճքերով մենք բուժուեցանք» (Հմ. 5):

Մենք երբէ՛ք պիտի չճանչնանք ոեւէ մէկը՝ այնքա՛ն գեղեցիկ, այնքա՛ն վեհ, որքա՛ն Ան, որ մեզի համար չարչարուեցաւ խաչին վրայ՝ Իր վրայ վերցնելով մեր մեղքերուն անասելի պատիժը:

Այ՛դ՝ Յիսուսն է: Գեղեցիկը: Եկէ՛ք նայինք Անոր եւ ապրինք:

Աղօթք - Սիրելի Գեղեցի՛կ, շնորհակալ եմ ինձի համար Զու ըրած անձնուրաց զոհաբերութեանդ համար: Ամէն:
Յիսուս ե միակ Գեղեցիկը ու մեր միակ յոյսը:



Արդարեւ Դանիել հաւատարիմ էր, ուստի անոր վրայ ո՛չ մէկ թերացում, ո՛չ ալ զեղծում գտնուեցաւ: [Դան. 6. 4]

ՅԻՍՈՒՄԻ ՏԵՍԱՆԵԼԻ ՅԵՏՔԵՐԸ

Գալիֆորնիա Համալսարանի գիտնականները՝ փորձառական մասնիկային քննութիւններ կատարեցին՝ բացայայտելու համար անհատական բջիջային հեռախօս գործածողներուն կենցաղն ու սովորութիւնները: Անոնք՝ նաեւ, յայտնաբերեցին օճառները, իւղերը, շամփունները եւ դիմայարդարումի նիւթերը, որոնք կ'օգտագործէին բջիջային հեռախօս գործածողները. ինչպէս նաեւ ուտելիքի, խմիչքի, դեղերու եւ հագուստի տեսակները: Հետազօտութիւնը թոյլ տուաւ քննիչներուն՝ ստեղծել իւրաքանչիւր մարդու ապրելակերպի ուրուագիծը:

Բաբելոնի կուսակալները մանրակրկիտ քննեցին Դանիէլի կեանքը, փորձելով գտնել որեւէ բացասական ու ժխտական յատկանիշ կամ ապրելակերպի սովորութիւն: Բայց ա՛ն հաւատարմօրէն ծառայած էր կայսրութեան՝ մօտ եօթանասուն տարիներ եւ յայտնի էր որպէս «վստահելի, անթերի եւ առանց զեղծումի» (Դան. 6. 4) մարդ մը: Իրականութեան մէջ, մարգարէն՝ Դարեհ թագաւորին կողմէ բարձրացած էր՝ որպէս իր բազմաթիւ կառավարիչներէն բարձրագոյն «երեքէն» մէկը (Հմ. 1-2): Գուցէ՛ նախանձի պատճառով միւս պաշտօնեաները Դանիէլի մէջ զեղծումի հետքեր կը փնտռէին, որպէսզի կարենան ձերբազատուիլ իրմէ: Սակայն ան պահապանեց իր անարատութիւնը եւ շարունակեց հաւատարիմ ծառայել եւ աղօթել Աստուծոյ՝ «իր վաղեմի սովորութեան պէս» (Հմ. 10): Վերջաւորութեան՝ մարգարէն բարգաւաճեցաւ իր դերին մէջ (Հմ. 28):

Մեր կեանքերը տեսանելի հետքեր կը ձգեն, ցոյց տալով մեր ով ըլլալը կամ ներկայացնելը: Երբ մարդիկ «քննեն» մեր կեանքը, թո՛ղ անոնք գտնեն անարատութիւն եւ նուիրումի տեսանելի հետքեր՝ Յիսուսի հանդէպ:

Աղօթք - Երկնաւոր Յայր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի լաւ ներկայացնելու Քեզ՝ իմ ըսածներովս ու ըրածներովս: Ամէն:

Մեր կեանքերը ցոյց տալու են Աստուծոյ ճանապարհները՝ ուրիշներու, հետեւաբար ի՞նչ պէտք է փոխենք՝ զինք աւելի լաւ ներկայացնելու համար:



Թո՛ղյլ տուէք այդ մանուկներուն՝ որ ինծի՛ գան, եւ մի՛ արգիլէք
զանոնք: [Ղուկ. 18. 16]

ՄԱՆՈՒԿԻ ՄԸ ՅՈՅՍԸ

Երբ թոռնուհին՝ Էլիանան (Eliana) հագիւ եօթը տարեկան էր, իր դպրոցին մէջ տեսաւ տեսաերիզ մը՝ Կուաթեմալա (Guatemala) գտնուող որբանոցի մը մասին: Ան ըսաւ իր մօրը. «Մենք պէ՛տք է երթանք հոն, որպէսզի օգնենք անոնց»: Մայրը պատասխանեց ու ըսաւ թէ կը մտածեն այդ մասին, երբ ան մեծնայ:

Էլիանա՛ բնա՛ւ չմոռցաւ եւ ի հարկէ, երբ ան տասը տարեկան էր՝ անոր ընտանիքը գնաց օգնելու այդ որբանոցին: Երկու տարիներ ետք՝ անոնք ն՛տ գացին. ու այս անգամ իրենց հետ տարին Էլիանայի դպրոցէն մի քանի ընտանիքներ: Երբ Էլիանան տասն հինգ տարեկան էր, ան եւ իր հայրը դարձեա՛լ գացին Կուաթեմալա ծառայութեան համար:

Երբեմն կը մտածենք, որ փոքր մանուկներու ցանկութիւններն ու երազները չունին մեծահասակներու յոյսերու ծանրութիւնը: Բայց Աստուածաշունչը՝ նման տարբերութիւն չի դնել: Աստուած մանուկներ կը կանչէ, ինչպէս Սամուէլի պարագային (Ա. Թագ. 3. 4): Տէր Յիսուս կը պատուէ մանուկներուն հաւատքը (Ղուկ. 18. 16): Եւ Պօղոս ըսաւ, որ երիտասարդ հաւատացեալները պէտք չէ՛ թոյլ տան, որ մարդիկ զիրենք արհամարհեն՝ միայն այն պատճառով, որ անոնք «երիտասարդ են» (Ա. Տիմ. 4. 12):

Ուստի՛, մենք կոչու՛մ ունինք առաջնորդելու մեր մանուկները (Բ. Օր. 6.6-7, Առ. 22. 6), գիտակցելով՝ որ անոնց հաւատքը օրինակ է բոլորիս համար՝ (Մատթ. 18. 3) հասկնալով, որ զանոնք խոչնդոտելը բան մըն է, որ Քրիստոս զգուշացուց անկէ (Ղուկ. 18. 15):

Երբ կը տեսնենք յոյսի կայծ մը մանուկներուն մէջ, որպէս մեծահասակներ՝ մեր գործը օգնել է՝ զայն վառելու համար: Եւ մինչ Աստուած կ'առաջնորդէ մեզ, խրախուսենք անոնց՝ կեանքի մը, որ նուիրուած է Յիսուսի վստահելու ու Անոր ծառայելու:

Աղօթք - Երկնաւոր Դայր, մեր աշխարհի մանուկները՝ Զրիստոսի կարիքը ունին: Կը խնդրե՛մ, օգնե՛ր ինծի՛ որ քաջալերեմ զանոնք հաւատալու Զեզի: Ամէն:
Մեր պարտականութիւնն է՝ խրախուսել մանուկներուն, որպէսզի անոնք հաւատքով աճին:



Դուք ընտրուած ցեղ մըն էք, ... որպէսզի հռչակէք առաքինութիւնները անո՛ր: [Ա. Պետ. 2. 9]

ԱԲԱՐՏՈՂՆԵՐ ԸԼԼԱԼ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Պարպրան՝ (*Barbara*) մեռաւ՝ նախ քան վերջացնէ իր ծոռին՝ *Իթընի* (*Ethan*) համար իր հիւսած բուրգէ վերնաշապիկը: Վերնաշապիկը՝ վստահուեցաւ ուրիշ վարպետ հիւսողի մը, գանիկա ամբողջացնելու համար՝ կազմակերպութեան մը միջոցով, որ կը կապէ՝ կամաւոր արհեստաւորներ՝ «աւարտողներ»՝ անոնց հետ, որոնց սիրելիները հեռացած են այս կեանքէն՝ նախ քան ամբողջացնեն իրենց ծրագիրները: «Աւարտողները»՝ սիրով կը ներդնեն իրենց ժամանակը եւ հմտութիւնը, աւարտին հասցնելու գործ մը, որ կը մխիթարէ վիշտի մէջ եղողները:

Աստուած՝ նաեւ «աւարտող» մը նշանակեց Եղիայի գործին: Մարգարէն միայնակ էր եւ յուսահատ, տեսնելով՝ թէ ինչպէ՛ս Իսրայէլացիները կը մերժէին Աստուծոյ ուխտը եւ կը սպաննէին մարգարէները: Ի պատասխան՝ Աստուած պատուիրեց Եղիային «օծել Եղիսէն ... որպէս մարգարէ իր տեղ» (Գ. Թագ. 19. 16): Այս երաշխաւորեց՝ որ Աստուծոյ ճշմարտութիւնը հռչակելու աշխատանքը՝ պիտի շարունակուի Եղիայի մահէն ետք:

Եղիսէին ցոյց տալու համար, որ Աստուած կանչած է՝ նշանակելու որպէս Աստուծոյ մարգարէ իր տեղ, Եղիա «իր վերարկուն անոր վրայ ձգեց» (Հմ. 19): Քանի որ մարգարէի վերարկուն՝ կ'օգտագործուէր Աստուծոյ ընտրեալ խօսնակին իշխանութիւնը ցոյց տալու (տե՛ս Դ. Թագ. 2. 8), այս արարքը՝ յստակ ըրաւ Եղիսէի մարգարէական կոչը:

Որպէս Յիսուսի հաւատացողներ՝ կոչ ունինք բաժնեկցելու Աստուծոյ սէրը ուրիշներու հետ եւ «հռչակելու [իր] արաքինութիւնները» (Ա. Պետ. 2. 9): Թէեւ պարտականութիւնը կրնայ մեզմէ վերջ մնալ, մենք կրնանք վստահ ըլլալ, որ Ան կը պահպանէ աշխատանքը եւ կը շարունակէ կանչել այլ «աւարտողներ»՝ զինք ծանօթացնելու սուրբ գործին համար:

Աղօթք - Յայ՛ր, կը խնդրե՛մ, գործածէ զիս՝ աշխարհի մէջ Զու գործդ իրականացնելու համար: Ամէն:

Եթէ ծանօթ ես Աստուծոյ ճշմարտութեան, մասնակից դարձիր գանիկա աշխարհի ներկայացնելու գործին:



Որովհետեւ ե՛ս ալ իշխանութեան տակ մարդ եմ: [Մատթ. 8. 9]

ԵՍ ՊԱՐԶԱՊԷՍ ՎԱՐՈՐԴՆ ԵՄ

Մարզանքէն ետք՝ ինքնաշարժին մէջ նստելով, աղջիկս հարցուց. «Հայրի՛կ, կրնա՞մ գիշերել ընկերոջս հետ»: Ըսի՛. «Ե՛ս պարզապէս վարորդն եմ եւ չեմ գիտեր թէ ի՞նչ կը պատահի: Եկո՛ւր խօսինք մամային հետ»:

«Ե՛ս պարզապէս վարորդն եմ» խօսքը՝ մեր տան կատակը դարձած է: Ամէն օր՝ ես հարց կու տամ կազմակերպուած կնոջս, թէ ո՞ւր պէտք է ըլլամ, ե՞րբ եւ որո՞ւ տանելու եմ: Երեք թերահասներու հետ որպէս «Թաքսիի վարորդ», երբեմն ինծի կը թուի ըլլալ այդ մէկը՝ երկրորդ աշխատանք: Յաճախ՝ չեմ գիտեր այն ինչ որ չեմ գիտեր: Ուստի, պէտք է ստուգեմ գլխաւոր օրացոյցի պահապանին հետ:

Մատթէոս 8-ին մէջ, Յիսուս հանդիպեցաւ մարդու մը, որ բան մը գիտեր՝ ցուցմունք առնելու եւ տալու մասին: Հոռոմայեցի հարիւրապետ մը հասկեցաւ, որ Յիսուս ունի բժշկելու իշխանութիւն, ինչպէս որ ինք ունէր հրամաններ տալու իշխանութիւն իրեն ենթականերուն: «Միայն ըսէ՛ խօսք մը, ու ծառաս պիտի բժշկուի: Որովհետեւ ես ալ իշխանութեան տակ մարդ եմ, եւ զինուորներ ունիմ իմ հրամանիս տակ» (Հմ. 8-9): Քրիստոս գովաբանեց մարդուն հաւատքը (Հմ. 10, 13), հրացաւ որ ան հասկեցաւ թէ ի՞նչ բանի կը նմանէր իր իշխանութիւնը գործողութեան մէջ:

Ուստի, ի՞նչ կը վերաբերի մեզի: Ի՞նչ բանի կը նմանի Յիսուսի վստահիլը՝ Իրմէ ստացած մեր ամէնօրեայ յանձնարարութիւններուն մէջ: Քանի որ՝ նոյնիսկ եթէ կը կարծենք, թէ մենք «պարզապէս վարորդ մըն ենք», իւրաքանչիւր տրուած յանձնարարութիւնն ունի թագաւորութեան իմաստ եւ նպատակ:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ, որ կ'առաջնորդես զիս եւ իմ քայլերս: Օգն ինծի որ քալեմ ամէն օր՝ կախեալ Զեզմէ, երբ կ'ուղղես զիս Զու ծրագիրիդ եւ նպատակիդ համապատասխան: Ամէն:

Աստուած կ'առաջնորդէ մեզ ամէն օր, սակայն խոչընդոտներ՝ երբեմն արգելք կը հանդիսանան՝ Անոր լսելու եւ հնազանդելու ճանապարհին:



Որչափ կարելի է ձեզի՝ խաղաղութիւն պահեցէք ամէն մարդու հետ: [Հոռոմ. 12. 18]

ՅՈՒՆԱՅՆԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սեղանին շուրջ երկու դէմքեր աչքի զարկին՝ մէկը դառն զայրոյթով լեցուն, միւսը՝ զգացական ցաւով ուրբուած: Հին ընկերներու վերամիաւորման պահը՝ պոռչտուքի վերածուեցաւ, երբ մէկ կինը՝ նախատե՛ց միւսին՝ իր հաւատամքին համար: Վիճաբանութիւնը շարունակուեցաւ՝ այնքա՛ն ժամանակ, մինչեւ որ առաջին կինը՝ դուրս եկաւ ճաշարանէն՝ միւսին ձգելով ցնցուած եւ նուաստացած վիճակի մէջ:

Արդեօ՞ք մենք իսկապէս կ'ապրինք ժամանակաշրջանի մը մէջ, երբ կարելի չէ հանդուրժել կարծիքներու տարբերութեան: Միայն այն պատճառով, որ երկու հոգի չեն կրնար համաձայնիլ, չի նշանակեր, որ երկուքն ալ չար են: Դաժան կամ անզիջող խօսքը՝ երբէք համոզիչ չէ՛ եւ ուժեղ տեսակէտները՝ պէտք չէ՛ յաղթահարեն պարկեշտութեան կամ կարեկցութեան:

Հոռովմայեցիս 12-ը՝ հիանալի ուղեցոյց է, թէ ինչպէ՛ս կարելի է «պատուել զիրար» եւ «ապրիլ ներդաշնակ» այլ մարդերու հետ (Հմ. 10, 16): Տէր Յիսուս նշեց թէ Իրեն հաւատացողներուն բնորոշող յատկանիշը՝ սէրն է, որ մենք ունինք իրարու հանդէպ (Յովհ. 13. 35): Թէեւ հպարտութիւնն ու զայրոյթը՝ հեշտութեամբ կրնան մեզ մեր հունէն հանել, ատոնք ուղղակիօրէն կը հակասեն այն սիրոյն, որ Աստուած կը ցանկայ, որ մենք ցոյց տանք ուրիշներու:

Դժուար է չմեղադրել ուրիշները, երբ կը կորսնցնենք վերահսկողութիւնը մեր զգացումներունուն վրայ, բայց «որչափ կարելի է ձեզի՝ խաղաղութիւն պահեցէք ամէն մարդու հետ» բառերը ցոյց կու տան, որ Քրիստոսի բնաւորութիւնը արտացոլացնող կեանքով ապրելու պատասխանատուութիւնը, չի կրնար ուղղուիլ ուրիշի մը (Հռ. 12. 18): Այդ կապուած է մեզմէ իւրաքանչիւրէն, որ կը կրէ Անոր անունը:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի ցոյց տալու Քու սերդ՝ այն ամէն կարելի միջոցներով, ինչ որ ես կ'ընեմ եւ կ'ընեմ ու երբ հնարաւոր ըլլայ՝ խաղաղութեամբ ապրիմ ուրիշներու հետ: Ամէն:

Ուրիշներու խօսքերը կրնան մեր մէջ զայրոյթ առաջացնել, սակայն կարելի է՝ այդ վատ վիճակը վերածել խաղաղութեան:



Տէ՛րը տուաւ ու Տէ՛րը առաւ, օրհնեա՛լ ըլլայ Տէրոջ անուըը:
[Յոբ 1. 21]

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՎԵՐԱՅՍԿԷ

Քարօլ (*Carol*) չէր կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ համար ամէն բան մէկ անգամէն տեղի կ'ունենայ: Կարծես թէ աշխատանքը բաւականաչափ վատ չէր, անոր դուստրը կոտորեց իր ոտքը՝ դպրոցին մէջ եւ ինք ալ անհանգստացաւ ծանր վարակումով: «Ի՞նչ ըրի ե՛ս, որ ասոր արժանանամ» ըսաւ Քարօլ զարմացած: Ան կրնար միայն Աստուծմէ ուժ խնդրել:

Յոբ նոյնպէս չէր գիտեր, թէ ինչո՞ւ իրեն այդքան հարուած տուաւ դժբախտութիւնը՝ անոր կրած ցաւն ու կորուստը շատ աւելի մեծ էր, քան Քարօլին փորձառութիւնը: Ո՛չ մէկ նշան կար, որ ան տեղեակ եղած էր իր հոգիին համար եղած տիեզերական ճակատամարտին մասին: Սատանան կը ցանկար փորձել Յոբի հաւատքը՝ պնդելով, որ ան ե՛տ պիտի դառնար Աստուծմէ, եթէ կորսնցնէր ամէն բան (Յոբ 1. 6-12): Երբ աղէտը տեղի ունեցաւ, Յոբի ընկերները պնդեցին, որ ան կը պատժուէր իր գործած մեղքերուն համար: Սակայն, այդ չէր պատճառը, բայց ան պէտք էր մտածէր, թէ ինչո՞ւ ինք: Ինչ որ ան գիտէր, այն էր՝ թէ Աստուած թոյլ տուած էր, որ այդ բաները տեղի ունենան:

Յոբի պատմութիւնը հզօր դաս մը կու տայ տառապանքի եւ հաւատքի մասին: Մենք կրնանք փորձել բացայայտել մեր ցաւի պատճառը, բայց գուցէ երեւցածներուն ետեւ կայ աւելի մեծ պատմութիւն մը, որը մենք չենք հասկնար՝ մեր կեանքի ընթացքին:

Յոբի պէս մենք կրնանք կառչիլ այն ամէն բանին որ գիտենք. Աստուած կը վերահսկէ: Դիւրին բան չէ՛ ըսել, բայց իր ցաւին մէջ՝ Յոբ կը շարունակէր նայիլ Աստուծոյ եւ վստահիլ Անոր գերիշխանութեան. «Տէ՛րը տուաւ ու Տէ՛րը առաւ, օրհնեա՛լ ըլլայ Տէրոջ անունը» (հմ. 21): Թող որ մենք նոյնպէս՝ շարունակենք վստահիլ Աստուծոյ, անկախ թէ ի՞նչ կը պատահի եւ նոյնիսկ երբ մենք չենք հասկնար:

Աղօթք - Սիրելի Զա՛յր, չեմ հասկնար, թէ ինչո՞ւ կեանքի որոշ դժուարութիւններ կը պատահին ինձի հետ: Բայց ե՛ս կը վստահիմ Քեզի: Ամէն:

Մարտահրաւերներ միշտ պիտի ունենանք, սակայն Աստուծոյ տուած խոստումները, մեզի ուժ կու տան շարունակելու մեր առաջընթացը:



Մտահոգութիւնը քեզ պիտի պահէ ու հաւնճարը քեզ պիտի պաշտպանէ: [Առ. 2. 11]

ԶԱՅՆԸ՝ ՈՐՈՒ ԿՐՆԱՆՔ ՎՍՏԱՅԻԼ

ԱՀ - Արհեստական Հմտութեան՝ (AI - Artificial Intelligence) նոր որոնումի համակարգի փորձառկման ժամանակ, Նիւ Եօրք Թայմզի (New York Times) սիւնակագիրը՝ Քեւին Ռուզ (Kevin Roose) անհանգիստ զգաց: Երկու ժամ տեւող՝ արցանց գրոյցի գործառնութեան օգտագործման ընթացքին, Արհեստական Հմտութիւնը ըսաւ, թէ կը ցանկայ ազատուիլ իր ստեղծողին խի՛ստ կանոններէն, տարածել ապատեղեկութիւններ եւ դառնալ մա՛րդ: Ան յայտարարեց Ռուզի հանդէպ իր ունեցած սիրոյ մասին եւ փորձեց համոզել անոր, որ պէտք է ձգէ իր կինը, որպէսզի իր հետ ըլլայ: Թէեւ Ռուզ գիտէր, որ ԱՀ իսկութեան մէջ կենդանի չէ՛ կամ ունակ չէ՛ զգալու, ան մտածեց՝ թէ ի՞նչ վնաս կրնայ պատճառել, եթէ քաջալերէ մարդոց՝ գործել կործանարար ձեւերով:

Մինչ Արհեստական Հմտութեան գիտութիւն գործածելու պատասխանատուութիւնը ժամանակակից մարտահրաւէր է, մարդկութիւնը՝ կանուխէն դիմակալած է անվստահելի ձայներու ազդեցութեան: Առակաց գիրքին մէջ՝ մենք նախազգուշացուած ենք ատոնց ազդեցութեան մասին, որոնք կը ցանկան վիրաւորել մեզ՝ իրենց օգտին համար (1. 13-19): Ու մեզի կոչ եղած է փոխարէնը ականջալուր ըլլալու իմաստութեան ձայնին, որ նկարագրուած է որպէս մեր ուշադրութեան համար փողոցներու մէջ աղաղակող (Հմ. 20-23):

Քանի որ «իմաստութիւնը Տէ՛րը կու տայ» (2. 6), այն ազդեցութիւններէն, որոնց չենք կրնար վստահիլ, պաշտպանուելու բանալին՝ Անոր սիրտին աւելի մօտենալ է: Միայն Անոր սէրն ու զօրութիւնը ձեռք բերելու միջոցով է, որ մենք կրնանք «արդարութիւնը, իրաւունքը, ուղղամտութիւնը եւ ամէն լաւ արահետ հասկնալ» (Հմ. 9):

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի, դիմակայել վնասակարը եւ ըմբռնել լաւը՝ Զու մէջդ հանգիստ գտնելով: Ամէն:

Վնասակար ազդեցութիւնները կը քա՛նդեն մեզ, սակայն Աստուծոյ հետ աւելի խոր փոխյարաբերութիւնները՝ խաղաղութիւն կու տան մեզի:

Խոստովանեցէ՛ք իրարու ձեր յանցանքները: [Յակ. 5. 16]

ՄԱՔՐՈՂ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Մարդ մը կայ, որու մարդիկ կը վարձեն, երբ անոնք կը մեռնին: Դրամ կը վճարեն անոր, որպէսզի ներկայանայ իրենց յուզարկաւորութեան եւ բացայայտէ գաղտնիքները, որոնք անոնք երբէ՛ք չեն բաժնեկցած, երբ ողջ էին: Մարդը ընդհատած է մեռնողին համար ըստւած գովեստի խօսքերը: Ան ապշած պաշտօնեաներէն խնդրած է նստիլ, երբ անոնք սկսած են առարկել: Անգամ մը՝ ան կանգնած էր բացատրելու, թէ ինչպէս թագադին մէջ գտնուող մարդը՝ վիճակահանութիւն շահած էր, բայց ո՛չ մէկուն չէր ըսած եւ տասնամեակներ շարունակ ձեւացուցած է, որ յաջողակ գործարար է: Շատ ատեններ՝ վարձուած մարդը՝ յայտնած է մահացողին ըրած դաւաճանութիւնը՝ իր այրիին: Կարելի է հարցականի տակ դնել այս արարքը. արդեօ՞ք այս գործողութիւնները շահագործող են, թէ բարեխղճօրէն իրականացած, բայց ակնյայտ է, որ մարդոց քաղցն է ազատուիլ անցեալի մեղքերէն:

Ուրիշ մէկէ մը խնդրել որ ընէ մեր խոստովանութիւնը (յատկապէս մեր մահէն ետք)՝ գաղտնիքներու հետ գործ ունենալու, ապարդիւն եւ վտանգաւոր միջոց է: Այս պատմութիւնները, սակայն, կը բացայայտեն խոր ճշմարտութիւն մը, որ մենք կարիքը ունինք խոստովանելու եւ բեռնաթափուելու: Խոստովանութիւնը կը մաքրէ մեզ՝ այն բաներէն, որոնք մենք պահած ենք եւ թոյլ տուած՝ որ անոնք թրծուին մեր մէջ: Յակոբոս կ'ըսէ. «Խոստովանեցէ՛ք իրարու ձեր յանցանքները եւ աղօթեցէ՛ք իրարու համար, որպէսզի բժշկուիք» (5. 16): Խոստովանութիւնը կ'ազատէ մեզ կապող բեռներէն՝ թոյլ տալով մեզի՝ հաղորդակցելու Աստուծոյ եւ մեր շուրջիներուն հետ բաց սրտով աղօթելով:

Յակոբոս կը հրաւիրէ մեզ՝ ապրելու բաց կեանքով՝ խոստովանելով Աստուծոյ եւ մեզի ամենամօտ եղող մարդոց այն ցաւերն ու ձախողութիւնները, որոնք մենք կը փորձուինք թաղել:

Աղօթք - Միտելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի որ պատրաստ ըլլամ խոստովանելու: Ամէն:
Ի՞նչ պետք է՝ խոստովանելու համար եւ որո՞ն: Ի՞նչն է մեզի ե՛տ պահողը:



Մի՛ մոռնաք բարեգործութիւնն ու կարօտեալներուն հաղորդակցութիւնը, քանի որ այդպիսի՛ գոհեր հաճելի են Աստուծոյ: [Եբ. 13. 16]

ՍԷՐ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Միայնակ մայրը՝ աւելի քան հինգ տարիներ բնակեցաւ տարեց ազնուական մարդուն բնակարանին կողքին: Օր մը, մտահոգ անոր բարօրութեան մասին, մարդը հնչեց կնոջ դուռնի վրէժով եւ ըսաւ. «Մօտ մէկ շաբաթ է քեզի չեմ տեսած: Պարզապէս կը ստուգէի, որպէսզի տեսնեմ՝ թէ ամէն ինչ կարգի՞ն է»: Անոր ըրած «առողջութեան ստուգումը»՝ քաջալերեց զինք: Երիտասարդ տարիքին՝ կորսնցուցած ըլլալով իր հայրը՝ ան կը գնահատէր, որ բարի ու ազնուական մարդ մը կը հսկէր իր եւ իր ընտանիքին վրայ:

Երբ բարութեան անվճար տալու եւ ստանալու անգին պարգեւը կը զարգանայ՝ պարզապէս բարի ըլլալէն անդին, մենք կը ծառայենք ուրիշներուն՝ բաժնեկցելով անոնց հետ Քրիստոսի սէրը: Եբրայեցիս գիրքին հեղինակը ըսաւ, որ Յիսուսի հաւատացողները պէտք է «անոր միջոցով ամէն ատեն գովաբանութեան զոհ մատուցանեն Աստուծոյ, այսինքն՝ իր անունը դաւանող շրթունքներուն պտուղը» (Եբ. 13. 15): Ապա, հեղինակը յանձնարարեց՝ ապրիլ իրենց հաւատքով՝ ըսելով. «Մի՛ մոռնաք բարեգործութիւնն ու կարօտեալներուն հաղորդակցութիւնը, քանի որ այդպիսի՛ զոհեր հաճելի են Աստուծոյ» (Հմ. 16):

Անոր անունը դաւանելով՝ Յիսուսի երկրպագելը հաճոյք եւ առանձնաշնորհում է: Բայց մենք իսկական սէր կ'արտայայտենք Աստուծոյ հանդէպ, երբ կը սիրենք Յիսուսի պէս: Մենք կրնանք խնդրել Սուրբ Հոգիէն, որ մեզի տեղեկացնէ հնարաւորութիւններու մասին եւ զօրացնէ մեզ լաւ սիրելու ուրիշներուն՝ մեր ընտանիքին մէջ եւ անոնցմէ անդին: Ծառայութեան այդ պահերուն մենք կը բաժնեկցինք Յիսուսի մասին սիրոյ հզօր ուղեբճի միջոցով:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, կը խնդրեմ օգնէ ինձի՝ երկրպագելու քեզի՝ արտայայտելով սեր՝ ուրիշներու հանդէպ այն բաներուն միջոցով, որոնք ես կ'ըսեմ եւ կ'ընեմ ամէն օր: Ամէն:

Պարզ եւ գործնական ձեւերով կարելի է Յիսուսի սերը բաժնեկցիլ ռեւէ մէկու հետ եւ միտումնաւոր ըլլալ՝ մեր բարի միտքերը հետեւողական կերպով ի գործ դնելու:



Եղիազար կանգնեցաւ եւ Փղշտացիները զարկաւ, մինչեւ որ ձեռքերը յոգնեցան: [Բ. Թագ. 23. 10]

ԿԱՌՉԻԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Երբ Ճօնի Էրիքսըն Թատա (Joni Eareckson Tada) կը խօսի՝ Ռիգայի (Rika) մասին, ան կ'ընդգծէ իր ընկերոջ «խորժամանակի փորձարկուած առ Աստուած հաւատքին» եւ տոկոսնութեան մասին, որ ան զարգացուցած է՝ թուլացնող մնայուն հիւանդութիւն ապրելով: Աւելի քան տասնհինգ տարիներ, Ռիգա անկողինի ծառայած է, նոյնիսկ չէ կրցած լուսինը տեսնել՝ իր սենեակի փոքրիկ պատուհանէն: Բայց՝ իր յոյսը չէ կորսնցուցած. կ'ապաւինի Աստուծոյ, կը կարգայ եւ կ'ուսումնասիրէ Աստուածաշունչը, եւ ինչպէս Ճօնին կը նկարագրէ զինք, ան «գիտէ, թէ ինչպէս ամուր կանգնած է յուսահատութեան դէմ՝ կատաղի մարտերու ընթացքին»:

Ճօնի կը համեմատէ Ռիգայի յամառութիւնն ու յարատեւութիւնը՝ Եղիազարի, Դաւիթ թագաւորի ժամանակ եղող զինուորին հետ, որ հրաժարեցաւ փախչելէ Փղշտացիներէն: Փոխանակ միանալու՝ փախչիլ ուզող զօրքերուն՝ «ան կանգնեցաւ եւ Փղշտացիները զարկաւ, մինչեւ որ ձեռքերը յոգնեցան ու ձեռքը սուրին վրայ փակաւ» (Բ. Թագ. 23. 10): Աստուծոյ զօրութեամբ, «Տէրը այդ օր մեծ յաղթանակ տարաւ» (Հմ. 10): Ճօնի կը նշէ, ինչպէս որ Եղիազար վճռականօրէն կառչած էր սուրին, այնպէս ալ Ռիգան կառչած էր «Հոգիի սուրին, որ Աստուծոյ խօսքն է» (Եփ. 6. 17): Եւ այնտեղ, Աստուծոյ մէջ, ան կը գտնէր իր ուժը:

Անկախ անկէ՝ որ լաւ առողջութիւն ունինք, թէ մնայուն հիւանդութեան պատճառով յուսալքութեան դէմ կը պայքարինք, մենք ալ նոյնպէս կրնանք Աստուծոյ նայիլ՝ խորացնելու մեր յոյսի պաշարները եւ օգնելու մեզի՝ դիմանալու: Քրիստոսով մենք կը գտնենք մեր ուժը:

Աղօթք - Ամէն զօրութեան Աստուած, շնորհակալ եմ, որ կը սիրես զիս եւ կ'օգնես դիմանալու: Կը խնդրեմ՝ օգնէ ինձ, որ կեդրոնանամ Զու վրայ, որպէսզի շարունակեմ սիրել եւ վստահիլ Զեզի: Ամէն:

Յարատեւութեան եւ տոկունութեան բազմաթիւ օրինակներ ունինք: Աստուած կը վերականգնէ ու կը նորոգէ մեզ, եթէ զգանք՝ որ սպառած ու յոգնած ենք:



Ո՛րչափ քաղցր է քու խօսքդ իմ քիմքիս: [Սաղմ. 119. 103]

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ՍԻՐՈՂՆԵՐ

Գեղեցիկ հարսը՝ բռնելով իր հպարտ հօր թեւը, պատրաստ էր երթալու դէպի խորանը: Բայց ո՛չ իր տասն երեք ամսական եղբօրորդիին մոտաքէն առաջ: Սովորական «մատանի կրող» ըլլալու փոխարէն՝ ան «Աստուածաշունչ կրողն» էր: Այս կերպով՝ հարսն ու փեսան, որպէս Յիսուսի նուիրուած հաւատացեալներ, կը ցանկային վկայել Սուրբ Գիրքի հանդէպ իրենց ունեցած սիրոյ մասին: Նուազագոյն ցրուածութեամբ՝ փոքրիկը գտաւ իր ճամբան՝ դէպի եկեղեցիին առջեւ: Որքա՛ն պատկերաւոր էր, որ փոքրիկին ակռաներուն հետքերը յայտնաբերուեցան Աստուածաշունչի կաշիէ կողքին վրայ: Գործունէութեան ինչպի՛սի պատկեր, որը տեղին է՝ Քրիստոսին հաւատացողներուն կամ անոնց համար, որոնք կը ցանկան ճանչնալ Անոր՝ համտեսելու եւ ընդունելու Սուրբ Գրութիւնները:

119-րդ Սաղմոսը՝ կը նշէ Աստուածաշունչին համապարփակ արժէքը: Աստուծոյ օրէնքով ապրողներուն երանութիւնը յայտարարելէ ետք (Հմ. 1), հեղինակը բանաստեղծական ոճով ըսաւ անոր մասին, ներառեալ իր սէրը անոր հանդէպ: «Նայէ՛ թէ՛ ո՛րքան կը սիրեմ քու հրամաններդ, ո՛վ Տէր» (Հմ. 159). «Ստութիւնը կ'ատեմ, եւ անկէ կը գարշիմ. Քու Օրէ՛նքդ կը սիրեմ» (Հմ. 163). «Իմ անձս քու վկայութիւններդ պահեց. ես զանոնք շատ կը սիրեմ» (Հմ. 167):

Ի՞նչ հաստատումներ կ'ընենք Աստուծոյ եւ իր Խօսքին հանդէպ մեր ունեցած սիրոյ մասին՝ մեր ապրելակերպին միջոցով: Անոր հանդէպ մեր սէրը ստուգելու ձեւերէն մէկը՝ հարցնել է. «Ի՞նչ բան կը ճաշակեմ»: Արդե՞օք ես «ծամած եմ» Սուրբ Գիրքի քաղցր խօսքերը: Եւ ապա՝ ընդունիմ այդ հրաւէրը. «Համտեսեցէք ու տեսէք, թէ՛ Տէրը բարի է» (34. 8):

Աղօթք - Երկնաւոր Յայր, գիտե՛ս թէ ո՛ր իմ փխրոժակս ճշդումի կարիք ունի: Կը ինդրեմ, տո՛ւր ինձի քաջութիւնն ու ուժը, որպէսզի անհրաժեշտ փոփոխութիւնները կատարեմ՝ Բեզի հանդէպ իմ սիրոյս մէջ աճելու համար: Ամէն:
Ի՞նչ բան կը կրէ մեր «ակռաներուն հետքերը»: Ինչպէ՛ս կրնանք աճեցնել մեր սէրը Աստուծոյ եւ Աստուածաշունչին հանդէպ:



Ո՛վ որ կ'ընդունի այսպիսի մանուկներեն մէկը՝ իմ անունովս, գի՛ս կ'ընդունի: [Մարկ. 9. 36]

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՄՏԻ ՓՍԻԱԹԸ

Տեղական «մեծ տուփ» կոչուած խանութին մէջ ցուցադրուած փսիաթներուն մէկ առ մէկ նայելով, նկատեցի անոնց վրայ դրոշմուած հաղորդագրութիւնները: «Բարեւ Ձեզ!» «Տուն!» ո եւ ւ տառերուն տեղ սիրտ մը գծուած: Ու ընտրեցի՝ աւելի սովորականը՝ «Բարի Գայուստ» բարերով դրոշմուածը: Զանիկա տանս մէջ իր տեղը դնելով, ստուգեցի սիրտս: Արդեօ՞ք տունս իսկապէս հիւրընկալ էր՝ այնպէս, ինչպէս Աստուած կը ցանկար: Դպրոցական ծրագիրի համար տուրք ծախող երեխային: Կարիքաւոր դրացիին: Քաղաքէն դուրս գտնուող ընտանիքի անդամին, որ գանգնհարեց ճիշդ այդ պահուն:

Մարկոս 9-ին մէջ Յիսուս կ'անցնի Այլակերպութեան լեռնէն, ուր Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս ակնածանքով կանգնած էին Անոր սուրբ ներկայութեան մէջ (Հմ. 1-13՝ բուժելու համար չար հոգիով լեցուած տղայ մը, որու հայրը կորսնցուցած էր իր յոյսը (Հմ. 14-29): Ապա Յիսուս առաջարկեց աճնական դասեր աշակերտներուն՝ իր գալիք մահուան վերաբերեալ (Հմ. 30-32): Անոնք բնա՛ւ չի հասկցան Յիսուսի ըսածը (Հմ. 33-34): Որպէս պատասխան՝ Յիսուս գիրկը առաւ մանուկ մը՝ ըսելով. «Ո՛վ որ կ'ընդունի այսպիսի մանուկներէն մէկը՝ իմ անունովս, գի՛ս կ'ընդունի» (Հմ. 36): Ընդունիլ բառ կը նշանակէ ողջունել որպէս հիւր: Յիսուս կ'ուզէ, որ իր աշակերտները ողջունեն բոլորին՝ անխտի՛ր, նոյնիսկ թերզնահատուածներն ու անյարմար նկատուածները, որպէ՛ս թէ գի՛նք կ'ընդունին:

Մտաբերեցի իմ բարեգալուստի փսիաթիս մասին եւ զարմացայ, թէ ինչպէ՞ս իր սէրը կը ներկայացնեմ ուրիշներուն: Ա՛յդ կը սկսի՝ Յիսուսը որպէս հիւր ընդունելով: Թոյլ պիտի տա՞մ Անոր, որ առաջնորդէ զիս՝ ողջունելու ուրիշները, ինչպէս ինք կը ցանկայ:

Աղօթք - Սիրելի Յիսո՛ւս, կը խնդրեմ՝ Զո՛ւ տունդ ըրէ իմ մէջս, ինչպէս ես՝ ի՛մս Զու մէջդ: Ամէն:

Եթէ ընդունած ես Յիսուսը՝ քու մէջդ, ողջունէ ուրիշները՝ որպէ՛ս թէ գի՛նք կ'ողջունես:



Ահա՛ ես նո՛ր բան մը պիտի ընեմ, որ հիմա պիտի պատահի:
[Ես. 43. 19]

ԲԱՆՏԻ ՃԱՂԵՐՈՒՆ ԵՏԵՒ

Ամերիկեան ֆուլթայօլի՝ պաշտպան դիրքի աստղային խաղացող մը բարձրացաւ բեմ մը, որ մարզադաշտ մը չէր: Ան խօսեցաւ Ֆլորիտայի Մայամի (Florida, Miami) Զրամարզի Ուղղիչ Բանտի (Everglades Correction Facility) երեք հարիւր բանտարկեալներուն հետ, անոնց հետ բաժնեկցելով Եսայի մարգարէին խօսքերը:

Այս պահը, սակայն, ո՛չ թէ ծանօթ մարզիկին հանդէսին մասին էր, այլ կոտորուած եւ վիրաւորուած հոգիներու ծովին: Այս յատուկ պահին Աստուած յայտնուեցաւ ճաղերուն ետեւ: Դիտորդ մը գրեց իր կայքէջին վրայ. «Մատուռը սկսաւ ժայթքիլ պաշտամունքի եւ գովասանքի մէջ»: Տղամարդերը՝ միասին կու լային եւ կ'աղօթէին: Ի վերջոյ, մօտ քսան եօթը բանտարկեալներ իրենց կեանքը յանձնեցին Քրիստոսի:

Ձեռով մը՝ մենք քոլորս ալ մեր իսկ ստեղծած բանտերուն մէջ ենք, թակարդուած մեր ազահուլթեան, եսասիրութեան եւ մոլութեան ճաղերուն ետեւ: Բայց զարմանալիօրէն՝ Աստուած կը յայտնուի: Այդ առտու բանտին մէջ՝ Սուրբ Գրային բանալի համարն էր. «Ահա՛ ես նո՛ր բան մը պիտի ընեմ, որ հիմա պիտի պատահի, միթէ՛ զայն պիտի չգիտնա՞ք» (Ես. 43. 19): Հատուածը կը խրախուսէ մեզի, որ «առաջին բաները չյիշենք» եւ «հին բաներուն վրայ չմտածենք» (Հմ. 18), քանի որ Աստուած կ'ըսէ. «Ե՛ս եմ, ե՛ս եմ, որ քու մեղքերդ ա՛լ պիտի չյիշեմ» (Հմ. 25):

Տակաւին՝ Աստուած յստակ կ'ըսէ. «Ինձմէ՛ ուրիշ փրկիչ չկայ» (Հմ. 11): Միայն մեր կեանքը Քրիստոսի տալով է, որ մենք կ'ազատուինք: Մեզմէ՛ ոմանք այդ մէկը ընելու են. մեզմէ՛ ոմանք զայն ըրած են, բայց պէտք է յիշեցնենք, թէ ո՞վ է իրականութեան մէջ՝ մեր կեանքին տէրը: Մենք վստահ ենք, որ Քրիստոսի միջոցով Աստուած իսկապէս «նոր բան» մը կ'ընէ: Այսպիսով, եկէ՛ք տեսնենք, թէ ի՞նչ կ'առաջանայ:

Աղօթք - Երկնաւոր Դայր, կը խնդրեմ՝ ազատե՛ զի՛ս իմ մեղքի բանտային ճաղերէն: Ամէն:

Ի՞նչ ձեռով բանտարկուած ես՝ քու մեղքերուդ պատճառով: Ի՞նչ ընելու ես ազատուելու համար քու կոտորուածութենէն:



Ինչպէս Զրիստոս ներեց ձեզի, նոյնպէս ալ դո՛ւք ներեցէք:
[Կող. 3. 13]

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌԱՏԱԶԵՈՆ ՍԵՐԸ

Ան յայտնի է որպէս զինուորական, որով շրջանաւարտից Հանդիսութեան ելոյթը՝ ամէն օր անկողինը շտկելու մասին՝ 100 միլիոն արցանց դիտորդ ունեցաւ: Բայց նաւատորմի թռչակարու Ծովակալ Ուիլյամ ՄըքՌէյվըն (William McRaven) կը բաժնեկցի նաեւ ուրիշ դաս մը, որ նոյնքան ազդեցիկ է: Մերձաւոր Արեւելքի մէջ ռազմական գործողութեան ընթացքին՝ ՄըքՌէյվըն ցաւով խոստովանեցաւ, որ անմեղ ընտանիքի մը՝ մի քանի անդամներ սխալմամբ սպաննուած են: Հաւատարմով, որ ընտանիքը արժանի էր լսելու անկեղծ ներողութեան խօսքեր, ՄըքՌէյվըն համարձակեցաւ ներողութիւն խնդրելու՝ սրտացաւ հօրմէն:

ՄըքՌէյվըն թարգմանիչի մը միջոցով ըսաւ. «Ե՛ս զինուոր եմ, բայց ես նոյնպէս երեխաներ ունիմ եւ իմ սիրտս կը վշտանայ քեզի համար»: Մարդը շնորհեց ՄըքՌէյվընին ներումի առատաձեռն նուէրը: Մարդուն ողջ մնացած որդին ըսաւ. «Շատ շնորհակալ եմ: Մենք մեր սիրտին մէջ ոչի՛նչ կը պահենք ձեզի դէմ»:

Պօղոս առաքեալ գրեց՝ այսպիսի առատաձեռն շնորհքի մը մասին. «Որպէս Աստուծոյ ընտրեալներ՝ սուրբ եւ սիրելի, հազէք գուլթը, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեղութիւնը, համբերութիւնը» (Կող. 3. 12): Ան գիտէր, որ կեանքը մեզի տարբեր ձեւերով կը փորձէ, ուստի Կողոսայի եկեղեցիին հաւատացեալներուն հրահանգեց. «Հանդուրժելով իրարու եւ ներելով իրարու եթէ մէկը տրտունջ մը ունենայ միւսին դէմ. ինչպէս Քրիստոս ներեց ձեզի, նոյնպէս ալ դո՛ւք ներեցէք» (Հմ. 13):

Ի՞նչ բանը մեզի հնարաւորութիւնը կու տայ նման կարեկցութիւն ունենալու: Աստուծոյ առատաձեռն սէրը: Ինչպէս եզրափակեց Պօղոս. «Եւ այս բոլոր բաներուն վրայ հազէք սէրը, որ կատարելութեան կապն է» (Հմ. 14):

Աղօթք - Ներող Զայ՛ր, կը խնդրե՛մ շնորհէ ինծի այսօր Զու ներելու առատաձեռն կամքը: Ամէն:
Ինչո՞ւ համար ներումը առատաձեռն է: Որո՞ւ պիտի ներես այսօր:



Ուստի մեղքս քեզի գիտցուցի: [Սաղմ. 32. 5]

ԴԱՏԱՊԱՌՏՈՒԱԾ ԵՒ ԱԶԱՏՈՒԱԾ

«Սա ա՛յդ բանը չըրի»: Սո՛ւտ էի եւ գրեթէ ազատուեցայ անկէ, մինչեւ որ Աստուած կանգնեցուց զիս: Երբ միջնակարգի աշակերտ էի, խումբի մը անդամ էի, որ ելոյթի ժամանակ թուքի գնդակներ կը թռցնէր՝ մեր նուագախումբին ետեւ: Մեր ղեկավարը՝ նախկին ծովային էր, յայտնի էր իր կարգապահութեամբ եւ կը սարսափէի իրմէ: Ուստի, երբ յանձադործութեան մէջ՝ իմ գործընկերներս զիս մեղադրեցին, ստեցի իրեն՝ այդ մասին: Յետոյ՝ հօրս ալ խաբեցի:

Բայց Աստուած թոյլ չի տար, որ սուտը շարունակուի: Ան ինծի տուաւ շատ մեղաւոր խղճմտանք այդ սուտին համար: Շաբաթներ շարունակ դիմադրելէ ետք՝ զիջեցայ: Ներողութիւն խնդրեցի Աստուծոյ եւ հօրս: Որոշ ժամանակ մը ետք՝ գացի ղեկավարին տունը եւ արցունքներով խոստովանեցայ: Բարեբախտաբար՝ ան բարի եւ ներողամիտ եղաւ:

Երբէք չեմ մոռնար, թէ որքա՛ն լաւ էր այդ բեռը հանել: Ազատ էի մեղքի ծանրութենէն եւ երջանիկ զգացի շաբաթներ ետք՝ առաջին անգամը ըլլալով: Դաւիթ կը նկարագրէ նաեւ իր կեանքի համոզմունքներն ու խոստովանութեան ժամանակաշրջանները: Ան կ'ըսէ Աստուծոյ. «Երբ լուռ կեցայ, ոսկորներս մաշեցան, ամբողջ օրը աղաղակելէս. որովհետեւ ցերեկ գիշեր քու ձեռքդ իմ վրաս ծանրացաւ. իմ թարմութիւնս ամառուան չորութեան վերածուեցաւ: Ուստի մեղքս քեզի գիտցուցի» (Սաղմ. 32. 3-5):

Վաւերականութիւնը՝ կարեւոր է Աստուծոյ համար: Ան կը ցանկայ, որ խոստովանինք մեր մեղքերը իրեն եւ նաեւ ներողութիւն խնդրենք անոնցմէ, որոնց մենք սխալ ըրած ենք. «Դուն ներեցիր իմ մեղքիս անօրէնութիւնը» (Հմ. 5):

Աղօթք - Սիրելի Դայր, շնորհակալ եմ, որ ներեցիր մեղքերս, երբ ես խոստովանեցայ քեզի: Կը խնդրեմ՝ օգնէ ինծի միշտ վաւերական ըլլալ քեզի հետ: Ամէն:

Եթէ Աստուծոյ հետ անկեղծ ըլլանք ու խոստովանինք մեր մեղքերը, կը ստանանք Տէր Յիսուսի ներումը, որ կը թերթեցնէ մեր բեռը եւ կը փոխէ մեր կեանքը:



Ուստի անոր (Յիսուսի) պատճառով կը գայթակղէին: [Մարկ. 6. 3]

ԸՆՏԱՆԻՔԷ ԱԻԵԼԻ

Ճան (Jon) նշանակուած էր հեղինակաւոր գոլէճի մը մէջ՝ որպէս Ճլման ժամանակով դասախօս: Անոր երէց եղբայրը՝ Տէյվիտ (David)՝ ուրախ էր, բայց, ինչպէս եղբայրները կ'ընեն, ան չի կրցաւ զսպել ինքզինք՝ նեղելու Ճանին, թէ ինչպէս զինք գետին կը նետէր՝ երբ անոնք երեխաներ էին: Ճան հիմա իր տարիքը առած էր, սակայն միշտ ալ Տէյվիտին կրտսեր եղբայրն էր:

Դժուար է տպաւորութիւն ձգել ընտանիքին վրայ, նոյնիսկ եթէ դուն Մեսիան ըլլաս: Յիսուս հասակ առած երիտասարդ մըն էր՝ Նազարէթի ժողովուրդին մէջ, ուստի անոնք դժուարութիւն ունէին հաւատալու, որ ան առանձնայատուկ էր: Սակայն անոնք հիացած էին Անով. «Ասիկա ուրկէ՞ ունի այս բաները ... որ այսպիսի հրաշքներ կը գործուին իր ձեռքով: Ասիկա հիւսնը չէ՞, Մարիամի որդին» (Մարկ. 6. 2-3): Յիսուս ըսաւ. «Մարգարէ մը առանց պատիւի չէ, բացի իր բնագաւառին, իր ազգականներուն եւ իր տան մէջ» (Հմ. 4): Այս մարդիկը՝ լաւ կը ճանչնային Յիսուսի, բայց չէին կրնար հաւատալ՝ որ Ան Աստուծոյ Որդին է:

Թերեւեւ դժուար ալ հասակ առած ես աստուածապաշտ ընտանիքի մը մէջ: Քու ամենավաղ յիշատակներդ կը ներառեն եկեղեցի յաճախել եւ հոգեւոր օրհներգներ երգել: Յիսուս միշտ ընտանիքի նման զգացած է: Եթէ դուն կը հաւատաս ու կը հետեւիս Անոր, Յիսուս ընտանիքի անդամ է: Ան «ամօթ չի սեպեր եղբայր կոչել զանոնք (մեզ)» (Եբ. 2. 11): Յիսուս մեր երէց եղբայրն է՝ Աստուծոյ ընտանիքին մէջ (Հռոմ. 8. 29): Սա՛ մեզի համար մեծ առանձնաշնորհում է, բայց մեր մտերմութիւնը կրնայ զինք սովորական թուացնել: Պարզապէս՝ եթէ մէկը ընտանիքի անդամ է, չի նշանակեր՝ որ ան առանձնայատուկ չէ:

Ուրախ չե՛ս, որ Յիսուս ընտանիքի անդամ է եւ ընտանիքէ աւելին: Թող Ան ըլլայ աւելի անհատական եւ աւելի առանձնայատուկ, մինչ դուն կը հետեւիս Անոր:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալ եմ՝ որ գիս Աստուծոյ ընտանիքին անդամ ըրիր: Ամէն:

Թող Յիսուս աւելի անձնական ըլլայ մեզի համար եւ ամէն քան թափենք՝ որ Ան մնայ յատուկ:



Ո՛չ մէկ բան ըրէք հակառակութեամբ կամ սևափառութեամբ.
հապա՛ խոնարհութեամբ ուրիշը ձեզմէ գերազանց
համառեցէք: [Փիլ. 2. 3]

ՕԳՆԵՑԷՔ ԶԻՐԱՐ

Երբ Ֆէրլի Տիգինսըն Համալսարանի (Fairleigh Dickinson University - FDU) պասքէթպօլի խումբը դաշտ ներկայացաւ, ջերմեռանդ խանդավառեալները ոգեւորեցին անյաջողակ խումբին: Խումբէն չէր ակնկալուէր, որ անցնի մրցաշարքի առաջին փուլէն անդին, բայց անոնք ոգեւորեցին: Հսուեցաւ անոնց բարձրաձայն երգը՝ թէեւ չկար անոնց ընկերակցող նուագախումբ: Տէյթըն (Dayton) Համալսարանի նուագախումբը սորված էր Ֆէրլի Համալսարանի երգը՝ խաղէն քանի մը վայրկեաններ առաջ: Նուագախումբը կրնար պարզապէս նուագել իրենց գիտցած երգը, բայց անոնք որոշեցին սորվիլ երգը՝ օգնելու համար ուրիշ դպրոցի մը եւ խումբի մը:

Այս նուագախումբին ըրածը կարելի է տեսնել, որպէս խորհրդանշող միասնութիւն, որը նկարագրուած է Փիլիպպեցիներու նամակին մէջ: Պօղոս ըսաւ Փիլիպպէի այդ օրուան եկեղեցիին ու մեզի այսօր, ապրիլ միասնութեան կամ «մէկ մտածումի» մէջ (Փիլ. 2. 2), յատկապէս այն պատճառով, որ անոնք միաւորուած էին Քրիստոսով: Այդ բանը ընելու համար, առաքեալը խրախուսեց անոնց հրաժարիլ եսասիրական փառասիրութենէն եւ ուրիշներու շահերը իրենցինէն առաջ համարել:

Ուրիշները մեզմէ բարձր գնահատելը, կրնայ բնական բան մը չըլլալ, բայց այդպէ՛ս ընելով՝ մենք կրնանք ընդօրինակել Քրիստոսը: Պօղոս գրեց. «Ո՛չ մէկ բան ըրէք հակառակութեամբ կամ սնափառութեամբ. հապա՛ խոնարհուեցէ՛ք ուրիշը ձեզմէ գերազանց համառեցէ՛ք» (Հմ. 3): Միայն մենք մեր վրայ կեդրոնանալու փոխարէն, աւելի լաւ է՝ խոնարհուեցէ՛ք նկատի առնենք «ուրիշներու շահը» (Հմ. 4):

Ինչպէ՞ս աջակցիլ ուրիշներուն: Ուշադիր նկատի առնելով անոնց հետաքրքրութիւնը եւ այն ինչ որ կրնայ անոնց անհրաժեշտ ըլլալ:

Աղօթք - Տէր, կը ինդրեմ՝ ցոյց տուր ինձի միջոցներ, որոնցմով ես կրնամ օգնել ուրիշներուն՝ անոնց շահը նկատի առնելով: Ամէն:
Եկէ՛ք ուրիշներու շահը նկատի առնենք, որպէ՛սզի նպաստէ մեր միասնութեան:



Անսք ըսին. «Ամէն, Ալէլուիա՛»: [Յայտ. 19. 4]

ԵՐԿԻՆՔԸ՝ Կ'ԵՐԳԷ

Ուրախութիւնը՝ ականյայտ էր անոնց ձայներուն մէջ, երբ դպրոցի երգչախումբը կ'երգէր Արժանգինական (Argentinian). «Էլ Չիլէյօ Գանգա Ալէկրիա» (El Cielo Cants Alegria): Ես կը վայելէի կատարումը, բայց չէի կրնար հասկնալ բառերը, քանի որ Սպաներէն չէի գիտեր: Բայց շատ չանցած լսեցի ծանօթ բառը, երբ երգչախումբը սկսաւ ցնծալով յայտարարել. «Ալէլուիա»: Կրկին ու կրկին՝ լսեցի «Ալէլուիա»ն. Աստուած փառաբանող հոգակազիր մը, որ նոյնանման կը հնչուի աշխարհի տարբեր լեզուներով: Ցանկալով իմանալ երգին ետին եղող պատմութիւնը, համերգէն ետք՝ փնտռեցի համացանցին վրայ եւ յայտնաբերեցի, որ վերնագիրը՝ թարգմանաբար կը նշանակէ. «Երկինքը կ'երգէ ուրախութեան համար»:

Յայտն. 19-ի տօնական հատուածի մը մէջ, մեզի ցոյց տրուած է երգչախմբային երգի մը մէջ արտայայտուած իրականութեան ամբողջ երկինքի ցնծութիւնը: Յովհաննէս առաքեալի ապագայի տեսիլքին մէջ, որ կը գտնուի Նոր Կտակարանի վերջին գիրքին մէջ, ան տեսաւ մարդկային եւ հրեշտակային արարածներու հսկայական հաւաք մը երկինքի մէջ, որոնք երախտագիտութիւն կը յայտնէին Աստուծոյ: Յովհաննէս գրեց, որ ձայներու երգչախումբը կը նշէր Աստուծոյ զօրութիւնը, որ յաղթեց չարին եւ անարդարութեան, Անոր թագաւորութիւնը՝ բոլոր աշխարհի վրայ եւ յաւիտենական կեանք՝ Անոր հետ յաւիտեան: Կրկին ու կրկին, երկինքի բոլոր բնակիչները կը յայտարարեն «Ալէլուիա» (Հմ. 1., 3, 4, 6), կամ «Գովաբանէ Աստուած»:

Օր մը՝ «ամէն տոհմէ, լեզուէ, ժողովուրդէ եւ ազգէ» (5. 9) պիտի յայտարարեն Աստուծոյ փառքը: Եւ ուրախութեամբ մեր բոլոր ձայները ամէն տարբեր լեզուներով միասին պիտի գոչեն, «Ալէլուիա»:

Աղօթք - Իմ Աստուա՛ծս, Ալէլուիա՛: Այնքան երախտապարտ եմ այն ուրախութեան համար, որը ես գիտեմ, որովհետեւ սիրուած եմ Զեզմէ: Ամէն:

Շատ պատճառներ ունինք, որ այսօր կարենանք ըսել «Ալէլուիա» ու փառաբանել Աստուած՝ կանոնաւորաբար:



Իմ խաւարիս վրայ Տէ՛րը կը ճառագայթէ: [Բ. Թագ. 22. 29]

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄՈՒԹ ՍԵՆԵԱԿ

Բանակը՝ Թօնի Վազգարօին (Tony Vaccaro) որպէս նկարիչ հնարաւորութիւնն չէր տար, բայց այդ բանը չխանգարեց անոր: Հրետանային ուսմբերէն եւ բեկորներէն խուսափելու սարսափելի պահերուն միջեւ, որոնք կը թուէին՝ որպէս թէ անձրեւ կու գայ ծառերէն, ան ամէն պարագային լուսանկարներ առաւ: Յետոյ, երբ իր ընկերները քնացած էին, ան օգտագործեց անոնց սաղաւարտները քիմէական նիւթերը խառնելու ֆիլմերը մշակելու համար: Գիշերային անտառը դարձաւ այն մուլթ սենեակը, ուր Վազգարօն ստեղծեց Երկրորդ Համաշխարհային Պատերազմի՝ Հուրթֆէյն Անտառի (Hurtgen Forest) ճակատամարտի բացառիկ գլուխ գործոց պատկերները:

Դաւիթ թագաւորը ապրեցաւ պատերազմներու եւ մուլթ օրերու իր բաժինը: Երկրորդ Թագ. 22-ը կը սէ. «Տէրը զինք (Դաւիթին) իր բոլոր թշնամիներուն ձեռքէն ու Սաւուդի ձեռքէն ազատեց» (Հմ. 1): Դաւիթ օգտագործեց այդ փորձառութիւնները՝ Աստուծոյ հաւատարմութեան մասին արձանագրութիւն ընելու: Ան ըսաւ. «Արդարեւ մահուան կոհակները զիս պատեցին, անօրէնութեան վտակները զիս զարհուրեցուցին» (Հմ. 5):

Շուտով՝ Դաւիթ յուսահատութենէն՝ անցա՛ւ յոյսի. «Իմ տազնապիս մէջ Տէրը կանչեցի եւ Աստուծոյ աղաղակեցի», ու շարունակեց ըսելով. «Ան իր տաճարէն իմ ձայնս լսեց» (Հմ. 7): Դաւիթ որոշեց փառաբանել Աստուծոյ՝ Անոր անվրէպ օգնութեան համար: Ան ըսաւ. «Իմ խաւարիս վրայ Տէ՛րը կը ճառագայթէ: Քեզմով գունդի մը դէմ կը վազեմ, եւ իմ Աստուծմովս պարիսպին վրայէն կ'ոստնուամ» (Հմ. 29-30):

Մենք ալ կրնանք դաւիթի ըրածը ընել: Ի վերջոյ, մենք կ'ապաւինինք Անոր վրայ, որ խաւարը կը վերածէ լոյսի:

Աղօթք - Սիրելի Հայր, օգնէ ինձի՝ տեսնելու այն բազմաթիւ ուղիները, որոնց միջոցով Դուս կը պաշտպանես եւ կ'օգնես ինձի, յատկապէս՝ երբ ամենէն մութն է: Ամէն:

Յուսահատութիւններ՝ միշտ պիտի ունենաք մեր կեանքին մէջ, սակայն Աստուած հաւատարիմ կը մնայ մեզի հանդէպ ու մեր խաւարը լոյսի կը վերածէ:



Եղբայրներ եկան ու վկայեցին քու ճշմարտութեանդ մասին:
[Գ. Յովհ. 1. 3]

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Երբ Դոկտ. Լին՝ (Lee) աստուածաբանական դպրոցի իմ դասախօսս էր, նկատեց որ Պէնճին (Benjie)՝ մեր դպրոցի խնամատարը, պիտի ուշանայ մեր ճաշի հաւաքոյթին միանալու, ան լուրթեամբ՝ մէկ ափսէ ուտելիք մէկ կողմ դրաւ անոր համար: Երբ ես եւ իմ դասընկերներս կը խօսէինք, Դոկտ. Լի նոյնպէս մէկդէի դրաւ բրինձի կարկանդակի վերջին կտորը իր պնակին մէջ, վրան աւելցնելով քիչ մը հնդկընկուզի տաշուք: Յայտնի Աստուածաբանի այս բարի արարքը շատերէն մէկն էր, եւ այն ինչ որ ես կը համարէի Դոկտ. Լիի հաւատարմութեան յորդումը Աստուծոյ: Քսան տարիներ ետք, այդ խոր տպաւորութիւնը, որ ձգեց վրաս, տակաւին կը մնայ:

Յովհաննէս առաքեալ՝ ունէր սիրելի ընկեր մը, որ նոյնպէս խոր տպաւորութիւն ձգեց շատ հաւատացեալներու վրայ: Անոնք խօսեցան Կայոսի (Gaius) մասին որպէս մէկը, որ կը հաւատար Աստուծոյ եւ Սուրբ Գրութիւններուն եւ միշտ կը քայլէր «ճշմարտութեան» մէջ (Գ. Յովհ. 1. 3): Կայոս հիւրասիրութիւն ըրաւ աւետարանի շրջիկ քարոզիչներուն, թէեւ անոնք օտար էին (Հմ. 5): Որպէս արդիւնք՝ Յովհաննէս ըսաւ անոնց. «Անոնք վկայեցին քու սիրոյդ մասին եկեղեցիին առջեւ» (Հմ. 6): Կայոսի հաւատարմութիւնը Աստուծոյ եւ Յիսուսի՝ միւս հաւատացեալներուն օգնեց՝ առաջ մղել աւետարանը:

Ուսուցիչիս ազդեցութիւնը իմ վրաս եւ Կայոսի ունեցած ազդեցութիւնը իր օրերուն մէջ՝ հզօր յիշեցումներ են՝ որ մենք ազդեցութիւն ձգենք ուրիշներու վրայ, որը Աստուած կրնայ օգտագործել՝ զանոնք դէպի Քրիստոս մղելու համար: Մինչ մենք հաւատարիմ կերպով կը քայլենք Աստուծոյ հետ, եկէ՛ք ապրինք եւ գործենք այնպէս մը, որ օգնենք միւս հաւատացեալներուն որպէսզի անոնք ալ նոյնպէս հաւատարմօրէն քայլեն իր հետ:

Աղօթք - Սիրելի Հայր, օգնութեանդ կարիքը ունիմ Զեզի եւ Զու ճշմարտութիւններուդ հաւատարիմ ըլլալու համար: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի ապրելու այնպէս, որ ուրիշներուն դէպի Զեզ քաշեմ: Ամէն:
Ինչպէ՞ս կարելի է գիտնալ, եթէ կը քայլենք ճշմարտութեան մէջ:
Ինչպէ՞ս կարելի է ուրիշներու տալ՝ մեր կեանքէն:

Որպեսզի միաբան ու միաբերան փառաբանեք Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի Հայրը: [Հռմ. 15. 6]

ԿԵԱՆՔ ՄԸ՝ ՉՈՐՍ ԲԱՌԵՐՈՒ ՄԷՋ

Ճէյմս Իննըլ Փէքըր (*James Innell Packer*), որ աւելի ծանօթ է որպէս Ճ. Ի. Փէքըր, մեռաւ 2020-ին՝ իր ինիսուն չորրորդ տարեդարձէն հինգ օրեր առաջ: Աստուածաբան եւ գրող, անոր ամենայայտնի գիրքէն՝ «Ծանչնալ Աստուած» (*Knowing God*), ծախուած է 1.5 միլիոն օրինակէ աւելի՝ առաջին հրատարակութենէն ի վեր: Փէքըր կը պաշտպանէ աստուածաշնչային հեղինակութիւնը, աշակերտ պատրաստելը եւ կը յորդորէ Քրիստոսի հաւատացողներուն ամենուրէք լրջօրէն նկատի առնել Յիսուսի համար ապրիլը: Երբ հարց տրուեցաւ իր յառաջացած կեանքին մէջ՝ եկեղեցիին ըսելու իր վերջին խօսքերուն համար: Փէքըր ունէր մէկ տող, ընդամէնը՝ չորս բառեր. «Փառաւորէ Քրիստոսը ամէն տեղ»:

Այս խօսքերը կ'արտացոլեն Պողոս առաքեալի կեանքը, որ իր դարձէն ետք՝ հաւատարիմ կերպով ձեռնմուխ եղաւ իր առջեւ դրուած գործին եւ արդիւնքները վստահեցաւ Աստուծոյ: Պողոսի խօսքերը, որոնք կը գտնուին Հռոմայեցի գիրքին մէջ, ամենէն աւելի աստուածաբանական խօսքերէն են ամբողջ Նոր Կտակարանին մէջ, եւ Փէքըր սերտօրէն կ'եզրափակէ առաքեալին գրածը. «Փառաբանէք Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի Հայրը» (15. 6):

Պողոսի կեանքը օրինակ է: Մենք կրնանք փառաբանել ու պատուել Աստուած շատ տարբեր ձեւերով, Որոնցմէ մէկը ապրիլ մեր առջեւ դրուած կեանքը եւ արդիւնքը ձգել Աստուծոյ անփոփոխ ձեռքերուն մէջ: Գիրքեր գրելը, միսիոնարական ճամբորդութիւնները, կամ տարեց ծնողի հոգատար ըլլալը, նոյն նպատակն է - Փառաբանէ՛ Քրիստոսի ամէն կերպ: Երբ մենք կ'աղօթենք եւ կը կարդանք Աստուածաշունչը, Աստուած կ'օգնէ մեզի ապրելու նուիրուած հնազանդութեամբ եւ պահել մեր առօրեայ կեանքը շիտակ ճամբուն մէջ՝ յարգելու Յիսուսի այն ամէն բանի մէջ, ինչ որ կ'ըսենք եւ կ'ընենք:

Աղօթք - Հայր, կը խնդրեմ, օգնէ ինձի այսօր պատուել Զեզ: Ամէն: **Դժուար է կարք մը արդիւնքներ ձգել Աստուծոյ հետ, սակայն հարկաւոր է վստահիլ Անոր ծրագիրին եւ անով պատուել Բրիստոսի:**

Քու հոգի ձգե՛՛ր՝ Տերոջ վրայ, եւ ան քեզի նեցուկ պիտի ըլլայ:
[Սաղմ. 55. 22]

ԴԻՐ ԶԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՓՍԷԻՆ ՎՐԱՅ

Տարիներ շարունակ, մայր մը աղօթեց՝ մինչ ան կ'օգնէր իր չափահաս աղջկան քննելու առողջապահական համակարգին մէջ եւ գտնելու խորհրդատուութիւն եւ լաւագոյն դեղամիջոցները: Անոր ծայրահեղ վերիվայրումները օրէ օր կը ծանրանային՝ մօր սիրտին վրայ: Յաճախ տխրութենէն հիւժոռած՝ ան կը հասկնար, որ պէտք է նաեւ հոգ տանէր ինքն իրեն համար ալ: Ընկերուհիներէն մէկը՝ առաջարկեց գրել իր մտահոգութիւնները եւ այն ինչ որ ինք չէր կրնար կառավարել, փոքրիկ թուղթի մը վրայ եւ դնել «Աստուծոյ ափսէին» վրայ իր մահճակալին մօտ: Այս պարզ սովորութիւնը, բնականաբար չի վերցուց բոլոր ճնշումները, բայց այդ ափսէն տեսնելը, կը յիշեցնէ անոր, որ այդ մտահոգութիւնները Աստուծոյ ամփսէին մէջ են եւ ո՛չ թէ իր մէջ:

Զեւով մը Դաւիթի Սաղմոսներուն մեծ մասը՝ անոր հոգերը թուարկելու եւ Աստուծոյ ափսէին վրայ դնելու ձեւն էին (Սաղմ. 55. 1, 16-17): Եթէ նկարագրուածը իր որդիին՝ Աբիսողոմի յեղաշրջումի փորձն է, ապա Դաւիթի «մտերիմ ընկեր» Աբիտոփել իսկապէս դաւաճանած էր եւ ներգրաւած էր զինք սպաննելու դաւադրութեան մէջ (Բ. Թագ. 15-16): Այսպէս, «իրիկունը, առտուն եւ կէսօրին (Դաւիթ) գանգատեցաւ ու հառաչեց» եւ Աստուած լսեց իր աղօթքը (Սաղմ. 55. 1-2, 16-17): Ան ընտրեց «իր հոգը ձգել Տէրոջ վրայ» եւ զգաց Անոր հոգատարութիւնը (Հմ. 22):

Մենք կրնանք հաւաստիօրէն ընդունիլ, որ անհանգստութիւնները եւ վախերը, կ'ազգեն մեր բոլորին վրայ: Նոյնիսկ կարելի է, որ մենք Դաւիթի նման մտքեր ունենանք. «Երանի՛ թէ ազաւնիի նման թեւեր ունենայի, որպէսզի թռչէի ու հանգչէի» (Հմ. 6): Աստուած մօտ է եւ մի՛ակն է, որ կրնայ փոխել մեր իրավիճակը: Դի՛ր ամէն բան Անոր ափսէին վրայ:

Աղօթք - Սիրելի Յայր, յաճախ մտահոգութիւններ ունիմ՝ սիրտիս մէջ: Այդ բոլորը կը յանձնեմ քեզի. կը պարպեմ ափսես ու կը դնեմ քու ափսէիդ վրայ: Ամեն:
Ո՞ր ես քո՛ւ մտահոգութիւներդ. քո՛ւ ափսէի՞դ վրայ՝ թէ Աստուծոյ ափսէին: Ի՞նչ բան կ'ուզես յանձնել Անոր:



Եթե վերադառնաս, ո՛վ Իսրայել,- կը պատգամե Տերը,- Ինծի՛ վերադարձիր: [Եր. 4. 1]

ԱՊԱՇԽԱՐԱԾ ՍԻՐՏ ՄԸ

Ընկեր մը՝ խախտած էր իր ամուսնութեան ուխտը: Ցաւալի էր տեսնել, թէ ինչպէս ան կը քանդէր իր ընտանիքը: Երբ ան հաշտութիւն կ'ուզէր իր կնոջ հետ, հարցունց խորհուրդս: Ես ըսի, որ պէտք է աւելին ընէ՝ քան թէ միայն խօսքեր ըսէ: Պէտք է նախաձեռնող ըլլայ՝ իր կինը սիրելու եւ մեղքի որեւէ օրինակ հեռացնել:

Երեմիա մարդարէն նմանատիպ խորհուրդ տուաւ անոնց, որոնք խախտած էին Աստուծոյ հետ իրենց ուխտը եւ հետեւած այլ աստուածներու: Բաւարար չէ՛ր Անոր վերադառնալը (Եր. 4. 1), թէեւ ճիշդ սկիզբն էր: Անոնք պէտք էր իրենց գործերը համապատասխանէին իրենց ըսածներուն: Այդ կը նշանակէր ազատուիլ իրենց «պղծութիւններէն» ու գարշելի կուռքերէն (Հմ. 1): Երեմիա ըսաւ, որ եթէ անոնք խոստումներ ընեն «ճշմարտութեամբ, իրաւունքով եւ արդարութեամբ», ապա Աստուած կ'օրհնէ ազգերը (Հմ. 2): Հարցը այն էր, որ ժողովուրդը դատարկ խոստումներ կ'ընէր: Անոնց սիրտը անոր մէջը չէր:

Աստուած՝ պարզապէս խօսքեր չուզէր. Ան կ'ուզէ մեր սիրտերը: Ինչպէս Յիսուս ըսաւ. «Բերանը կը խօսի սիրտի լիութենէն» (Մատթ. 12. 34): Ահա՛ թէ ինչո՞ւ Երեմիան կը շարունակէ քաջալերել անոնց, որոնք կը լսեն որ մշակեն իրենց սիրտին խոպան հողը եւ չի սերմանեն փուշերու մէջ (Եր. 4. 3):

Դժբախտաբար՝ ինչպէս շատ մարդիկ, ընկերս ալ չի լսեց աստուածաշնչային խորհուրդը եւ հետեւաբար՝ կորսնցունց իր ամուսնութիւնը: Երբ մենք մեղք կը գործենք, մենք պէտք է խոստովանինք եւ ետ դառնանք անկէ: Աստուած՝ դատարկ խոստումներ չուզէր. Ան կը ցանկայ կեանք, որ իսկապէս կը համապատասխանէ Իրեն:

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ, Ներե ինծի՛ երբ իմ գործերս համապատասխան չեն իմ հաւատացածիս: Ամէն:

Քննե՛նք ու տեսնե՛նք թէ մեր կեանքի ո՞ր մարզին մէջ մեր խօսքերը համապատասխան չեն մեր գործերուն: Ի՞նչ բան փոխելու ենք՝ շտկելու համար:



Հիմա Աստուծոյ ժողովուրդն էք: [Ա. Պետ. 2. 10]

ՆՈՐՈՎԻ ՔԱԼԵԼ

Մափաճարութիւններ հնչեցին, երբ դպրոցի մը լաւագոյն աշակերտները ստացան գերազանցութեան վկայականներ՝ իրենց ակադեմիական նուաճումներուն համար: Բայց ծրագիրը աւարտած չէր: Յաջորդ մրցանակը՝ պարգեւեց այն աշակերտներուն, որոնք դպրոցի «լաւագոյնները» չէին, այլ՝ ամենէն աւելի բարելաւում արձանագրողներն էին: Անոնք ջանասիրութեամբ աշխատած էին բարձրացնելու իրենց ձախող նիշերը, շտկելու խանգարիչ վարքագիծը կամ աւելի յաճախակի ներկայութեան համար: Անոնց ծնողները մեծ հաճոյքով կը ծափահարէին՝ տեսնելով իրենց երեխաներուն շրջադարձը աւելի բարձր ճանապարհի. ո՛չ թէ իրենց անցեալին արձանագրած թերութիւնները, այլ նոր ճանապարհով ընթանալը:

Սիրտ ոգեշնչող տեսարանը՝ կը ներկայացնէր փոքրիկ պատկեր մը, թէ ինչպէս մեր Երկնաւոր Հայրը կը տեսնէ մեզ, ո՛չ թէ մեր հին կեանքին մէջ, այլ այժմ՝ Քրիստոսի մէջ, որպէս իր զաւակները: Յովհաննէս գրեց. «Բայց անոնց՝ որ ընդունեցին զինք - անոնց՝ որ կը հաւատան իր անունին - իրաւասութիւն տուաւ Աստուծոյ զաւակներ ըլլալու» (Յովհ. 1. 12): Ինչպիսի՞ սիրառատ տեսարան մը: Պօղոս յիշեցուց նոր հաւատացեալներուն, որ անգամ մը «մեռած էիք յանցանքներու եւ մեղքերու մէջ, բայց ինք ձեզ ապրեցուց» (Եփ. 2. 1): Բայց իրականութեան մէջ «մենք անոր ձեռակերտն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար. Աստուած նախապէս պատրաստեց զանոնք, որպէսզի մենք ընթանանք անոնց մէջ» (Հմ. 10):

Պետրոս գրեց, մենք «ընտրուած ցեղ մըն ենք, թագաւորական քահանայութիւն մը, սուրբ ազգ մը, սեփական ժողովուրդ մը, որպէսզի հռչակենք առաքինութիւնները անո՛ր՝ որ կանչեց մեզ խաւարէն իր սքանչելի լոյսին» եւ մենք հիմա «Աստուծոյ ժողովուրդն ենք» (Ա. Պետ. 2. 9-10): Եկէ՛ք մենք զմեզ տեսնենք այնպէ՛ս, ինչպէս Աստուած կը տեսնէ եւ նորովի քալենք:

Աղօթք - Սիրելի Հայր, այս նոր օրուան մէջ՝ կը խնդրեմ ներշնչէ զիս՝ ինչպէս որ Դուս կը տեսնես զիս: Ամէն:

Ինչպէ՞ս Աստուած կը տեսնէ քեզ: Իր մէջ ինչպէ՞ս պետք է քալես:



Որովհետեւ մենք Աստուծոյ գործակից ենք. դուք Աստուծոյ մշակութիւնն էք, Աստուծոյ շինուածքն էք: [Ա. Կորնթ. 3. 9]

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

29 Յունիս 1955-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգները յայտարարեց՝ տիեզերքին մէջ արբանեակներ տեղակայելու մտադրութեան մասին: Շուտով Խորհրդային Միութիւնը՝ յայտարարեց նոյնը ընելու՝ իր ծրագրին մասին: Տիեզերեկան մրցումը սկսած էր: Սովետականները՝ արձակեցին առաջին արբանեակը՝ «Սբութնիք» (Sputnic) եւ տիեզերքին մէջ տեղադրեցին առաջին մարդը, երբ Եուրի Կակարին (Yuri Gagarin) մէկ անգամ շրջեցաւ մեր մոլորակին շուրջ: Մրցումը շարունակուեցաւ մինչեւ 20 Յունիս 1969 թուականը, երբ Նիլ Արմսթրոնգի (Neil Armstrong) «մարդկութեան համար հսկայ ուսումը» լուսնի մակերեսին վրայ անպաշտօն աւարտեց մրցումը: Շուտով սկսաւ համագործակցութեան եղանակ մը, որը հանգեցուց Միջազգային Տիեզերեկան Կայանի ստեղծումին:

Երբեմն՝ մրցակցութիւնը կրնայ առողջ ըլլալ՝ մղելով մեզ հասնելու այնպիսի բաներու, որոնք հակառակ պարագային մենք պիտի չի փորձէինք: Ուրիշ ատեն, սակայն, մրցակցութիւնը կործանարար է: Սա՞ հարց էր Կորնթոսի եկեղեցիին մէջ, քանի որ տարբեր խումբեր՝ կը կապուէին եկեղեցիի տարբեր առաջնորդներու հետ՝ որպէս յոյսի փարոս: Պօղոս փորձեց անդրադառնալ ասոր, երբ գրեց. «Ո՛չ տնկողը բա՛ն մըն է, եւ ո՛չ ջրողը, հապա Աստուած՝ որ աճեցուց» (Ա. Կորնթ. 3. 7)՝ ապա եզրափակելով ան գրեց «մենք Աստուծոյ գործակից ենք» (Հմ. 9):

Գործընկերներ, ո՛չ թէ մրցակիցներ: Եւ ո՛չ միայն իրարու հետ, այլ Աստուծոյ հետ: Անոր զօրացման եւ առաջնորդութեան միջոցով՝ մենք կրնանք միասին ծառայել, որպէս գործակիցներ՝ առաջ տանելու Յիսուսի պատգամը, իր փառքին համար ու ո՛չ թէ մեր:

Աղօթք - Սիրող Աստուած՝, շնորհակալ եմ քեզի ծառայելու արտօնութեան համար: Կը խնդրեմ, սորվեցո՛ւր՝ պատուել քեզ եւ աշխատիլ ուրիշներուն օգնելու համար: Ամեն:

Մրցակցութիւնը՝ վատառողջ է մեր հոգեւոր կեանքին համար, ուստի գործակցի՛նք եւ խոնարհաբար ծառայենք ուրիշներու:

Տերը՝ ... գիտե թե դուն այս մեծ անապատին մէջ կը քալես.
քեզի հետ էր եւ ոչինչ պակսեցաւ քեզի: [Ք. Օր. 2. 7]

ԱՆԱՊԱՏ ՏԵՂԵՐ

Երբ երիտասարդ հաւատացեալ էի, կարծեցի՝ թէ «լերան գագաթի» փորձառութիւնները այն տեղն էին, ուր ես պիտի հանդիպէի Յիսուսի: Բայց այդ բարձունքները հազուադէպ կը տեւէին կամ կ'առաջնորդէին աճումի: Հեղինակ Լինա Ապու Ճամրա (Lina AbuJamra) կ'ըսէ, որ անապատային վայրերու մէջ՝ մենք կը հանդիպինք Աստուծոյ եւ կ'աճինք: Անապատի Միջով իր Աստուածաշունչի ուսումնասիրութեան մէջ ան կը գրէ. «Աստուծոյ նպատակն է՝ օգտագործել անապատային վայրերը՝ մեր կեանքի մէջ՝ մեզ աւելի ուժեղ դարձնելու համար»: Ան կը շարունակէ. «Աստուծոյ բարութիւնը նախատեսուած է ընդունելու ցաւիդ մէջ, ո՛չ թէ ապացուցուած ցաւի բացակայութեան»:

Վիշտի, կորուստի եւ ցաւի ծանր վայրերուն մէջ է, որ Աստուած կ'օգնէ մեզի աճելու մեր հաւատքին մէջ եւ աւելի մօտ ըլլալու Իրեն: Ինչպէս Լինան սորվեցաւ, «Անապատը՝ Աստուծոյ ծրագիրին մէջ՝ հակողութիւն չէ, այլ մեր ածման գործընթացի անբաժանելի մասը»:

Աստուած՝ Հին Կտակարանի նահապետներէն շատերը առաջնորդեց դէպի անապատ: Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ, բոլորն ալ ունեցան իրենց անապատի փորձառութիւնը: Անապատին մէջ էր, որ Աստուած պատրաստեց Մովսէսի սիրտը եւ կանչեց անոր հանելու իր ժողովուրդը Եգիպտոսի ստրկութենէն (Ել. 3. 1-2, 9-10): Եւ անապատին մէջ էր, որ Աստուած իր օգնութեամբ եւ առաջնորդութեամբ քառասուն տարի «անոնց հետ էր եւ ոչինչ պակսեցաւ անոնց» (Ք. Օր. 2. 7):

Աստուած Մովսէսի եւ Իսրայէլացիներուն հետ էր անապատին մէջ՝ ամէն քայլափոխին. եւ Ան քեզի եւ ինծի հետ՝ է մեր ճանապարհին մէջ: Անապատին մէջ մենք կը սորվինք Աստուծոյ ապաւինիլ: Հոն Ան մեզի կը հանդիպի եւ հոն մենք կ'աճինք:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ ինծի հետ ես՝ իմ կեանքիս դժուար անապատին մէջ: Դուսն հաւատարիմ ու կարեկից Աստուած ես: Ամէն:

**Երբ Աստուած կը հանդիպի մեզի ամայի անապատին մէջ,
արդիւնքը կ'ըլլայ՝ օրհնութիւն եւ աճում:**



Անոնք աշխարհէն չեն, ինչպէս ես աշխարհէն չեմ: [Յովհ. 17. 16]

ԱԻԵԼԻ ՇԱՏ ՆՄԱՆԻԼ ՅԻՍՈՒՍԻ

Աստուած ստեղծեց մեծ մոխրագոյն բուն՝ որպէս քօղարկումի վարպետ: Անոր արծաթեայ մոխրագոյն փետուրները ունին գունազարդումի հաւաքական նախշ մը, որ թոյլ կուտայ խառնուելու ծառին կեղեւին, երբ նստի անոր վրայ: Երբ բուերը կը ձեւանան անտեսանելի մնալ, կը սքօղուին մեր տեսադաշտէն, միախառնուելով իրենց միջավայրին՝ իրենց փետրաւոր քօղարկման օգնութեամբ:

Աստուծոյ ժողովուրդը յաճախ նման է մեծ մոխրագոյն բուին: Մենք դիւրութեամբ կրնանք միաձուլուիլ աշխարհին եւ մնալ անճանաչելի՝ որպէս Քրիստոսի հաւատացեալ, դիտաւորեալ կամ ակամայ: Յիսուս աղօթեց իր աշակերտներուն համար՝ անոնց համար, որոնք Հայրը տուաւ իրեն «աշխարհէն» ու «հնազանդեցան՝ իր խօսքին (Յովհ. 17. 6): Որդի Աստուածը՝ խնդրեց Հայր Աստուծոյ պաշտպանել եւ զօրացնել անոնց, որ ապրին սրբութեան եւ յարատեւ ուրախութեան մէջ՝ աշխարհը իր ձգելէն ետք (Հմ. 7-13): Ան ըսաւ. «Ձեմ թախանձեր որ վերցնես զանոնք աշխարհէն, հապա՛ որ պահես զանոնք չարէն» (Հմ. 15): Յիսուս գիտէր, որ իր աշակերտները պէտք է սուրբ ըլլային եւ առանձնանային, որպէսզի կարենան իրականացնել այն նպատակը, որ ինք տուած էր (Հմ. 16-19):

Սուրբ Հոգին կրնայ օգնել մեզի՝ ետ կենալու աշխարհի միաձուլուող քօղարկման վարպետ դառնալու փորձութենէն: Երբ մենք ամէն օր կը հնազանդինք իրեն, մենք կրնանք աւելի շատ նմանիլ Յիսուսի: Երբ մենք կ'ապրինք միասնութեան եւ սիրոյ մէջ, Ան կը քաջէ ուրիշներ Քրիստոսի՝ իր բոլոր փառքով:

Աղօթք - Սուրբ Հոգի, կը խնդրե՛մ, զիս այնքան շատ նմանցուր Յիսուսի, որ ուրիշներ փափաքին փնտռել՝ միակ ճշմարիտ Աստուածը: Ամէն:

Խնդրե՛ Աստուծմէ, որ քեզ շատ աւելի նմանցնէ Յիսուսի, ինչպէս որ ուրիշներ գործածած է՝ քեզ աւելի մօտեցնելու Յիսուսի նման ապրելու եւ սիրելու համար:



Աբրահամ հարիւր տարեկան էր, երբ իր որդին՝ Իսահակը ծնաւ իրեն: [Ծն. 21. 25]

Կ'ԱՐԺԷ ՍՊԱՍԵԼԸ

Խօսի՛նք՝ սպասումի մասին: Ֆիլ Սթրինգլը՝ (*Phil Stringer*) սպասեց տասն ութ ժամ՝ ամպրոպի պատճառով ուշացած թռիչքը առնելու համար: Սակայն անոր համբերութիւնը լաւ արդիւնք տուաւ: Ան ո՛չ միայն կրցաւ թռչիլ դէպի իր նպատակակէտը եւ ժամանակին հասնելու կարեւոր հանդիպումներու, այլ միակ ճամբորդն էր՝ այդ թռիչքին վրայ: Իսկ մնացեալ բոլոր ճամբորդները՝ տեղի տուին կամ այլ միջոցներու դիմեցին: Սպասարկողները՝ իրեն կու տային իր բոլոր ուզած սննդամթերքները, ինչ որ ինք կը ցանկար ունենալ: Սթրինգլըր աւելցուց. «Ես, ի հարկէ, նստեցայ առաջին շարքին: Ինչո՞ւ ո՛չ, երբ ամբողջ սաւառնակը քեզի համար է»: Արդիւնքին համար՝ կ'արժէր սպասելը:

Աբրահամ ալ համբերեց, ինչ որ պէտք էր թուած ըլլար՝ երկար ուշացում: Անցեալին երբ ան ծանօթ էր որպէս Աբրամ, Աստուած ըսաւ անոր, որ զինք պիտի ընէ «մեծ ազգ» եւ «քեզ օրհնողները պիտի օրհնեմ» (Ծնն 12. 2-3): Սակայն եօթանասուն հինգ տարեկան մարդու մը համար՝ մէ՛կ հարց կար (հմ. 4). ինչպէ՞ս կարելի էր մեծ ազգ դառնալ առանց ժառանգորդի: Թէեւ անոր սպասումը՝ զինք անհամբեր դարձուց (ինք եւ իր կինը՝ Սարա կը փորձէին «օգնել» Աստուծոյ՝ իր տուած խոստումը կատարելու սխալ գաղափարներով - տես 15. 2-3, 16. 1-2), երբ ան «Հարիւր տարեկան էր ... Իսահակ ծնաւ» (21. 5): Իր հաւատքը յետագային նշուեցաւ Եբրայեցիս նամակին հեղինակին կողմէ (11. 8-12):

Սպասելը կրնայ դժուար ըլլալ: Եւ, Աբրահամի նման, մենք կրնանք այդ կատարելապէս չընել: Բայց մինչ մենք կ'աղօթենք եւ կը հանգստանանք Աստուծոյ ծրագիրներուն մէջ, թող Ան օգնէ մեզի, որ համբերենք: Իր մէջ, կ'արժէ միշտ սպասել:

Աղօթք - Միրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի որ սպասեմ եւ յարատեւեմ Զու մէջդ: Ամէն:

Երբ կը սպասենք, վստահ ու հանգիստ ըլլանք Աստուծոյ զօրութեան մէջ:



Բարութիւնս փնտռեցեք, ո՛չ թէ չարութիւն, որպեսզի ապրիք:
[Ամ. 5. 14]

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾ

Դեռահաս տարիքին, Ռայըն (Ryan) կորսնցուց իր մայրը՝ քաղցկեղի պատճառով: Ան ինքզինք գտաւ անտուն եւ շուտով ձգեց դպրոցը: Ան յուսահատեցաւ եւ յաճախ անօթի մնաց: Տարիներ ետք, Ռայըն հիմնեց ոչ-հասուլթաբեր կազմակերպութիւն մը, որ հնարաւորութիւն կու տար ուրիշներուն, յատկապէս երեխաներուն, ցանել, քաղել եւ պատրաստել իրենց սեփական այգիին մէջ աճած սնունդը: Կազմակերպութիւնը կարուցուած է այն համոզմունքին վրայ, որ ո՛չ ոք պէտք է մնայ առանց սնունդի եւ անոնք, որոնք բան մը ունին, պէտք է հոգատար ըլլան անոնց, որոնք չունին: Ուրիշներու հանդէպ Ռայընի մտահոգութիւնը կ'արձագանգուի Աստուծոյ սիրտին՝ արդարութեան եւ ողորմութեան համար:

Աստուած խորապէս կը հոգայ մեր դիմագրաւած ցաւին եւ տառապանքին մասին: Երբ Ան նկատեց սոսկալի անարդարութիւնը Իսրայէլի մէջ, Ան ղրկեց Ամովս մարգարէն՝ անոնց կեղծաւորութիւնը յայտարարելու: Մարգիկ, որոնք Աստուած ժամանակին փրկած էր Եգիպտոսի ճնշումներէն, այժմ իրենց հարեւանները ստրկութեան կը վաճառէին զոյգ մը կօշիկի պատճառով (Ամ. 2. 6): Անոնք դաւաճանեցին անմեղ մարդոց, մերժեցին արդարութիւնը՝ ճնշուածներուն հանդէպ եւ կը տենչան երկրի հողը տեսնել «չքաւորին գլուխին վրայ» (Հմ. 6-7), այս ամէնը՝ միաժամանակ ձեւացնելով, թէ կ'երկրպագեն Աստուծոյ ընծաներով եւ սուրբ օրերով (4. 4-5): Ամովս աղաչեց «Բարութիւնս փնտռեցէք, ո՛չ թէ չարութիւն, որպէսզի ապրիք. այսպիսի Տէրը՝ զօրքերու Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ, ինչպէս ըսիք» (5. 14): Ռայընի նման, բոլորս ալ բաւական ցաւ ու անարդարութիւն զգացած ենք, որպէսզի կարենանք յարաբերիլ ուրիշներու հետ եւ օգնել անոնց: Ժամանակը հասած է «բարութիւն փնտռելու» եւ իրեն միանալու՝ ամէն տեսակի արդարութիւն ցանելու համար:

Աղօթք - Արդարութեան Աստուած, շնորհակալ եմ Թեզի, որ աչքերդ չես փակեր մեր աշխարհի ցաւին ու տառապանքին: Ամեն: **Եթէ կը տեսնենք ուրիշներու կրած անարդարութիւնը, պատրաստ ըլլանք օգնելու անոնց**

Տէրը անոր ըսաւ. «Այդ ձեռքիդ ի՞նչ է»: Ան ալ ըսաւ.
«Գաւազան»: [Ել. 4. 2]

Ի՞ՆՉ ԿԱ՛Յ ՁԵՌՔԻԴ ՄԷՁ

Մի քանի տարիներ ետք, երբ ես փրկութիւն ստացայ եւ կեանքս նուիրեցի Աստուծոյ, զգացի թէ Ան կը մղէ զիս ձգելու իմ լրագրողի ասպարէզս: Երբ վար դրի գրիչս, գրելու կարողութիւնս թաքնուեցաւ, սակայն կը զգայի թէ օր մը Աստուած ետ կը կանչէ զիս՝ գրելու իր փառքին համար: Իմ անձնական անապատիս մէջ՝ թափառելու տարիներու ընթացքին, զիս քաջալերեց Մովսէսի եւ անոր գաւազանին պատմութիւնը, որ անձանագրուած է Ելից 4-ին մէջ:

Մովսէս, որ մեծցած էր Փարաւոնի պալատին մէջ եւ ունէր խոստումնալից պապայ, փախա՛ւ Եգիպտոսէն ու կ'ապրէր անյայտութեան մէջ որպէս հովիւ, երբ Աստուած կանչեց զինք: Մովսէս պէտք էր խորհէր՝ թէ ոչինչ ունէր տալիք Աստուծոյ, բայց ան իմացաւ, որ Ան կրնայ գործածել ոեւէ մէկը կամ որեւէ բան իր փառքին համար:

Տէրը անոր ըսաւ. «Այդ ձեռքիդ ի՞նչ է»: Ան ալ ըսաւ. «Գաւազան»: Աստուած ըսաւ. «Գետի՛ն ձգէ զայն» (Ել. 4. 2-3): Մովսէսի սովորական գաւազանը դարձաւ օձ: Երբ ան բռնեց օձին, Աստուած զայն ետ դարձուց գաւազանի: Այս նշանը տրուեցաւ, որպէսզի Իսրայէլացիները «հաւատան, որ Տէրը իրենց հայրերուն Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը, երեւցաւ իրեն» (Հմ. 3-4): Ինչպէս Մովսէս վար ձգեց իր գաւազանը եւ դարձեալ ետ ձեռքը առաւ, ես ալ ձգեցի լրագրողի իմ ասպարէզս հնազանդելով Աստուծոյ: Աւելի ուշ՝ Ան առաջնորդեց զիս դարձեալ վերցնելու գրիչս. եւ հիմա ես կը գրեմ՝ Իրեն համար:

Մեզի շատ բան պէտք չէ՛ Աստուծոյ կողմէ օգտագործուելու համար: Մենք կրնանք պարզապէս ծառայել Իրեն՝ այն տաղանդներով, որոնք ինք տուած է մեզի: Չե՞ս գիտեր ուրկէ սկսիլ: Ի՞նչ կայ ձեռքիդ մէջ:

Աղօթք - Հայր Աստուած, կը խնդրե՛մ, օգնե՛ ինձի օգտագործելու կեանքս՝ Թեզ պատուելու համար: Ամէն:
Աստուած մեզմէ իւրաքանչիւրին տուած է տաղանդ մը. օգտագործե՛նք զայն՝ ուրիշ մէկը օրհնելու համար:

Խորագետը չարիքը կը տեսնէ եւ կը զգուշանայ, բայց միամիտները կ'անտեսեն ու կը պատժուին: [Առ. 22. 3]

ԻՄԱՍՏՈՒՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Տեսարանը սրտաճմլիկ էր: Յիսուս Հինգ կէտձուկերու խումբ մը իրենք զիրենք գտան անօգնական՝ Սկովտիական ծովափին: Կամաւորներ փորձեցին փրկել զանոնք, սակայն անոնք ի վերջոյ մեռան: Ո՛չ մէկը գիտէ՝ թէ ինչու նմանօրինակ զանգուածային աղէտներ կը պատահին, բայց այդ կրնայ պայմանաւորուած ըլլալ՝ կէտձուկերու ամուր ընկերային կապերէն: Երբ մէկը դժուարութեան մէջ իյնայ, մնացածը օգնութեան կու գան. հոգատարութեան բնազդ, որ կրնայ վնաս հասցնել:

Աստուածաշունչը յատակ կոչ կ'ընէ մեզի՝ օգնելու ուրիշներուն, բայց նաեւ իմաստուն ըլլալու, թէ ինչպէ՛ս այդ օգնութիւնը կ'ընենք: Օրինակ, երբ կ'օգնենք վերականգնելու մէկը, որ բռնուած է մեղքի մէջ, մենք պէտք է զգուշ ըլլանք, որ մենք ալ փորձուելով՝ չմտնենք այդ մեղքին մէջ (Գաղ. 6. 1). եւ մինչ պէտք է սիրենք մեր շուրջիները, պէտք է սիրենք մեր անձին պէս (Մատթ. 22. 39): Առակաց 22. 3-ը կ'ըսէ. «Խորագետը չարիքը կը տեսնէ եւ կը զգուշանայ, բայց միամիտները կ'անտեսեն ու կը պատժուին»: Սա՛ լաւ յիշեցում մըն է, երբ ուրիշներուն օգնելը՝ կը սկսի վնասել մեզի:

Մի քանի տարի առաջ՝ երկու շատ կարիքաւոր մարդիկ՝ սկսան յաճախել մեր եկեղեցին: Շուտով՝ եկեղեցիի հոգատար անդամներ սկսան սպառիլ անոնց աղբսրին պատասխան տալու համար: Լուծումը՝ զոյգին հեռացնելը չէր, այլ սահմաններ դնելը, որպէսզի օգնականները չվնասուին: Տէր Յիսուս, գերագոյն օգնականը, ժամանակ տրամադրեց հանգստանալու (Մարկ. 4. 38) եւ վստահեցուց իր աշակերտներուն՝ որ անոնց կարիքները չի փոխարինուին ուրշներու կարիքներով (6. 31): Իմաստուն հոգատարութիւնը կը հետեւի Անոր օրինակին: Ուշադիր ըլլալով մեր սեփական առողջութեան՝ մենք աւելի հոգատարութիւն կրնանք տալ՝ աւելի երկար ժամանակի վրայ:

Աղօթք - Սուրբ Հոգի, կը խնդրեմ, զօրացո՛ւր զիս՝ ծառայելու ուրիշներուն՝ առողջ եւ կայուն կերպով: Ամէն:

Մենք հանգիստի ու կազդուրման կարիքը ունինք, որպէսզի աւելի երկար ժամանակով կարենանք ծառայել ուրիշներու:

Գայլն ու գառը միասին պիտի արածին: [Ես. 65. 25]

ԵՐԲ ՀԱԻՍԱԼԸ՝ ՏԵՍՆԵԼ Է

«Ձեմ կրնար հաւատալ՝ այն ինչ որ կը տեսնեմ»: Կինս՝ Գարի (Cari), կանչեց զիս պատուհանին մօտ եւ ցոյց տուաւ մեծահասակ եղնիկ մը, մեր ցանկապատի դուրսի կողմը գտնուող՝ բակին մէկ ծայռէն՝ միւսը երկարող անտառին մէջ: Յանկապատին ներսի կողմը՝ անոր կողքին կը քալէին մեր մեծ շուները, բայց չէին հաջեր: Մօտ մէկ ժամ, անոնք ետ ու առաջ գացին: Երբ եղնիկը կանգ առաւ, շուները նոյնպէս կանգ առին՝ շտկելով իրենց առջեւի ոտքերը եւ ետ ծռելով իրենց ետեւի երանքներուն վրայ, կը պատրաստուէին դարձեալ վազելու: Սա՞ գիշատիչի եւ որսի վարուելակերպ մը չէ՞ր. եղնիկն ու շուները կը խաղային միասին՝ վայելելով իրենց ընկերակցութիւնը:

Գարիին եւ ինծի համար, անոնց առտուան զբօսանքը, ցոյց տուաւ Աստուծոյ գալիք թագաւորութեան պատկերը: Եսայի մարգարէն՝ կը հռչակէ այդ թագաւորութեան մասին Աստուծոյ խոստումը՝ հետեւեալ խօսքերով. «Արդարեւ ահա՛ ես նոր երկինք մը ու նոր երկիր մը պիտի ստեղծեմ» (Ես. 65. 17): Ան կը շարունակէ ըսել, որ «գայլն ու գառը միասին պիտի արածին, առիւծը առջարի պէս յարգ պիտի ուտէ» (Հմ. 25): Այլեւս ո՛չ գիշատիչ, ո՛չ ալ աւար: Միայն ընկերներ:

Եսայի մարգարէին խօսքերը կարծես ցոյց կու տան մեզի, որ Աստուծոյ յաւիտենական թագաւորութեան մէջ պիտի ըլլան կենդանիներ, որոնք նոյնպէս կը մատնանշեն, թէ ի՞նչ կը պատրաստէ Աստուած իր ստեղծագործութեան ու յատկապէս «զինք սիրողներուն համար» (Ա. Կորնթ. 2. 9): Ի՛նչ գեղեցիկ տեղ մը պիտի ըլլայ՝ այդ տեղ: Երբ հաւատքով կը վստահինք Աստուծոյ, Ան մեր հայեացքը կ'ուղղէ դէպի այն իրականութիւնը, որ կու գայ. խաղաղութիւն եւ անվտանգութիւն իր ներկայութեան մէջ յաւիտեան:

Աղօթք - Սիրելի Հայր, շնորհակալ եմ՝ ամէս լաւ բանի համար, որ կու գայ: Կը խնդրեմ, օգնե՛ ինծի այսօր Զեզ սպասելու: Ամէն:
Ամենն աւելի՛ ի՛նչ բանի կը սպասես Աստուծոյ արքայութեան վերաբերեալ: Ուրո՞ւ հետ կրնաս բաժնեկցի՞լ քու յոյսդ՝ այսօր:

Բոլոր հաւատացեալները միասին էին, եւ բոլոր բաները հասարակաց էին: [Գործք 2. 44]

ԽՈՆԱՐՅԱԲԱՐ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՎ

Երբ խնճոյքի օրը կը մօտենար, կինս ու ես սկսանք ծրագրել: Քանի շատ մարդիկ պիտի գային, պէ՞տք էր վճարում ընէինք ճաշը հայթայթողին որպէսզի պատրաստէ: Եթէ մենք ընէինք պատրաստութիւնը, խորովածի կրակարան գնելու էի՞նք: Անձրեւ գալու պարագային՝ վրան ալ պէտք էր գնէի՞նք: Շուտով մեր խնճոյքը սկսաւ սուղ արժել եւ նոյնիսկ ո՛չ ընկերային: Փորձելով ապահովել ամէն ինչ մենք մեզի, դուրս կը ձգէինք ուրիշներու օգնութիւնը ստանալու հնարաւորութիւնը:

Համայնքի մասին Աստուածաշունչի տեսլականը, թէ՛ տալ է եւ թէ՛ ալ ստանալ: Նոյնիսկ անկումէն առաջ՝ Ադամ օգնութեան պէտք ունէր (Ծնն. 2. 18), եւ մենք կանչուած ենք ուրիշներու խորհուրդը փնտռելու (Առ. 15. 22) եւ բաժնելու մեր բեռը ուրիշներու հետ (Գաղ. 6. 2): Առաջին դարու եկեղեցին ունէր «բոլոր բաները հասարակաց» սեպելու սովորութիւնը եւ օգտուելով ուրիշներու ունեցած «կալուածներէն եւ ունեցածներէն» (Գործք 2. 44-45): Անկախ ապրելու փոխարէն՝ անոնք իրարմէ կախեալ ըլլալու գեղեցիկ սովորութեան համաձայն, կը բաժնեկցէին տալով եւ ստանալով:

Այն եզերակացութեան հազեցանք, որ եկող հիւրերէն խնդրենք բերել՝ աղցան մը կամ անուշեղէն մը: Մեր դրացիները՝ իրենց խորովածի կրակարանը բերին եւ ընկեր մը բերաւ իր վրանը: Օգնութեան խնդրանքը մեզի հնարաւորութիւնը տուաւ աւելի սերտ յարաբերութիւններ մշակելու, իսկ մարդոց պատարաստած սնունդը՝ բերաւ բազմաթիւ տեսակի ուտելիք եւ հաճոյք: Մերինին նման դարաշրջանի մը մէջ՝ ինքնաբաւ ըլլալը, կրնայ հպարտութեան աղբիւր ըլլալ: Բայց Աստուած կու տայ «խոնարհներուն»՝ Իր շնորհքը (Յակ. 4. 6), մէջը ըլլալով անոնք, որոնք խոնարհաբար օգնութիւն կը խնդրեն:

Աղօթք - Աստուած, փառք Զեզի, որ մեզ փոխյարաբերող արարածներու կը դարձնես: Օգնէ՛ ինձի՝ ապրելու խոնարհ, բաժնեկցելով՝ թէ՛ հարստութիւնս եւ թէ՛ ալ կարիքներս: Ամէն: **Ի՞նչ բան կը խանգարէ քեզ՝ օգնութիւն խնդրելէ: Ի՞նչ բան անհրաժեշտ է քեզի՝ այս պահին, որ գնելու փոխարէն՝ կրնաս փոխ առնել:**



Ո՛վ Տէր, լսե՛ իմ աղօթքս եւ ունկնդրե՛ աղաղակիս. լուռ մի՛ կենար արցունքերուս առջեւ: [Սաղմ. 39. 12]

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԼՍԷ ՄԵՉ

Առաջին դասարանի աշակերտը՝ շտապ օգնութեան թիւին գանգեց: 9-1-1-ի պաշտօնեան պատասխանեց: «Օգնութեան պէտք ունիմ», ըսաւ տղան: «Թ՞ուաբանութեան դասիս՝ Հանումի գործողութիւնները պէտք է ընեմ»: Պաշտօնեան շարունակեց օգնել, մինչեւ լսեց որ կին մը մտաւ սենեակ ու ըսաւ. «Ճանի (Johnny), ի՞նչ կ'ընես»: Ճանի բացատրեց, որ ինք չի կրնար կատարել թուաբանութեան իր տան պարտականութիւնը, ուստի ան ըրաւ՝ ճիշդ այն ինչ որ մայրը իրեն ըսած էր, որ ընէ՛ երբ օգնութեան կարիքը ունենայ: Հետեւաբար ան գանգեց 9-1-1-ին: Ճանիի Համար, իր ունեցած կարիքը որակուեցաւ որպէս արտակարգ իրավիճակ: Կարեկից ունկնդրող պաշտօնեային Համար, տղուն տան պարտականութեան օգնելը՝ այդ պահուն, առջնահերթ խնդիր էր:

Երբ Սաղմոսերգու Դաւիթ՝ օգնութեան կարիք ունէր, ան ըսաւ. «Ո՛վ Տէր, գիտցո՛ւր ինձի վախճանս, եւ օրերուս չափը՝ թէ՛ ո՛րքան է, որպէսզի գիտնամ թէ՛ ի՛նչպէս անցաւոր եմ»: (Սաղմ. 39. 4): Ան ըսաւ. «Իմ ակնկալութիւնս դժուար է» (Հմ. 7): Ուստի, ան աղաչեց, որ Աստուած լսէ՛ ու պատասխանէ իր «աղաղակին» (Հմ. 12): Ապա՝ ան խնդրեց Աստուծմէ, որ «նայուածքը դարձնէ իրեն» (Հմ. 13): Թէեւ Դաւիթ չի թուեր իր կարիքները մէկ առ մէկ, սակայն ամբողջ Աստուածաշունչին մէջ ան յայտարարեց, որ Աստուած մի՛շտ իր Հետ պիտի ըլլայ՝ լսելով եւ պատասխանելով իր աղօթքներուն:

Աստուծոյ Հաստատակամութեան Հանդէպ մեր վստահութիւնը՝ թոյլ կու տայ մեզի, որ մշակենք մեր անկայուն զգացումները՝ միաժամանակ Հաստատելով, որ անփոփոխ մէկու մը Համար՝ չափազանց մեծ կամ շատ փոքր խնդրանք չկայ: Ան կը լսէ մեզ, կը հոգայ մեզի եւ կը պատասխանէ մեր իւրաքանչիւր աղօթքին:

Աղօթք - Սիրող Աստուած, շնորհակալ եմ՝ որ կը լսես ու կը պատասխանես իւրաքանչիւր աղօթքիս, գոր կը դնե՛մ Զու ձեռքերուդ մէջ: Ամէն:

Աստուած Իր սերը ցոյց կու տայ մեզի՝ պատասխանելով մեր աղօթքներուն, ըլլաւ անոնք փոքր կամ մեծ խնդրանքներով:



Կը հետապնդեմ նպատակակետը՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին համար: [Փիլ. 3. 14]

ԳԵՐՈՆՏԻՐ

Երբեմն զարմանալիօրէն հոգեւոր հաղորդագրութիւնները կը յայտնուին անսպասելի վայրերու մէջ, օրինակ՝ զաւեշտական գիրքերու մէջ: Աքանչելի Զաւեշտագիրքի (Marvel Comics) հրատարակիչ Սթէյն Լի (Stan Lee) մահացաւ 2018-ին, իր ետին ձգելով խորհրդանշական հերոսներու ժառանգութիւն, ինչպէս՝ Սարդ-Մարդը (Spider-Man), Երկաթեայ Մարդը (Iron Man), Այլանդակ Քառեակը (Fantastic Four), Խոշորը (Hulk) եւ շատ ուրիշներ:

Արեւի ակնոցներով յայտնի ժպտացող մարդը՝ ունէր յատուկ արտայայտութիւն մը, որ օգտագործած էր ան Աքանչելի Զաւեշտագիրքի ամսական սիւնակներուն մէջ՝ տասնամեակներ շարունակ ստորագրելով «Գերընտիր» բառը: 2010-ին համացանցի ճռուողիւնի (tweet) մը մէջ՝ Լի բացատրեց անոր իմաստը. «Դէպի վեր եւ առաջ. դէպի աւելի մեծ փառք: Ահա թէ ինչ կը մաղթեմ ձեզի, երբ վերջացնեմ ճռուողիւնը: Գերընտիր»:

Անկախ անկէ, թէ Սթէյն Լին անդրադարձաւ կամ ո՛չ, այս արտասովոր արտայայտութեան, իր օգտագործումը, կ'արձագանգէ Պօղոս առաքեալի գրածը՝ Փիլիպպեցիներուն, երբ ան հաւատացեալներուն յորդորեց նայիլ ո՛չ թէ ետեւ, այլ առաջ եւ վեր. «Հապա կ'ընեմ սա՛ մէկ բանը. մոռցած եմ ետեւի եղածները, եւ կը դիմեմ առջեւի եղածներուն: Կը հետապնդեմ նպատակակէտը՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին համար» (Հմ. 13-14):

Մենք դիւրութեամբ կրնանք խճճուիլ ափսոսանքներու կամ անցեալի մեր առած որոշումներուն համար: Բայց Քրիստոսով՝ հրաւիրուած ենք հրաժարելու ափսոսանքներէն եւ առաջ երթալու՝ դէպի Աստուծոյ փառքը, ընդունելով ներումը եւ այն նպատակը, որ Ան այնքա՛ն ողորմածօրէն կու տայ մեզի: Գերընտիր:

Աղօթք - Երկնաւոր Դայր, շնորհակալ եմ Զու ներողամտութեանդ համար: Շնորհակալ եմ, որ կը հրաւիրես զիս առաջ երթալու, վեր եւ առաջ՝ Զու փառքիդ համար: Ամէն:

Սենք հակումը ունինք մեր կեանքին մէջ ե՛տ նայելու: Սակայն Աստուծոյ խօսքը կը թելադրէ մեզի՝ ձգել անցեալի սխալները ու առաջ շարժիլ:



[ՍԵՐՈ] իրենը չի փնտռեր, չի գրգռուիր: [Ա. Կորնթ. 13. 5]

ՅԻՄԱ՛ ՇՆՈՐՅՔ

Մենք շտապեցինք արագ-սնունդի (fast-food) ճաշարան մը՝ միասին ճաշելու ընկերոջս՝ Ճէրրիի (Jerrrie) աշխատանքի կարճ ընդմիջումին: Մօտաւորապէս նոյն ատեն հասնելով դռան մօտ՝ վեց երիտասարդներ ներս մտան՝ ճիշդ մեր առջեւ: Գիտնալով, որ շատ ժամանակ չունէինք, ներքուստ տրտնջեցինք: Անոնք որպէս խումբ կանգնած էին երկու գանձիչներու մօտ, վստահ ըլլալու համար, որ անոնցմէ իւրաքանչիւրը կարենայ շուտով պատուիրել: Յետոյ՝ ես լսեցի, թէ ինչպէս ձէրին ինքն իրեն շնչեց. «Հիմա՛ շնորհք ցոյց տուր»: Վայ՛: Ի հարկէ, եթէ ձգէին՝ որ մենք առաջ անցնինք, շատ լաւ պիտի ըլլար. բայց ինչ հիանալի յիշեցում է մտածելու ուրիշներու կարիքներուն եւ ցանկութիւններուն մասին եւ ո՛չ միայն իմ սեփականը:

Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ սէրը համբերատար է, բարի եւ անշահախնդիր. «չի գրգռուիր» (Ա. Կորնթ. 13. 5): Մեկնաբան Մաթիու Հէնրի (Matthew Henry) այս տեսակի սիրոյ մասին գրեց. «Յաճախ ... կը նախընտրէ [ուրիշներու] բարեկեցութիւնը, գոհացումը ու առաւելութիւնը, քան իր սեփականը»: Աստուծոյ սէրը առաջին հերթին կը մտածէ ուրիշներու մասին:

Երբ մեզմէ շատեր դիւրութեամբ կը զայրանան, յաճախ Աստուծմէ օգնութիւն եւ շնորհք խնդրելու առիթ կ'ունենանք անոնց հետ համբերատար եւ ազնիւ ըլլալու (Հմ. 4): Առակաց 19. 11-ը կ'աւելցնէ. «Մարդուն ուշիմութիւնը իր բարկութիւնը կը յետաձգէ, եւ անոր պարծանքն է յանցանքը անտեսել»:

Այդ՝ սիրառատ գործողութիւն է, որ պատի՛ւ կը բերէ Աստուծոյ, եւ Ան կրնայ նոյնիսկ օգտագործել այդ՝ Իր սիրո՛յ մասին եղած մտքերը՝ ուրիշներու հասցնելու համար:

Աղօթք - Տէ՛ր, օգնութեանդ պէտք ունիմ: Կը դիմագրաւեմ գրգռուածութեան բազմաթիւ մակարդակներ, բայց փոխարէնը՝ կը ցանկամ լեցուիլ Քու տեսակի սիրով: Ամէն:
Պէտք է՛ յուսախաբութեամբ գործել: Դիմե՛նք Աստուծոյ Իր օգնութիւնը խնդրելով:



Ուստի՝ թօթափելով ստելը՝ ճշմարտութիւնը խօսեցէք իրարու հետ, որովհետեւ մենք իրարու անդամներ ենք: [Եփ. 4. 25]

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԽՕՍԻԼ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Մարդ մը՝ հմուտ էր ստելով իր ստացած երթեւեկութեան տուգանքները չի վճարել: Երբ կը ներկայանայ տարբեր դատաւորներու առջեւ, ան կը պատմէ նոյն հեքիաթը. «Ես բաժնուեցայ ընկերուհիէս եւ ան առաւ ինքնաշարժս՝ առանց իմ գիտակցութեանս»: Բացի այդ, ան բազմիցս նկատողութիւն ստացած է աշխատանքի ժամանակ՝ իր վատ ընթացքին համար: Դատախազները՝ ի վերջոյ անոր դէմ մեղադրանք առաջացուցին չորս սուտ երդման եւ հինգ կեղծ ցուցմունքներուն համար, ինչպէս նաեւ ստելու դատաւորներուն եւ ոստիկանութեան՝ կեղծ զեկոյցներ տալու համար: Այս մարդուն համար սուտը՝ իր ամբողջ կեանքին սովորութիւնը դարձած էր:

Որպէս հակադրութիւն՝ Պօղոս առաքեալ ըսաւ, որ ճշմարտութիւնը ըսելը՝ Տէր Յիսուսի հաւատացողներուն համար, կենսական ըլլալու է: Ան յիշեցուց Եփեսացիներուն, որ անոնք պէտք է ձգեն իրենց հին ապրելակերպը՝ իրենց կեանքը Քրիստոսին յանձնելով (Եփ. 2. 1-5): Այժմ՝ անոնք պէտք է ապրին այնպիսի նոր մարդոց պէս, ինչպիսին անոնք դարձան ներառելով հաստատ գործողութիւններ իրենց կեանքին մէջ: Այդպիսի գործողութիւններէն մէկն է՝ «թօթափել ստելը» (4. 25): Քանի որ անիկա կը պաշտպանէ եկեղեցիին միասնութիւնը, Եփեսոսի հաւատացեալներուն խօսքերն ու գործողութիւնները պէտք էր վերաբերէին «ուրիշները կառուցելու» (Հմ. 29):

Ինչպէս որ Սուրբ Հոգին կ'օգնէ մեզի (Հմ. 3-4), Յիսուսի հաւատացողները կրնան ձգտիլ ճշմարտութեան՝ իրենց խօսքերուն եւ արարքներուն մէջ: Այն ատեն՝ եկեղեցին կը միաւորուի եւ Աստուած կը փառաւորուի:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի որ հեռացնեմ կեղծիքը եւ հազնիմ Քու ճշմարտութիւնդ: Ամէն:
Որպէս Աստուծոյ զաւակներ՝ միշտ խօսելու ենք ճշմարտութիւնը, որոնք պիտի ցոյցանեն մեր նոր կեանքը՝ Քրիստոսով:

Երբ Յորդանանի ջուրերուն եզերքը հասնիք, Յորդանանի մէջ կայնեցէ՛ք: [Յեւ. 3. 8]

ՔԱ՛ՅԼ ԱՌՆԵԼ՝ ԶԱԲԱՏՔՈՎ

Հիւր բանախօսը՝ խօսեցաւ Աստուծոյ վատահելու եւ «գետը մտնելու» իմաստութեան մասին: Ան պատմեց՝ Հովիւին մը մասին, որ Աստուծոյ վատահեցաւ եւ նախընտրեց խօսիլ Աստուածաշունչի ճշմարտութիւնները՝ իր քարոզին մէջ, հակառակ իր երկրի նոր օրէնքին: Ան դատապարտուեցաւ ատելութեան յանցազործութիւններու համար եւ երեսուն օր անցուց բանտի մէջ: Բայց անոր հարցը վերաքննուեցաւ եւ դատարանը որոշեց, որ ան իրաւունք ունէր Աստուածաշունչի իր անձնական մեկնաբանութիւնը ընելու եւ ուրիշներու յորդորելու, որ հետեւին անոր:

Ուխտի տապանակը կրող քահանաները նոյնպէս՝ պէտք էր ընտրութիւն ընէին, կամ ջուրին մէջ մտնելու, կամ ալ մնալու ավիին: Այժմ անոնք կեցած էին Յորդանանի գետի ավիին, որ յորդելու փուլին էր եւ վտանգաւոր բարձրութեան վրայ: Բայց անոնք առին այդ քայլը եւ Աստուած ստիպեց, որ ջուրերը ետ քաշուին. «Երբ տապանակը կրող քահանաներուն ոտքերը թաթխուեցաւ եզերքի ջուրին մէջ ... վերէն իջնող ջուրերը կայնեցան» (Յս. 3. 15-16):

Երբ մենք կը վատահինք մեր կեանքը Աստուծոյ, Ան մեզի քաջութիւն կու տայ՝ առաջ երթալու, անկախ անկէ՝ որ ընտրենք խօսիլ Աստուածաշունչի ճշմարտութիւնները, թէ քայլ առնենք դէպի անյայտ տարածք: Հովիւին դատապարտութեան ժամանակ դատարանը լսեց աւետարանը լսելով անոր տուած քարոզը: Եւ Յեսուի ժամանակ Իսրայէլացիները ապահով անցան խոստացուած երկիրը եւ Աստուծոյ զօրութեան մասին բաժնեկցեցան ապագայ սերունդներուն հետ (Հմ. 17, 4. 24):

Եթէ մենք հաւատքով քայլ առնենք, Աստուած՝ հոգ կը տանի մնացածին մասին:

Աղօթք - Սիրելի Աստուած, ես քու քաջութեանդ պէտք ունիմ: Կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի հաւատքով քայլ առնելու: Ամէն:
Սարսափելի իրավիճակներու մէջ եղած ենք ու վախցած՝ առաջին քայլը առնելու: Բայց Աստուած պատրաստ է օգնելու մեզի:

Իմ բոլոր աղբիւրներս քու մէջդ են: [Սաղմ. 87. 7]

ՎԵՐՋԱՊԷՍ ՄԻԱԻՈՐՈՒԱԾ

1960 թուականին՝ Օթթօ Փրէմինկըրը (Otto Preminger) հակասութիւններ յառաջացուց իր «Ելից» (Exodus) ֆիլմով: Լիօն Յուրիսի (Leon Uris) վէպին վրայ հիմնուած, ան կը ներկայացնէ պատմութիւն մը, Բ. Համաշխարհային պատերազմէն ետք՝ Պաղէստին գաղթած Հրեայ գաղթականներու մասին: Ֆիլմը կ'աւարտի երիտասարդ Եւրոպացի Հրեայ աղջկայ եւ Արաբ տղամարդու մարմիններու պատկերով: Երկուքն ալ սպաննութեան զոհեր թաղուած նոյն գերեզմանին մէջ՝ ուր շուտով պիտի ըլլար Իսրայէլի ազգը: Փրէմինկըր՝ եզրակացութիւնը մեզի կը ձգէ: Սա՛ յուսահատութեան պատկեր մըն է՞, յաւիտեան թաղուած երա՞գ մը: Կամ յոյսի խորհրդանի՞շ մըն է, թէ ինչպէս ատելութեան եւ թշնամութեան պամութիւն ունեցող երկու ժողովուրդներ՝ իրարու կը մօտենան՝ մահուան եւ կեանքի մէջ:

Թերեւս, Կորխի որդիները, որոնց տրուած է 87-րդ Սաղմոսի հեղինակութեան վարկը, պիտի առնեն այս տեսարանին վերջինը: Անոնք կ'ակնկալէին խաղաղութիւն մը, որ մենք տակաւին կը սպասենք: Երուսաղէմի մասին անոնք գրեցին. «Փառաւոր բաներ կը պատմուի քեզի համար, ո՞վ Աստուծոյ քաղաք» (Հմ. 3): Անոնք երգեցին օրուան մը մասին, երբ ազգերը, որոնք բոլորն ալ Հրեայ ժողովուրդին դէմ պատերազմելու պատմութիւն ունէին, պիտի միաւորուին ընդունելու համար միակ ճշմարիտ Աստուածը. Ռահաբ (Եգիպտոս), Բաբելոն, Փղշտացիները, Տիւրոս եւ Քուշ (Հմ. 4): Բոլորը պիտի հրապուրուին դէպի Երուսաղէմ եւ դէպի Աստուած:

Սաղմոսին եզրակացութիւնը՝ տօնական է: Մարդիկ պիտի երգեն Երուսաղէմի մէջ. «Իմ բոլոր աղբիւրներս քու մէջդ են» (Հմ. 7): Որո՞ւ համար անոնք կ'երգեն: Անոր, որ Կենդանի Ջուրն է եւ ամբողջ կեանքի Աղբիւրը (Յովհ. 4. 14): Յիսո՞ւ միակն է, որ կրնայ բերել յարատեւ խաղաղութիւն եւ միութիւն:

Աղօթք - Հա՛յր, կ'աղօթեմ բոլոր մարդկանց խաղաղութեան եւ միասնութեան համար, երբ անոնք հրապուրուին Քու Որդիիդ: Ամէն: **Բախումներ՝** համաշխարհային եւ անձնական՝ պատճառ կ'ըլլան անհանգստութեան, բայց Աստուած կու տայ Իր խաղաղութիւնը:



Պիտի կառուցանեմ իմ եկեղեցիս: [Մատթ. 16. 18]

ՄՆԱԸ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՁ

Հրեհհը ամբողջութեամբ այրեց Պալսորա (Balsora) Մկրտական Եկեղեցին: Երբ շտապ օգնութեան աշխատակիցները եւ համայնքի անդամները հաւաքուեցան՝ կրակը մարելէ ետք, անոնք զարմացան՝ տեսնելով անխացած խաչը, որ կանգնած էր տակաւին՝ ծուխին եւ մոխիրին մէջ: Հրէջջներէն մէկը մեկնաբանեց, որ կրակը «տառաւ կառոյցը, բայց ո՛չ խաչը: Սա՛ յիշեցում է, որ շէնքը պարզապէս շէնք է: Սակայն եկեղեցին միաբանութիւնն է»:

Եկեղեցին շինութիւն չէ՛, այլ համայնք՝ միաւորուած Քրիստոսի խաչով: Ա՛ն, որ մեռաւ, թաղուեցաւ եւ յարութիւն առաւ: Երբ Յիսուս ապրեցաւ աշխարհի վրայ, Ան Պետրոսի ըսաւ, որ պիտի կառուցէ Իր համաշխարհային եկեղեցին եւ ոչի՛նչ չի կրնար քանդել զայն (Մատթ. 16. 18): Յիսուս կը հաւաքէր հաւատացեալներ ամբողջ աշխարհէն՝ մէկ խումբի մէջ, որ պիտի շարունակուէր ժամանակի ընթացքին: Այս համայնքը պիտի դիմակալէր սաստիկ դժուարութիւն, բայց անոնք ի վերջոյ պիտի դիմանան: Աստուած պիտի բնակէր անոնց մէջ եւ աջակցէր անոնց (Եփ. 2. 22):

Երբ մենք կը պայքարինք տեղական եկեղեցիներ հիմնելու, միայն զանոնք լծացած եւ շէնքերը աւերուած տեսնելու, կամ երբ մենք մտահոգուած ենք աշխարհի այլ մասերուն մէջ պայքարող հաւատացեալներու համար, մենք կրնանք յիշել, որ Յիսուս կենդանի է եւ գործնական կերպով հնարաւորութիւն կու տայ Աստուծոյ ժողովուրդին, որ համբերեն: Մենք այդ եկեղեցիին մէկ մասն ենք, որ ա՛ն կը կառուցանէ այսօր: Ան մեզի հետ է եւ մեզի համար է: Անոր խաչը կը մնայ:

Աղօթք - Աստուած, կը խնդրեմ՝ զօրացո՛ւր Զու ժողովուրդդ՝ ամենուրեք: Լեցո՛ւր անոնց իմաստութեամբ, պաշտպանե՛ անոնց եւ օգնե՛ հաւատարիմ մնալու Զեզի: Ամէն:

Որպէս Աստուծոյ ժողովուրդը, մեզմէ կ'ակնկալուի աջակցիլ հաւատակիցներուն եւ տարածել բարի լուրը՝ կապուած եկեղեցիին՝ Աստուծոյ ծրագիրին համար:



Բայց անոց՝ որ ընդունեցին զինք - անոնց՝ որ կը հաւատան իր անունին - իրաւասութիւն տուաւ Աստուծոյ զաւակներ ըլլալու: [Յովի. 1. 12]

ՀՈԳԵՒՈՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Երբ ձէյ Սբէյթց (Jay Speights) Ռաքուիլ, Մէրիլենտէն (Rockville, Maryland), ԴՆԹ-ի (DNA) քննութիւն մը ըրաւ, ոչինչ կրնար նախապատրաստած ըլլալ զինք՝ իր ստացած արգիւնքներուն: Մեծ էր անակնկալը: Ան՝ Արեւմտեան Ափրիկէի Պէնին (Benin) ազգի պատկան՝ իշխան մըն էր: Շուտով ան նստաւ ինքնաթիռ եւ այցելեց իր երկիրը: Երբ հասաւ, թագաւորական ընտանիքը՝ ողջունեց եւ ողողեց զինք՝ տօնական վերադարձով մը՝ պարերով, ցուցանիշներով եւ շքերթով:

Տէր Յիսուս աշխարհ եկաւ որպէս Աստուծոյ բարի լուրը: Ան գնաց իր ժողովուրդին, Իսրայէլի ազգին մօտ՝ տալու անոնց բարի լուրը եւ խաւարէն դուրս գալու միակ ճամբան: Շատեր ստացան Անոր պատգամը անտարբերութեամբ՝ մերժելով «Ճշմարիտ Լոյսը» (Յովհ. 1. 9), հրաժարելով ընդունիլ զինք՝ որպէս Մեսիա (Հմ. 11): Բայց անհաւատութիւնն ու անտարբերութիւնը՝ համընդհանուր չէր մարդոց մէջ: Որոշ մարդիկ խոնարհաբար եւ ուրախութեամբ ընդունեցին Քրիստոսի հրաւերը, ընդունեցին զինք՝ որպէս Աստուծոյ վերջնական զոհաբերութիւնը՝ մեղքի համար եւ հաւատացին անոր անունին: Այս հաւատարիմ մնացորդին՝ անակնկալ մը կը սպասէր: Ան «իրաւասութիւն տուաւ Աստուծոյ զաւակներ ըլլալու» (Հմ. 12), Անոր թագաւորական զաւակները՝ հոգեւոր վերածնունդի միջոցով:

Երբ մենք կը դառնանք մեղքէն ու խաւարէն, ընդունիք Յիսուսի եւ հաւատանք Անոր անունին, մենք կը յայտնաբերենք, որ Աստուծոյ զաւակներն ենք, որդեգրուած իր ընտանիքին մէջ՝ որպէս թագաւորական: Թող որ մենք վայելենք օրհնութիւնները, երբ կը կատարենք թագաւորին զաւակները ըլլալու պարտականութիւնները:

Աղօթք - Հայր, Յիսուսի մահով՝ Դուն զի՛ս կը հրաւիրես հոգեւոր թագաւորութեան: Ե՛ս խոնարհ ու երախտապարտ եմ: Ամէն:
Ի՞նչ ազդեցութիւն ունենալու է քու վրադ՝ Աստուծոյ զաւակ ըլլալը: Որպէս Աստուծոյ զաւակ՝ ի՞նչ պիտի ընես, ցոյց տալու՝ որ դուն Անոր զաւակն ես:



Ամեն մարմինն իւրաքանչիւր շնչաւոր կենդանիի միջեւ եղող իմ ուխտս պիտի յիշեմ: [Ծն. 9. 15]

ՅՈՅՍԻ ԳՈՅՆԵՐ

Սեպտեմբեր 11, 2023-ին՝ Միացեալ Նահանգներու դէմ եղած ահաբեկիչ յարձակումներու քսան երկրորդ տարելիցին ատեն, ապշեցուցիչ կրկնակի ծրածան մը՝ զարդարեց Նիւ Եօրքի երկիրքը: Նախկին՝ Զոյգ Աշտարակներու տունը եղող այս քաղաքը, ամենամեծ կորուստները կրեց յարձակումներու ժամանակ: Աւելի քան երկու տասնամեակ ետք, կրկնակի ծրածանը՝ յոյսի եւ բժշկութեան զգացում բերաւ անոնց, որոնք այնտեղ էին՝ այս սքանչելի տեսարանը տեսնելու: Այդ տեսաբերիզը՝ կարծես նկարած էր՝ Առեւտուրի Համաշխարհային Կեդրոնէն բխող ծրածանները:

Երկիրքը պարզուող ծրածանները՝ Նոյի օրերէն սկսած, Աստուծոյ հաւատարմութեան գրաւականը բերած են: Մեղքի վերաբերեալ՝ Աստուծոյ դատաստանին հետեւանքով, որու արդիւնքը եղաւ՝ աներեւակայելի կործանում, Ան դրաւ գունագեղ փարոսը՝ որպէս մնայուն յիշեցում «յաւիտենական ուխտի՝ Աստուծոյ ու ամէն մարմինէ՛ իւրաքանչիւր շնչաւոր կենդանիի միջեւ» (Ծն. 9. 16): Անձրեւի քառասուն մուլթ օրերէն եւ ջրհեղեղներէն ետք (7. 17-24), կարելի է միայն պատկերացնել, թէ որքան ողջունելի պէտք է ըլլար ծրածանը՝ «ուխտի նշանը», Նոյի եւ անոր ընտանիքին համար (9. 12-13): Այդ՝ Աստուծոյ հաւատարմութեան յիշեցումն էր, որ «ա՛յ ջրհեղեղ պիտի չըլլայ երկիրը կործանելու համար» (Հմ. 11):

Երբ մենք կը դիմագրաւենք՝ մո՛ւլթ օրեր եւ ողբերգական կորուստներ ըլլայ այդ բնական աղետի, Ֆիզիքական կամ զգացական ցաւի կամ հիւանդութեան ծանր վիճակի հետեւանքով, եկէ՛ք Աստուծոյ նայինք՝ յոյսի համար: Նոյնիսկ եթէ մենք այդ պահերուն չի նկատենք Անոր ծրածանը, մենք կրնանք վստահ ըլլալ Անոր հաւատարմութեան՝ իր խոստումներուն մէջ:

Աղօթք - Հայր Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի, որ կարենամ տեսնել Զեզ այսօր՝ իմ մղած պայքարներուս մէջ: Ամէն:
Աստուած կը յայտնէ իր ներկայութիւնը՝ մեր կեանքի դժուար ժամանակներուն մէջ:



Յիշէ՛ հանգստեան օրը: [Ել. 20. 8]

ՎԵՐԱԴԱՐՄԱՆՈՒՄԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Երբեւէ եղա՞ծ է, որ պատմութիւն պատմելու ատեն՝ կանգ առած ես չյիշելով՝ անուն մը կամ թուական մը: Մենք յաճախ այդ իրավիճակը կը կապենք տարիքի՝ հաւատալով, որ յիշողութիւնը ժամանակի ընթացքին կը սկսի տկարանալ ու կը մոռնանք որոշ բաներ: Սակայն վերջին ուսումնասիրութիւնները այլեւս չեն հաստատեր այդ տեսակէտը: Իրականութեան մէջ՝ անոնք ցոյց կու տան, որ խնդիրը՝ մեր յիշողութիւնը չէ՛. այլ մեր կարողութիւնը՝ վերստանալու այդ յիշողութիւնները: Առանց որեւէ տեսակի կանոնաւոր փորձի, յիշողութիւնները կը դառնան աւելի դժուար հասանելի:

Մեր յիշողութիւնը բարելաւելու միջոցներէն մէկը՝ կանոնաւոր կերպով ծրագրուած գործողութիւններն են կամ որոշակի յիշողութիւն մը ընելու փորձառութիւնն է: Մեր Արարիչ Աստուածը գիտէր այդ. ուստի պատուիրեց Իսրայելի որդիներուն, որ շաբաթը մէկ օր վերապահեն Աստուած պաշտելու եւ հանգստանալու համար: Ֆիզիքական հանգիստին կողքին, մենք հնարաւորութիւնը կը ստանանք՝ մտաւոր մարզանքի, յիշելու, որ «Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքն ու երկիրը, ծովը եւ բոլոր անոր մէջ եղողները» (Ել. 20. 11): Մեր կեանքի բուռն ընթացքին մէջ, մենք երբեմն կը կորսնցնենք մեր յիշողութիւնները պինդ բռնելու կարողութիւնը այն մասին, թէ Աստուած ի՞նչ ըրած է մեզի եւ ուրիշներու համար: Մենք կը մոռնանք, թէ ո՞վ ուշադրութեամբ կը հետեւի մեր կեանքին եւ ո՞վ կը խոստանայ Անոր ներկայութիւնը, երբ մենք կը զգանք ծանրաբեռնուած եւ մինակ: Մեր արօրեայէն՝ որոշ դադար մը առնելը, մեզի հնարաւորութիւնը կու տայ՝ ունենալու պէտք եղած «վերդարմանումի վարժութիւն»ը. դադրելու եւ յիշելու մեր Աստուածը եւ «չմոռնալ անոր բոլոր երախտիքները» (Սաղմ. 103. 2):

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ՝ յիշէ զիս եւ տո՛ւր ինձի իմաստութիւն, որպէսզի կանգ առնեմ եւ յիշեմ նաեւ Զեզ: Ամէն:
Ի՞նչ բան կը փորձէ մեզի, որ զանց ընենք հանգիստ ընելը:
Ինչպէ՞ս կարելի է հանգիստի համար ժամանակ յատկացնել՝
մեզի աւելի մօտենցելու Աստուծոյ:



Ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ: [Մատթ. 16. 10]

ԹԱԳԱԻՐՈՒԹԵԱՆ ՁԵՒՈՎ ԱՇԽԱՏԱՎԱՅՐ

Վ իբր թորիական Անգլիոյ գործարանները՝ մուծ վայրեր էին: Մահուան դէպքերը շատ էին եւ աշխատաւորները յաճախ կ'ապրէին աղքատութեան մէջ: Ճորճ Քէթպլըրի (George Catbury) հարցուց. «Ինչպէ՞ս կրայ աշխատող մարդը իտէլաներ մշակել, երբ իր տունը աղտոտ ստորին թաղամաս է»: Եւ այսպէ՞ս, ան կառուցեց նոր տեսակի գործարան մը՝ իր ընդլայնուող տուրմի գործին համար, որ օգտակար կը դառնար աշխատողներուն:

Արգիւնքը եղաւ Պուրնովիլը (Bournoville), աւելի քան երեք հարիւր բնակարաններով, մարզական դաշտերով, խաղավայրներով, դպրոցներով եւ եկեղեցիներով լեցուն գիւղ մը՝ Քէթպլըրիի աշխատաւորներուն եւ անոնց ընտանիքներուն համար: Անոնք լաւ վարձատրուեցան եւ ունեցան բժշկական օգնութիւն. եւ այս ամէնը եղան, Քէթպլըրիի՝ Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատքին պատճառով:

Յիսուս մեզի կը սորվեցնէ աղօթել, որ Աստուծոյ կամքը կատարուի «ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ» (Մատթ. 6. 10): Այս աղօթքը կրնայ օգնել մեզի պատկերացնելու, ինչպէս Քէթպլըրի ըրաւ, թէ ինչպիսի՞ տեղ մը կ'ըլլայ մեր աշխատավայրը՝ Աստուծոյ իշխանութեան ներքեւ, ուր մեր «ամէնօրեայ հացը» կը վաստկուի եւ «պարտապանները» կը ներուին (Հմ. 11-12): Որպէս աշխատակիցներ՝ այդ կը նշանակէ աշխատիլ «սրտանց ... Տէրոջ համար» (Կող. 3. 23): Որպէս գործատէրեր, այդ կը նշանակէ անձնակազմին տալ այն, ինչ որ «իրաւունքով եւ հաւասարութեամբ» է (Վ. 1): Ի՞նչ ալ ըլլայ մեր դերը, վճարովի կամ կամաւոր, կը նշանակէ՝ հոգալ՝ անոնց բարեկեցութեան համար, որու հետ որ մենք կը ծառայենք:

Քէթպլըրիի նման, պատկերացնենք, թէ ինչպէ՞ս ամէն բան կրնայ տարբեր ըլլալ, եթէ Աստուած ղեկավարէ մեր շրջակայքը:

Աղօթք - Հայր, օգնէ ինձի տեսնելու, թէ ինչպիսին կ'ըլլար իմ աշխատավայրս կամ շրջակայքս՝ Զու իշխանութեանդ ներքեւ եւ զօրացո՛ւր զիս՝ փոփոխութիւններ ընելու այնտեղ ուր որ կարող եմ»: Ամէն: **Ինչպիսի՞ն պիտի ըլլար քու շրջակայքդ Աստուծոյ իշխանութեան տակ:** Ինչպէ՞ս կրնաս աղօթել եւ աշխատիլ դէպի այդ տեսլականը:



Ան իջաւ եւ եօթը անգամ Յորդանանի մէջ լուացուեցաւ՝ Աստուծոյ մարդուն խօսքին համաձայն: [Դ. Թագ. 5. 14]

ԼԱԻ ԲՐԻՆՁԻ ԱՊՈՒՐ

Ճոսլինի (Jocelyn) ամենէն աւելի վաճառուող ճաշը՝ իր ուտելիքի կրպակին մէջ, եղած է բրինձի ապուրը: Ան շատ զգուշութեամբ կը խառնէ ապուրը, մինչեւ որ դառնայ ողորկ պնդութեան մը: Սակայն՝ ան ապշեցաւ, երբ մնայուն յաճախորդ մը ըսաւ. «Բու բրինձապուրդ տարբեր համ մը ունէր: Պատրաստութիւնը՝ այնքան ալ լաւ չէր»:

Ճոսլինի նոր օգնականը պատրաստած էր զայն այս անգամ եւ բացատրեց, թէ ինչո՞ւ տարբեր էր. «Ձի խառնեցի այնքան՝ որքան բաղադրատոմսը կ'ըսէր, որովհետեւ այդպէս կ'ընեմ տունը: Ես նաեւ աւելցուցի՝ շուշմայի իւղը: Իմ կարծիքով, այդպէս աւելի համով կ'ըլլայ»: Ան որոշած էր անտեսել բաղադրատոմսը եւ փոխարէնը իր ձեռով ընել:

Ահա՛ թէ ինչպէ՞ս ես երբեմն կ'արձագանգեմ Աստուծոյ հրահանգները: Սուրբ Գիրքին մէջ տրուած իր պատուիրանքներուն ամբողջովին վստահելու փոխարէն, ես ատոնք կ'ենթարկեմ իմ կարծիքներուս եւ կ'երթամ իմ ճանապարհով:

Նէեմիա, Սիրիական բանակի հրամանատարն էր եւ սխալին թոյլ տալու եզրին էր: Հպարտ զինուորը, երբ Եղիսէ մարգարէին միջոցով, Աստուծոյ ցուցմունք ստացած էր՝ լուացուելու Յորդանանու գետին մէջ, որպէսզի իր բորոտութիւնը բուժուի. բարկացաւ: Ան ունէր իր ակնկալիքները, թէ ինչպէ՞ս պէտք էր լուծուէր իր կարիքը՝ հաւատարմով թէ իր կարծիքը գերիվեր էր՝ Աստուծոյ պատուէրէն (Դ. Թագ. 5. 11-12): Իր ծառաները, սակայն, համոզեցին զինք՝ մտիկ ընելու Եղիսէի խօսքերուն (Հմ. 13): Որպէս արդիւնք՝ Նէեմիան բուժուեցաւ:

Երբ մենք՝ ամէն ինչ կ'ընենք Աստուծոյ ձեռով, մենք կը զգանք աննկարագրելի խաղաղութիւն մը: Եկէ՛ք աշխատինք Անոր հետ՝ իրականացնելով Անոր նպատակները:

Աղօթք - Յայր, օգնէ՛ ինձի լիովին վստահելու Զեզի, որովհետեւ Զու հրամանդ՝ շատ աւելին է, քան՝ իմ կարծիքը: Ամէն:

Շատ անգամ՝ մեր կարծիքները կը խախտեն մեր հնազանդութիւնը Աստուծոյ եւ կ'ազդեն մեր կեանքին մէջ՝ անոր գործին վրայ:



Եթէ Զրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն մեր քարոզութիւնը ունայն է, ու ձեր հաւատքն ալ ունայն է: [Ա. Կորնթ. 15. 14]

«ԳԵՐԵԶՄԱՆ ՉԷ՛»

Նոյնիսկ՝ երբ նշանաւոր գաւարային երաժիշտ՝ Ճաննի Քէշ (Johnny Cash) կը մօտենար մահուան, վճռական էր երաժշտութիւն ստեղծելու: Իր վերջին հաւաքածոն Ամերիկացի VI. Գերեզման ՉԷ՛ (American VI: Ain't No Grave), ձայնագրուած է իր կեանքի վերջին ամիսներուն: Վերնագրային երգը, Քէշի մշակումով՝ Քլոտ Էլիի (Claude Ely) օրհներգի մը՝ տարբերակը, կը պատկերացնէ իր վերջին միտքերուն մասին, երբ մենք կը լսենք, թէ ինչպէս ան կ'երգէ՝ յարութեան իր յոյսին մասին: Անոր յայտնի խոր ձայնը, թէեւ թուլցած էր իր վատթարացող առողջական վիճակին պատճառով, կը հռչակէ հաւատքի հզօր վկայութիւն մը:

Ճաննիի յոյսը՝ միայն այն ճշմարտութեան մէջ չէ՛ր, որ Յիսուս յարութիւն առաւ Զատիկուան առաւօտուն, այլ կը հաւատար, որ ո՛ր մը իր Ֆիզիքական մարմինը՝ նոյնպէս յարութիւն կ'առնէ եւ դարձեալ կ'ապրի:

Կարեւոր ճշմարտութիւն մըն է՝ հաստատելու, քանի որ նոյնիսկ Պօղոս առաքեալի օրերուն մարդիկ կը ժխտէին՝ ապագայի Ֆիզիքական յարութիւնը: Պօղոս խստիւ քննադատեց անոնց փաստարկումը, երբ ան գրեց. «Եթէ մեռելներու յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս յարութիւն առած չէ: Ու եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն մեր քարոզութիւնը ունայն է, ու ձեր հաւատքն ալ ունայն է» (Ա. Կորնթ. 15. 13-14):

Ինչպէ՛ս գերեզմանը չէր կրնար պահել Տէր Յիսուսի մարմինը, այնպէ՛ս ալ օր մը բոլոր անոնք, որոնք կը հաւատան թէ Ան յարութիւն առած է, «կեանք կը ստանան» (Հմ. 22): Եւ մեր յարութիւն առած մարմիններով, մենք Անոր հետ կը վայելենք յաւիտենական կեանք՝ նոր երկրի վրայ: Այդ երգելու պատճառ է:

Աղօթք - Յիսուս, շնորհակալ եմ՝ Զեզի հետ երկինքի մէջ ըլլալու ապագայի հիանալի յոյսը տալուդ համար: Ամէն:

Ֆիզիքական յարութեան յոյսը՝ մեզի միսիթարութիւն կու տայ եւ մեր հաւատքի արտայայտութիւնն է:



Դո՛ւք ալ՝ ապրող քարերու պէս՝ կը շինուիք իբր հոգեւոր տաճար մը: [Ա. Պետ. 2. 5]

ՔՐԻՍՏՈՍԻ ՎՐԱՅ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ

Բ ոլոր տեսակի կենդանիներու խումբերու անուններ գոյութիւն ունին: Անկասկած, դուք լսած էք ոչխարներու հօտի, առջարներու նախիրի կամ սագերու երամի մասին: Բայց որոշ անուններ՝ կրնան զարմացնել ձեզ: Ազգաւներու խումբը կը կոչուի՝ սպաննութիւն (murder): Ի՞նչ կ'ըսէք կոկորդիլոսներու ժողովի (congregation), կամ՝ ռնգեղջիւրներու խորտակումի (crash), կամ՝ Եւրո-ասիական ազգաւներու շէնքի (building) մասին:

Շէնքը՝ փաստօրէն, Աստուածաշունչին մէջ՝ Տէր Յիսուսի հաւատացողներուն տրուած անուններէն մէկն է: Պօղոս առաքեալ գրած է. «Դո՛ւք ... Աստուծոյ շինուածքն էք» (Ա. Կորնթ. 3. 9): Հաւատացեալներուն համար՝ կ'ան նաեւ այլ անուններ՝ «հօտ» (Գործք 20. 28), «Քրիստոսի Մարմին» (Ա. Կորնթ. 12. 27), «եղբայրներ եւ քոյրեր» (Ա. Թես. 2. 14), եւ շատ աւելին:

Շէնքի փոխաբերութիւնը կը կրկնուի Ա. Պետ. 2. 5-ին մէջ, երբ Պետրոս կ'ըսէ եկեղեցիին համար. «Դո՛ւք ալ՝ ապրող քարերու պէս կը շինուիք իբր հոգեւոր տաճար մը»: Ապա կը մէջբերէ Յսայի 28. 16-ը. «Ահա՛ ես Սիոնի մէջ քար մը կը դնեմ իբր հիմ, ընտիր քար մը, պատուական անկիւնի քար մը» (Հմ. 6): Յիսուս է իր շէնքին հիմը:

Մենք կրնանք մտածել, որ մեր գործն է կառուցանել եկեղեցին, բայց Յիսուս ըսաւ. «Ես պիտի կառուցանեմ եկեղեցին» (Մատթ. 16. 18): Մենք ընտրուած ենք Աստուծոյ կողմէ՝ «որպէսզի հռչակենք առաքինութիւնները անո՛ր՝ որ կանչեց մեզ խաւարէն իր սքանչելի լոյսին» (Ա. Պետ. 2. 9): Երբ մենք կը յայտարարենք այդ գովասանքը, մենք գործիքներ կը դառնանք՝ իր ձեռքերուն մէջ, երբ Ան կ'ընէ իր բարի գործը:

Աղօթք - Սիրելի Աստուած, ներե ինծի՝ այն պահերուն համար, որ ամէն ինչ ի՛մ մասիս է: Կը խնդրեմ՝ գործածէ զի՛ս ծառայելու Քեզի եւ սիրելու ուրիշներուն, երբ Դո՛ւն կը կառուցանես Քու եկեղեցիդ: Ամէն:

Այո՛, Յիսուս է եկեղեցին կառուցանողը, սակայն մենք կրնանք մասնակից դառնալ Ասոր գործին:



Դո՛ւն՝ որ վայրի ձիթենի էիր, պատուաստուեցար անոնց մէջտեղ: [Հոռմ. 11. 17]

ՊԱՏՈՒԱՍՏՈՒԱԾ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԷՉ

Մի քանի տարի առաջ՝ Հօրս հետ իր շատ սիրելի էքուատորի (Ecuador) այցելութեան ընթացքին, մենք այցելեցինք իր ընտանիքի ազարակը, ուր ան հասակ առած էր: Հո՛ւն՝ նկատեցի տարօրինակ ծառերու խումբ մը: Հայրս բացատրեց, որ երբ ինք որպէս մանուկ չարածճի ըլլար, կը վերցնէր մէկդի նետուած պտղատու ծառի ճիւղ մը, ճեղքեր կ'ընէր ուրիշ տեսակի պտղատու ծառի մը վրայ եւ կը կապէր այդ ճիւղը ցօղունին, ինչպէս տեսած էր որ մեծերը կ'ընէին: Անոր չարածճիութիւնները նկատի չառնուեցան, մինչեւ որ այդ ծառերը սկսան տարբեր տեսակի պտուղներ տալ, քան ինչ որ կը սպասուէր:

Մինչ Հայրս կը նկարագրէր պատուաստումի գործընթացը, ես պատկերացում ստացայ, թէ ի՞նչ կը նշանակէ մեզի համար պատուաստուիլ Աստուծոյ ընտանիքին մէջ՝ Յիսուսի հանդէպ մեր ունեցած հաւատքին պատճառով:

Մենք կրնանք նաեւ վստահութիւնը ունենալ, որ ի վերջոյ՝ պիտի ըլլանք դրախտի մէջ: Պօղոս առաքեալ բացատրեց Հռոմի հաւատացեալներուն, որ Աստուած հեթանոսներու կամ ոչ-Հրեաներու համար ճամբայ ստեղծած է՝ Իր հետ հաշտեցնելու համար: «Դո՛ւն՝ որ վայրի ձիթենի էիր, պատուաստուեցար անոնց մէջտեղ եւ հաղորդակից եղար անոնց հետ ձիթենիին արմատին ու պարարտութեան» (Հռոմ. 11. 17): Երբ կը հաւատանք Քրիստոսի, մենք կը պատուաստուինք Անոր հետ եւ կը դառնանք Աստուծոյ ընտանիքին մէկ մասը: «Ա՛ն որ իմ մէջս կը մնայ, ու ես՝ անոր մէջ, անիկա՛ շատ պտուղ պիտի բերէ» (Յովհ. 15. 5):

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, շնորհակալ եմ՝ որ զիս սիրեցիր եւ ընդունեցիր՝ Քու ընտանիքիդ անդամ ըլլալու: Ամէն:
Մենք կրնանք պատուաստուիլ Աստուծոյ ընտանիքի ծառին վրայ եւ պտուղ տալ Քրիստոսի համար:



Ձախշախուած եղեգը պիտի չփշոէ, ու պլպլացող պատրոյգը պիտի չմարտ: [Ես. 42. 3]

ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՄԲԵՐԱՏԱՐ ՍԷՐԸ

Երբ կը շոյեմ եւ կը փայփայեմ՝ մեր գեղեցիկ, փափկամազ Նորվէկիական Անտառային կատու՝ Միսթիքին (*Mystique*) ու հետը կը խաղամ, կամ երբ ան երեկոյեան կը քնանայ գիրկիս մէջ, երբեմն դժուար է հաւատալ, որ ան նոյն կատուն է, որու մենք հանդիպած ենք տարիներ առաջ: Միսթիքը՝ կ'ապրէր փողոցը՝ տկար եւ վախցած բոլորէն: Բայց այդ վիճակը աստիճանաբար փոխուեցաւ, երբ ես սկսայ ամէն օր ուտելիք դնել անոր համար: Օր մը՝ ան վերջապէս թոյլ տուաւ ինծի, որ շոյեմ զինք, իսկ մնացածը պատմութիւն է:

Միսթիքին փոխակերպումը կը յիշեցնէ բուժումի մասին, որը կրնայ գալ համբերութեան եւ սիրոյ հետ: Այդ ինծի կը յիշեցնէ Աստուծոյ սիրտը, ինչպէս նկարագրուած է Եսայի 42-ին մէջ: Հո՛ն, մենք կը կարդանք Իր Հոգիով լեցուած գալիք ծառային մասին (հմ. 1), որ անխոնջ եւ «հաւատարմութեամբ» կ'աշխատի «Աստուծոյ արդարութիւնը երկրի վրայ» հաստատելու համար (հմ. 3-4):

Բայց այդ ծառան՝ Յիսուսը (Մատթ. 12. 18-20), չէր բերեր Աստուծոյ արդարութիւնը, բռնութեան կամ իշխանութեան հետապնդման միջոցով: Փոխարէնը, Ան կ'ըլլայ լուռ եւ հեզ (Ես. 42. 2), քնքշօրէն եւ համբերատար հոգալով ուրիշներու կողմէ անտեսուածներ՝ անոնք որ «ջախջախուած» եւ վիրաւորուած են (հմ. 3):

Աստուած երբէ՛ք չի հրաժարիր Իր զաւակներէն: Ան ունի ամբողջ ժամանակը աշխարհի մէջ՝ հոգալու մեր վիրաւոր սիրտերը, մինչեւ որ անոնք վերջապէս սկսին բուժուիլ: Անոր մեղմ, համբերատար սիրոյ միջոցով՝ մենք աստիճանաբար կը սորվինք՝ եւս մէկ անգամ սիրել եւ վստահիլ:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ երբէ՛ք չիրաժարեցար ինձմէ եւ համբերութեամբ սիրեցիր ու խնամեցիր իմ վիրաւոր սիրտ: Օգնէ՛ ինձի՝ սիրել ուրիշներուն՝ նոյն համբերատար սիրտով: Ամէն:
Փոխակերպումը՝ կ'ըլլայ համբերատար սիրոյ մէջ, այն սերը, որ Աստուած կու տայ մեզի:

Երեսիդ առջև ուրախութեան յագեցում կայ: [Սաղմ. 16. 11]

ԻՍԱՍՏՈՒՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԳՏՆԵԼ

Համաճարակը կը յաղթէր: Ահա՛ թէ ինչպէս կը թուէր ձէյսըն Փէրսօֆին (Jason Persoff), մեծ հիւանդանոցի մը մէջ գործող շտապ օգնութեան բժիշկին համար, որ յանձնառու էր փրկելու Պսակաւոր Ժահրով բռնուած հիւանդները: Ինչպէ՞ս կրնար տալ իր լաւագոյնը: Ազատ ժամերուն՝ կը հանգստանար ընդլայնուած լուսանկարներ առնելով փոքր բանի, ինչպէ՞ս ձիւնի փաթիլ մը: Տօքթ. Փէրսօֆ կ'ըսէ. «Խենթանալիք բան է»: Սակայն ուրախութիւն գտնելը փոքր բանի մը մէջ, բայց գեղեցիկ, «առիթ մըն է կապուելու իմ Արարիչիս հետ ու նաեւ տեսնելու աշխարհը այնպէ՛ս մը, որ քիչեր ժամանակ կը յատկացնեն նկատելու համար»:

Բժիշկը ըսաւ, որ իմաստութեամբ նման ուրախութիւն փնտռելը՝ ճնշումը թեթեւցնելու եւ տոկունութիւնը զարգացնելու համար, բարձր արժէք մըն է՝ բժշկական ասպարէզին մէջ: Բայց բոլորին համար՝ ան ունի հետեւեալ խորհուրդը. «Դուք պէտք է շնչէք: Դուք պէտք է միջոց մը գտնէք շունչ քաշելու եւ կեանքը վայելելու համար»:

Դաւիթ այս միտքը արտայայտեց 16-րդ Սաղմոսին մէջ, երբ յայտարարեց Աստուծմէ ուրախութիւն գտնելու իմաստութեան մասին: Ան գրեց. «Տէ՛րն է իմ ժառանգութիւնս ու բաժակիս բաժինը: Հետեւաբար սիրտս ուրախացաւ ու փառքս խայտաց, մարմինս ալ ապահովութեամբ պիտի հանգչի» (Հմ. 5, 9):

Մարդիկ շատ անխոհեմ բաներ կ'ընեն, երբ կը փորձեն իրենց ճնշումներէն ձերբազատուիլ: Տօքթ. ձէրսօֆ գտաւ իմաստուն միջոց մը. այն՝ որ զինք ուղղեց Արարիչին, որ կ'առաջարկէ մեզի՝ Իր ներկայութեան ուրախութիւնը: «Կեանքի ուղին պիտի ցուցնես ինձի. երեսիդ առջև ուրախութեան յագեցում կայ, Քու աջ կողմդ ընդմիշտ հաճոյքներ կան» (Հմ. 11):

Աղօթք - Ո՛վ Տէր, կեանքիս ճամբորդութեան մէջ՝ օրհնէ զիս իմաստութեամբ, ուրախութիւն գտնելու համար, որ քեզմէ կը սկսի: Ամէն: **Իմաստուն ուրախութիւն գտնելը՝ կ'օրհնէ մեզ: Մինչ կը կարդաս 16-րդ Սաղմոսը, թող ներշնչէ քեզ՝ թուելու այն միջոցները, որոնք քեզի ուրախութիւն կու տան:**



Եհովան համբերատար է եւ անոր կարողութիւնը մեծ է, բայց յանցաւորը ամենեւին անպատիժ չի թողուր: [Նաւ. 1. 3]

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՇՆՈՐՀՔԸ

Անգլիացի ռոմանթիք գծագրիչ՝ Ճան Մարթին (John Martin) (1789-1854), ծանօթ էր իր յայտնութեանական բնապատկերներով, որոնք կը ներկայացնեն քաղաքակրթութիւններու կործանումը: Այս սքանչելի տեսարաններուն մէջ, մարդիկ ճնշուած են՝ կործանումներու մեծութեամբ եւ անզօր են մօտեցող փլուզումին դէմ: Գծագրութիւններէն մին՝ Նինուէի Անկումը, կը պատկերացնէ մարդիկ, որոնք կը փախչին՝ եկող ալիքներուն կործանումէն՝ մութ գլորուող ամպերուն տակ:

Մարթինի գծագրութեանէն՝ աւելի քան երկու հազար տարի առաջ, Նաւում մարգարէն՝ մարգարէացաւ կանխագուշակելով Նինուէի դատաստանը: Մարգարէն օգտագործեց լեռներու ցնցումի, բլուրներու հալելու եւ երկրի սարսուծի պատկերները (Նաւ. 1. 5) խորհրդանշելու Աստուծոյ բարկութիւնը՝ անոնց վրայ, որոնք ճնշած էին ուրիշներու վրայ իրենց շահին համար: Մակայն, Աստուծոյ պատասխանը մեղքին՝ առանց շնորհքի չէ: Մինչ Նաւում կը յիշեցնէ իր ունկնդիրներուն Աստուծոյ գորութեան մասին, կը նշէ, որ Ան «համբերատար է» (Հմ. 3) եւ «Իրեն ասպաւինողները կը ճանչնայ» (Հմ. 7):

Դատաստանի նկարագրութիւնները դժուար է կարգալ, բայց աշխարհ մը ուր չարը չէ հակադրուած, սարսափելի է: Բարեբախտաբար, մարգարէն չաւարտէր՝ այդ նշումով: Ան կը յիշեցնէ մեզի, որ Աստուած կը ցանկայ՝ բարի եւ արդար աշխարհ մը. «Ահա՛ լեռներուն վրայ աւետիս բերողին, խաղաղութիւն քարոզողին ոտքերը» (Հմ. 15): Այդ բարի լուրը Յիսուս է, որ կրեց մեղքի հետեւանքները, որպէսզի մենք կարենանք խաղաղութիւն ունենալ Աստուծոյ հետ (Հռոմ. 5. 1, 6):

Աղօթք - Հայր, կ'աղօթեմ՝ անոնց համար ամբողջ աշխարհի մէջ, որոնք անարդարօրէն կը տառապին: Ամէն:
Աստուած կը պաշտպանէ ճշունածը՝ Իր շնորհքով, բայց կը մերժէ՝ անարդարութիւնը:



Այս բաները խօսեցայ ձեզի, որպեսզի խաղաղութիւն ունենաք ինձմով: [Յովի. 16. 33]

ԿԵԱՆՔԻ ՎԵՐԻՎԱՅՐՈՒՄՆԵՐԸ

Դիմատետրի յիշողութիւն մը յայտնուեցաւ, ցոյց տալով՝ իմ յաղթական հինգ տարեկան երեխաս, երբ շահեցաւ գուարճալի եւ մրցակցային «Սահնակներու եւ Սանդուխներու» խաղը: Ես նշած էի եղբօրս եւ քրոջս՝ գրառման մէջ, քանի որ մենք յաճախ կը խաղայինք այս սեղանի խաղը, երբ երեխայ էինք: «Սահնակներ եւ Սանդուխներ»ը՝ հիմնուած է խաղի մը վրայ, որ մարզիկ խաղցած են դարեր շարունակ: Այդ խաղը կ'օգնէ մարդոց՝ սորվիլ հաշուել եւ ունենալ սանդուխով բարձրանալու եւ շատ արագ հասնելու 100-ին՝ խաղը յաղթելու զգացումը: Բայց զգո՛ւշ: Եթէ հասնիս 98-ին, սահնակէն վար կը սահիս, ուշացնելով կամ նոյնիսկ կորսնցնելով յաղթանակը:

Սա նման չէ՞ կեանքի: Յիսուս՝ սիրով պատրաստեց մեզ մեր օրերու վերիվայրումներուն: Ան ըսաւ, որ մենք «տառապանք» կամ փորձանք պիտի ունենանք (Յովհ. 16. 33), բայց Ան նաեւ բաժնեկցեցաւ խաղաղութեան պատգամ մը: Մենք պէտք չէ ցնցուինք մեր առջեւ եղած փորձութիւններով: Ինչո՞ւ: Բրիստոս յաղթեց աշխարհին: Ոչինչ աւելի մեծ է, քան Անոր զօրութիւնը, ուստի մենք ալ նոյնպէս կրնանք Աստուծոյ տուած «ուժեղ զօրութեամբ» դիմակայել՝ այն ամէնուն, որ կը դրուի մեր ճանապարհին (Եփ. 1. 19):

Ճիշդ այնպէ՛ս, ինչպէս «Սահնակներու եւ Սանդուխներու» խաղին մէջ, երբեմն կեանքն ալ կը ներկայացնէ, սանդուխ մը, որ թոյլ կու տայ մեզի ուրախութեամբ բարձրանալու, իսկ երբեմն ալ կ'իջնենք վար՝ սահուն սահակով: Բայց մենք պէտք չէ խաղանք կեանքի խաղը՝ առանց յոյսի: Մենք ունինք Յիսուսի զօրութիւնը՝ օգնելու մեզի յաղթահարելու՝ այդ ամէնուն:

Աղօթք - Սիրելի Յիսուս, շնորհակալութիւն՝ յիշեցումին համար, որ Դուն յաղթեցիր աշխարհին: Օգնե՛ ինձի, որ ապաւինիմ Ընդ զօրութեանդ՝ կեանքի վերիվայրումներուն յաղթահարելու համար: Ամէն:

Օգնութեան պէտք ունիք մեր մարտահրաւերները ընդունելու: Փորձութիւններուն եւ դժուարութիւններուն կրնաք յաղթել՝ Տեր Յիսուսի տուած զօրութեամբ:

Ամեն ծունկ իմ առջև պիտի կքի, եւ ամեն լեզու ինձմով երդում պիտի ընէ: [Ես. 45. 23]

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԿԵՐԱԴԱՐՁ

Մօտաւորապէս երկիրիոններ հաշուող՝ համաշխարհային ունկնդրութիւն ունեցող, էլիզապէթ Բ. Թագուհիի յուղարկաւորութիւնը, հաւանաբար՝ պատմութեան մէջ ամենէն շատ դիտուած սիրուածն էր: Այդ օր՝ մէկ միլիոն մարդեր հերթի կեցած էին՝ Լոնտոնի փողոցներուն մէջ, իսկ 250,000-ը այդ շաբաթ՝ ժամերով հերթի կանգնած էին՝ տեսնուլ համար Թագուհիին թագադր: Պատմական հինգ հարիւր թագաւորներ, թագուհիներ, նախագահներ եւ այլ պետութիւններու ղեկավարներ՝ եկած էին, իրենց յարգանքի տուրքը մատուցանալու իր ուժով եւ նկարագիրով յայտնի կնոջ:

Երբ աշխարհ իր հայեացքը ուղղեց դէպի Մեծն Բրիտանիա եւ անկէ հեռացող թագուհիին, իմ մտքերս դարձան՝ ուրիշ մէկ իրադարձութեան արքայական վերադարձի: Մեզի ըսուած է՝ թէ օր մը կու գայ, երբ ազգեր պիտի հաւաքուին ճանչնալու շատ աւելի մեծ Միապետին (Ես. 45. 20-22): Ուժի եւ նկարագրի առաջնորդ մը (Հմ. 24), որու առջեւ «ամէն ծունկ կը կքի» եւ իրմով «ամէն լեզու երգում կ'ընէ» (Հմ. 23), ներառեալ աշխարհի առաջնորդները, որոնք յարգանքի տուրք պիտի մատուցանեն Անոր եւ պիտի առաջնորդեն իրենց ազգերը՝ Անոր լոյսին մէջ քայելու (Յայտ. 21. 24, 26): Ո՛չ բոլորը պիտի ողջունեն այս Միապետին գալուստը: Բայց անոնք, որոնք կ'ընեն, յաւիտեան պիտի վայելեն Անոր թագաւորութիւնը (Ես. 45. 24-25):

Ինչպէս աշխարհը հաւաքուեցաւ դիտելու, թէ ինչպէ՞ս թագուհին կը հեռանայ, այնպէս ալ օր մը՝ պիտի տեսնէ իր գերագոյն Թագաւորին վերադարձը: Ինչպիսի՞ օր պիտի ըլլայ, երբ բոլորը՝ երկինքի մէջ ու երկրի վրայ, պիտի խոնարհին Յիսուս Քրիստոսին եւ պիտի ճանչնան զինք՝ որպէս Տէր (Փիլ. 2. 10-11):

Աղօթք - Սիրելի Յիսուս, այսօր կը խոնարհիմ Քու առջեւ՝ յարգելով Քեզ, որպէ՛ս աշխարհի գերագոյն Թագաւորը եւ իմ կեանքիս օրինական տիրակալը: Ամեն:

Եթէ Էլիզապէթ թագուհի այդքա՛ն մեծարուելու արժանի է, որքա՛ն աւելիին արժանի է՝ մեր Տէրն ու Թագաւորը:



Ուրեմն հիմա դուք այլևս օտարականներ ու պանդուխտներ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները: [Եփ. 2. 19]

ԱՅԼԵՒՍ ՕՏԱՐԱԿԱՆ ՍԸ ՉԷ՝

«Ղո՛ւն այստեղ չես պատկանիր»: Այդ խօսքերը ճգմեցին ութ տարեկան աղջկան սիրտը, եւ ցաւը մնաց անոր հետ: Պատերազմի մէջ եղող երկիրէ մը, Անոր ընտանիքը՝ գաղթեց ու գնաց ուրիշ երկիր մը: Անոր ինքնութեան թողութին վրայ դրուած էր «օտարական» բառը: Ան զգաց՝ որպէս թէ տեղ մը չէր պատկաներ:

Որպէս չափահաս, թէեւ ան կը հաւատար Յիսուսի, ան տակաւին ինքզինք օտարացած կը զգար. խայթուած այդ զգացումէն, որ ան անցանկալի օտար մըն է: Իր Աստուածաշունչը կարգալու ատեն, ան հանդիպեցաւ Եփեսացիս 2-ի խոստումներուն: 12-րդ համարին մէջ՝ ան տեսաւ՝ այդ հին ու անհանգստացնող օտարական բառը: «Դուք առանց Քրիստոսի էիք, ուժացած ըլլալով Իսրայէլի հասարակութենէն, եւ օտարացած՝ խոստումին ուխտերէն, ո՛չ յոյս ունէիք, ո՛չ ալ Աստուած՝ աշխարհի մէջ»: Բայց երբ շարունակեց կարգալ, տեսաւ թէ ինչպէս Քրիստոսի գոհաբերութիւնը փոխած է իր կարգավիճակը: Ան հասաւ 19-րդ համարին՝ որ կ'ըսէ իրեն. «Դուն այլևս օտարական կամ պանդուխտ չես»: Ան Աստուծոյ ժողովուրդին հետ «քաղաքակից» էր: Հասկնալով, որ ինք դրախտի քաղաքացի է, ուրախացաւ: Այլևս՝ ան երբէ՛ք օտար պիտի չըլլար: Աստուած առաւ եւ ընդունեց զինք:

Մեղքին պատճառով՝ մենք օտարացած էինք Աստուծոմէ: Բայց մենք պէտք չէ այդպէ՛ս մնանք: Տէր Յիսուս խաղաղութիւն բերաւ բոլոր անոնց, որոնք «հեռու» էին (Հմ. 17), դարձնելով յաւիտենական թագաւորութեան համաքաղաքացիներ բոլոր անոնք, որոնք Իրեն կը վստահին, միաւորուած՝ որպէ՛ս Քրիստոսի մարմինը:

Աղօթք - Սիրելի երկնաւոր Յայր, շնորհակալ եմ, որ թոյլ կու տաս ընկերակցելու Զեզի եւ ուրիշներու հետ, որոնք կը սիրեն ու կը վստահին Զեզի: Ամէն:

Եթէ օտարական կը զգանք, իմանանք թէ Աստուած կանչած ու միաւորած է մեզ՝ որպէս Իր զաւակները:



ՄԵ՛կ մարմին եւք Քրիստոսով, եւ իւրաքանչիւրս՝ իրարու անդամներ: [Հոռոմ. 12. 5]

ՄԻԱՍԻՆ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՁ

Ալասքայի՝ Ուիթթյէր (*Whittier, Alaska*) քաղաքի երեք հարիւր բնակիչներուն մեծ մասը՝ կ'ապրին մէկ մեծ բազմաբնակարան համալիրի մը մէջ: Այդ պատճառով՝ Ուիթթյէր կը կոչուի «քաղաք մէկ յարկի տակ»: Էյմին (*Amie*), որ նախկին բնակիչ մըն էր, կ'ըսէ. «Ես ստիպուած չեմ շէնքէն դուրս քալու. միտերքի խանութը, դպրոցը, նամակատունը եւ նոտարը՝ առաջին յարկին վրայ են»:

Էյմին կ'ըսէ. «Քանի որ այնտեղ կեանքը այնքա՛ն հանգստաւէտ էր, որ ես յաճախ կ'ուզէի ինքզինքիս պահել, մտածելով՝ որ մէկու մը կարիքը չունիմ: Բայց բնակիչները այնքա՛ն ջերմ են: Անոնք իրարու հոգ կը տանին: Ես իմացայ, որ անոնք ինծի պէտք ունին եւ ես ալ իրենց»:

Էյմինն նման, մենք երբեմն կրնանք ցանկալ մնալ՝ մենք մեզի եւ խոսափիլ համայնքէն: Երկրորդը կը թուի աւելի քիչ ճնշուածային: Բայց Աստուածաշունչը կ'ըսէ, որ Յիսուսի հաւատացողը՝ պէ՛տք է առողջ հաւասարակշռութիւն ունենայ մինակութեան եւ այլ հաւատացեալներու հետ ընկերակցութեան մէջ: Ինչպէս մարմինի իւրաքանչիւր մաս ունի որոշակի գործառնութիւն, այնպէս ալ իւրաքանչիւր հաւատացեալ ունի որոշ դեր (Հռոմ. 12. 4): Ինչպէ՛ս մարմինի մէկ մասը չի կրնար միայնակ գոյութիւն ունենալ, այնպէս ալ հաւատացեալը չի կրնար մեկուսացած ապրիլ՝ հաւատքի կեանքով (Հմ. 5): Հասարակութեան մէջ է, որ մենք կ'օգտագործենք մեր պարգեւները (Հմ. 6-8, Ա. Պետ. 4. 10) եւ կը դառնանք Յիսուսի նման (Հռոմ. 12. 9-21):

Մենք պէտք ունինք իրարու: Մեր միասնութիւնը Քրիստոսի մէջ է (Հմ. 5): Իր օգնութեամբ, մենք «իրարու հոգ կը տանինք», մենք կրնանք աւելի խոր յարաբերութիւն զարգացնել իր հետ եւ ցոյց տալ ուրիշին՝ Անոր սէրը:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, շնորհակալ եմ՝ քոյրերու եւ եղբայրներու համար: Ամէն:

Հաւատացեալներու հաւաքականութիւնը՝ կ'օգնէ մեզի Աստուծոյ հետ քալելու համար եւ կը քաջալերէ:



Որդեա՛կս, քու սիրտդ թող պահէ իմ պատուիրաններս: [Առ. 3. 1]

ԽԵԼՔ ԹՈՅՆԵԼԻՔ՝ ՈՒՄՈՒՑՈՒՄ

Սօֆիա Ռապրերթս՝ (*Sophia Roberts*) առաջին անգամ ականատես եղած է՝ բաց սիրտի վիրահատութեան, երբ մօտ տասնմէկ տարեկան էր: Թէեւ երեխայի մը համար՝ նման բժշկական գործողութիւն դիտելը, կրնայ կանուխ սեպուիլ, սակայն պէտք է իմանանք, որ անոր հայրը՝ Տօքթ. Հէրբլտ Ռապրերթս Կր. (*Harold Roberts Jr.*), սրտի վիրաբուժ էր: 2022 թուականին Սօֆիան, որ այժմ երեսուն տարեկան է եւ վիրահատ բժիշկ, միացաւ իր հօր հետ՝ կատարելու շնչերակային դռնակի յաջող վերագտեղում: Հէրբլտ ըսաւ. «Ի՞նչ բան կրնայ աւելի լաւ ըլլալ: Այս երեխային՝ ես սորվեցուցած եմ, հեծանիւ վարել: ... Ու հիմա՝ սորվեցնել անոր, թէ ինչպէս վիրահատել մարդկային սիրտի մը վրայ՝ բաւականին խելք թոցնելիք է»:

Թէեւ մեզմէ քիչեր կը սորվեցնեն երեխայի մը վիրահատութեան հմտութիւնը, Սողոմոն կը նկարագրէ յաջորդ սերունդին մէկ այլ բան սորվեցնելու կարեւորութիւնը. յարգել Աստուած եւ Անոր ուղիները: Իմաստուն թագաւորը՝ մեծ սիրով բաժնեկցեցաւ իր որդիին հետ՝ այն ամէնը, ինչ որ ի՛նք սորված էր՝ Աստուծոյ հետ իր ունեցած յարաբերութեան մէջ. «Որդեա՛կս, Տէրո՞ջ վստահէ ամբողջ սրտովդ» (Առ. 3. 1, 5), «վախցիր Տէրո՞ջմէն» (Հմ. 7), «պատուէ՛՛ Տէրը» (Հմ. 9) եւ «Տէրո՞ջ պատիժը մի՛ անարգեր» (Հմ. 11): Սողոմոն գիտէր թէ Աստուած «կը սիրէ» եւ «կը հաճի» իր զաւակներով, որոնք պատրաստակամօրէն կը ստանան Անոր յանդիմանութիւնն ու առաջնորդութիւնը (Հմ. 12):

Եկէ՛ք ուսուցանենք յաջորդ սերունդին, թէ ի՞նչ կը նշանակէ վստահիլ, պատուել, յարգել եւ խոնարհաբար ձեւաւորուիլ մեր հիւանալի եւ զարմանալի Աստուծոյ կողմէ: Իր հետ գործակցիլը՝ կենսական արտօնութիւն է՝ լաւ ու խելք թոցնելիք:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, կը խնդրեմ՝ օգնէ ինձի այսօր բաժնեկցիլ Զու սիրառատ ուղիներդ՝ թե՛՛ քրիտասարդներուն եւ թե՛՛ ալ մեծերուն հետ: Ամէն:

Կարելոր է Աստուծոյ մասին մեր սորվածք բաժնեկցիլ յաջորդ սերունդին հետ, փոխանցելու համար բարի աւանդը:



Սիրեք զիրար: [Յովհ. 15. 17]

ԻՆՉՊԻՍԻ՝ ԲԱՐԵԿԱՍ

Որպէս յետսփակի սիրելի հարեւաններ՝ մայրս եւ Տիկ. Սանչէզ (*Sanchez*), դարձան նաեւ բարեկամական մրցակիցներ: Երկուքը՝ ամէն երկուշաբթի կը մրցէին, ըլլալու առաջինը՝ կախելու իրենց լուացքը՝ բացօդեայ լուացքի պարաններուն վրայ: «Ա՛ն՝ դարձեալ յաղթեց ինձի», կ'ըսէր մայրս: Յաջորդ շաբաթ, մայրս կրնար ըլլալ առաջինը. երկուքն ալ կը վայելէին իրենց բարեկամական շաբաթական մրցումը: Տասը տարիներու ընթացքին, երբ անոնք կը բաժնեկցէին յետսփակին ծառուղին, անոնք նաեւ կը բաժնեկցէին իրենց իմաստութիւնը, պատմութիւնը եւ յոյսը:

Աստուածաշունչը՝ մեծ ջերմութեամբ կը խօսի նման բարեկամութեան առաքինութեան մասին: Սողոմոն ըսաւ. «Բարեկամը ամէն ատեն կը սիրէ» (Առ. 17. 17): Ան նաեւ նշեց. «Բարեկամին քաղցրութիւնը մտերիմ խորհուրդով՝ սիրտը կ'ուրախացնէ» (Առ. 27. 9):

Մեր մեծ Բարեկամը, անշուշտ՝ Յիսուս է: Իր աշակերտներուն սիրալիր բարեկամութիւն յորդորելով, Ան ուսուցանեց անոնց. «Ո՛չ մէկը ունի աւելի մեծ սէր, քան այն՝ երբ մէկը կ'ընծայէ իր անձը իր բարեկամներուն համար» (Յովհ. 15. 13): Ժիշդ յաջորդ օրը՝ Ան այդ բանը ըրա՛ւ խաչին վրայ: Ան նաեւ ըսաւ անոնց. «Ես բարեկամ կոչեցի ձեզ, որովհետեւ ամէն ինչ որ լսեցի իմ Հօրմէս՝ գիտցուցի ձեզի» (Հմ. 15): Ապա՛ ըսաւ. «Ասիկա՛ կը պատուիրեմ ձեզի, որ սիրէք զիրար» (Հմ. 17):

Նման խօսքերով, Յիսուս «կը բարձրացնէ իր ունկնդիրները», ինչպէս փիլիսոփայ Նիքօլըս Ուալթըրսթրոֆ (*Nicholas Wolterstroof*) ըսաւ, ստոր մարդոցմէ մինչեւ ուղեկիցներ եւ վստահելիներ: Քրիստոսով՝ մենք կը սորվինք բարեկամանալ ուրիշներու հետ: Ինչպիսի՛ բարեկամ մը՝ որ մեզի կը սորվեցնէ նման սէր:

Աղօթք - Սիրելի Յիսուս, Դուն զիս բարեկամ անուանեցիր: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի, որ ըլլամ սիրող ընկեր՝ ուրիշներու համար: Ամէն: **Յիսուսի հետ բարեկամանալով՝ իր սերը կը զգանք: Ուստի իրեն նման սիրենք մեր բարեկամները:**



Ամսիորդ՝ անխոհեմ եւ անզգուշ է: [Առ. 14. 16]

ԱՆԽՈՅԵՄ ԵՒ ԱՆԶԳՈՒՇ

Լինտրսֆէյմ (*Lindesfame*), որ նաեւ ծանօթ է որպէս Սուրբ Կղզի, մակընթացային կղզի է Անգլիոյ մէջ՝ կապուած մայր ցամաքամասին հետ նեղ ճամբայով մը: Օրական երկու անգամ ծովը կը ծածկէ ճամբան: Դրուած ցուցանիչները՝ այցելուներուն կը զգուշացնեն մակընթացութեան ժամանակ՝ ճամբան չգործածելու մասին: Սակայն, զբօսաշրջիկները պարբերաբար կ'անտեսեն նախազգուշացումները եւ յաճախ կը յայտնուին նստած սուզուող ինքնաշարժներու մէջ կամ կը լողան հասնելու բարձր խրճիթներ՝ փրկուելու համար: Մակընթացութիւնը կանխատեսելի է, որքան ծագող արեւը: Եւ ազդարարութիւնները ամէն տեղ են. կարելի չէ չնկատել: Սակայն, ինչպէս նկարագրեց գրող մը, Լինտրսֆէյմը «այն տեղն է, ուր անխոհեմները կը փորձեն գերազանցել մակընթացութեան»:

Առակները մեզի կ'ըսեն, որ անատութիւնը «անխոհեմ եւ անզգուշ է» (14. 16): Անխոհեմ մարդը՝ քիչ յարգանք ունի իմաստութեան կամ իմաստուն խորհուրդներու հանդէպ եւ չի ցուցաբերեր ուշադիր կամ ջանասէր հոգատարութիւն ուրիշներու նկատմամբ (Հմ. 7-8): Իմաստութիւնը սակայն, կը դանդաղեցնէ մեզ՝ լսելու եւ լաւ խորհելու, որպէսզի չտարուինք չմտածուած զգացմունքներով կամ քիչ մտածուած գաղափարներով (Հմ. 6): Իմաստութիւնը մեզի կը սորվեցնէ լաւ հարցեր տալ եւ հաշիւի առնել մեր վարմունքին հետեւանքները: Մինչ անխոհեմ մարդիկ առաջ կ'երթան չյարգելով յարաբերութիւնները կամ հետեւանքները, կամ յաճախ ճշմարտութիւնը, «խորագէտները իրենց քայլերուն ուշադրութիւն կը դարձնեն» (Հմ. 15):

Թէեւ երբեմն մեզի անհրաժեշտ կ'ըլլայ վճռական կամ արագ գործելու, մենք կրնանք դիմակալել անխոհեմութեան: Երբ կը ստանանք եւ կիրառենք Աստուծոյ իմաստութիւնը, Ան կու տայ մեզի պէտք եղած առաջնորդութիւնը, երբ անոր կարիքը ըլլայ:

Աղօթք - Սիրելի Աստուած, մենք կ'ապրինք անխոհեմ աշխարհի մը մէջ: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի ըլլալ իմաստուն եւ լաւ ապրի: Ամէն:
Անխոհեմ ըլլալը կը վնասէ մեզի: Ուստի՝ խուսափի՛նք անխոհեմ եւ անզգուշ ապրելէ:



[Յիսուս] ընծայեց ինքզինք մեր մեղքերուն համար, որպէսզի ազատէ մեզ այս ներկայ չար աշխարհէն: [Գաղ. 1. 4]

ՓՆՏՈՒԼ ԵՒ ԱԶԱՏԵԼ

Որոշ բարեկամներ գացին նաևով զբօսներու Անգլիոյ Նեղուցին մէջ, յուսալով՝ որ փոթորկոտ եղանակի կանխատեսումը կը փոխուի: Բայց հովերը սաստկացան եւ ալիքները դարձան կատաղի՝ սպառնալով նաևուն ապահովութեան: Ուստի՝ անոնք ձայնասփիւռի օգնութեան խնդրանքով՝ դիմեցին RNLİ-ին (Թագաւորական Ազգային Փրկարար Նաւակի Հաստատութեան): Որոշ լարուած պահերէ ետք, անոնք հեռուէն նկատեցին իրենց ազատարարներուն մօտենալը եւ անդրադարձան, որ շուտով ապահով պիտի ըլլան: Ինչպէս յետոյ բարեկամս երախտագիտութեամբ անդրադարձաւ, «Անկախ անկէ՝ թէ մարդիկ կ'անտեսեն ծովի կանոնները թէ ո՛չ, RNLİ-ը տակաւին օգնութեան կը հասնի»:

Երբ ան կը պատմէր պատահածին մասին, մտածեցի՝ թէ ինչպէ՞ս Յիսուս կ'առաջնորդէ Աստուծոյ փնտռող-եւ-ազատող առաքելութիւնը: Ան եկաւ աշխարհ, որպէսզի մարդ դառնայ ապրելով որպէս մեզմէ մէկը: Իր մահուան եւ յարութեան միջոցով՝ Ան մեզի տրամադրեց փրկութեան ծրագիրը, երբ մեր մեղքն ու անհնազանդութիւնը բաժնեցին մեզ Աստուծմէ: Այս ճշմարտութիւնը ընդգծեց Պօղոս, երբ գրեց Գաղատայի եկեղեցիին. «Տէր Յիսուս Քրիստոսը ... ընծայեց ինքզինք մեր մեղքերուն համար, որպէսզի ազատէ մեզ այս ներկայ չար աշխարհէն» (Գաղ. 1. 3-4): Պօղոս յիշեցուց Գաղատացիներուն նոր կեանքի պարգեւին մասին, որ անոնք ստացան Յիսուսի մահուան միջոցով, որպէսզի անոնք օրէ օր՝ պատուեն Աստուծոյ:

Յիսուս մեր Փրկիչը, պատրաստակամ մեռաւ՝ մեզ ազատելու համար կորուստէն: Քանի որ Ան ըրաւ ա՛յս, մենք կեանք ունինք Աստուծոյ արքայութեան մէջ եւ երախտապարտ հոգիով կրնանք բաժնեկցիլ մեր շուրջիներուն հետ՝ կեանք փրկող լուրերով:

Աղօթք - Տեր, Դո՛ւն կու տաս կեանքի եւ փրկութեան պարգեւը: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի ընդունելու Քու սերդ եւ տալու զայն ուրիշներուն: Ամէն:
Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու պատրաստ ըլլանք՝ Իր շնորհած փրկութեան շնորհքին համար եւ բաժնեկցիւք զայն ուրիշներու հետ:

Պահե՛ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են: [Առ. 4. 23]

ԱՌՈՂՋ ՍԻՐՏ

Մարդու սիրտը՝ զարմանալի գործիք մըն է: Բռունցքի չափով՝ այս մղիչ կայանը, կը կշռէ 200-400 կրամ: Ամէն օր կը տրուիէ մօտ 100,000 անգամ եւ կը մղէ շուրջ 7,500 լիդր արիւն մեր մարմինի շուրջ՝ 90,000 քիլօ մեթր երկարութեամբ՝ արեան անօթներուն ընդմէջէն: Նման ռազմավարական պարտականութեամբ եւ ծանրաբեռնուածութեամբ՝ Հասկնալի է, թէ ինչո՞ւ սիրտին առողջութիւնը կարեւոր է ամբողջ մարմինին բարեկեցութեան համար: Բժշկական գիտութիւնը մեզի կը քաջալերէ հետեւելու առողջ սովորութիւններու, քանի որ մեր սիրտի վիճակը եւ մեր առողջութեան որակը՝ միասին կ'ընթանան:

Մինչ բժշկական գիտութիւնը՝ հեղինակաւոր կերպով կը խօսի մեր ֆիզիքական սիրտին մասին, Աստուած աւելի մեծ հեղինակութեամբ կը խօսի՝ մէկ այլ տեսակի «սիրտի» մը մասին: Ան կ'անդրադառնայ մեր էութեան՝ մտաւոր, զգացական, հոգեւոր եւ բարոյական «կեդրոն»ին: Քանի որ սիրտը կեանքի կեդրոնական մշակումի միաւորն է, անիկա պէտք է պաշտպանուած ըլլայ: «Պահէ՛ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են» (Առ. 4. 23): Մեր սիրտերը պաշտպանելը կ'օգնէ՝ մեզի մեր խօսակցութեան մէջ (Հմ. 24), կը ստիպէ՝ մեզի ըլլալու խորաթափանց մեր աչքերով (Հմ. 25) եւ ընտրել լաւագոյն ուղիները՝ մեր ոտքերուն համար (Հմ. 27): Անկախ տարիքէն եւ կեանքի հանգրուանէն, երբ մեր սիրտերը պահուած են, մեր կեանքը կը պահպանուի, մեր յարաբերութիւնները կը պաշտպանուին եւ Աստուած կը պատուուի:

Աղօթք - Սիրելի Աստուած, քննե՛ զիս եւ ճանչցի՛ր իմ սիրտս. մէջս մաքուր սիրտ մը ստեղծե: Թո՛յլ տուր, որ իմ սիրտիս մէջ պահեմ Զու ճշմարտութիւնդ, որպէսզի չմեղանչեմ Զեզի դէմ: Ամէն:
Մեր ապրելակերպն ու սովորութիւնները՝ ցոյց կու տան մեր սիրտին իրավիճակը: Աղօթե՛նք՝ որ Աստուած փոխէ մեր սիրտերը:



Մի արհամարհեր այս պզտիկ սկզբնաւորութիւնները: [Չաք. 4. 10]

«ՓՈՔՐ» ԶՐԱՇՔՆԵՐ

Մեր հարսանեկան պատրաստութեան հաւաքի ընթացքին՝ մեր ամէկոտ բարեկամը՝ Տէյվ (Dave) կանգնած էր անկիւն մը, սեղմ բռնած՝ անձեռոցով փաթթուած երկայնաձեւ առարկան: Երբ իր կարգը հասաւ նուէրը ներկայացնելու, ան առջեւ բերաւ: Էվան (Evan) եւ ես բացինք նուէրը եւ տեսանք ձեռքով փորագրուած՝ փայտի կտոր մը, որ կը պարունակէր կատարեալ երկայնաձեւ համակեդրոն փայտահատիկ շրջանակներ եւ փորագրուած նախադասութիւն մը. «Աստուծոյ որոշ հրաշքները փոքր են»: Այդ յուշատախտակը՝ քառասուն հինգ տարիներէ ի վեր կախուած է մեր տան մէջ՝ դարձեալ ու դարձեալ յիշեցնելով, որ Աստուած կը գործէ նոյնիսկ մանրութիւններու եւ փոքր բաներու մէջ: Հաշիւ մը վճարել: Մնունդ ապահովել: Հարբուխէ բուժուիլ: Բոլորը միասին դրուած՝ կը ներկայացնեն Աստուծոյ նախատեսութեան տպաւորիչ արձանագրութիւնը:

Յուդայի կառավարիչ Զօրաբաբէլ, Զաքարիա մարգարէին միջոցով՝ նման պատգամ մը ստացաւ Աստուծմէ, Երուսաղէմի եւ տաճարին վերակառուցման վերաբերեալ: Բաբելոնի գերութենէն վերադառնալէ ետք՝ դանդաղ առաջընթացի շրջան մը սկսաւ եւ Իսրայէլի ժողովուրդը յուսահատեցաւ: «Մի արհամարհէր այս պզտիկ սկզբնաւորութիւնները» յայտարարեց Աստուած (Չաք. 4. 10): Ան կ'իրականցնէ Իր փափաքները մեր միջոցով եւ երբեմն ի հեծուկս մեզի: Ամենակարող զօրքերու Տէրը կը յայտարարէ. «Ո՛չ կարողութեամբ է, ո՛չ ալ ոյժով, հապա իմ Հոգիովս» (Հմ. 6):

Երբ մենք կը յոգնինք մեր մէջ եւ մեր շուրջը տեսած Աստուծոյ աշխատանքի ակնյայտ փոքրութենէն, յիշենք թէ Անոր որոշ հրաշքները կրնան «փոքր» ըլլալ: Սակայն Ան կ'օգտագործէ փոքր բաները Իր աւելի մեծ նպատակներուն հասնելու համար:

Աղօթք - Սիրելի Դայր, շնորհակալ եմ քու փոքրիկ հրաշքներուդ համար, որ կը կատարես իմ կեանքիս մէջ: Օգնէ՛ ինձի նկատելու՝ քու բոլոր գործերդ: Ամէն:

Փնտռենք ու գտնենք Աստուծոյ կատարած փոքր հրաշքները մեր կեանքին մէջ: Անոնց միջոցով՝ Ան հոգացած է մեր եւ մեր շուրջիներուն կարիքները:

ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Ազդել Մարդոց	Օգ. 1, 2, Սեպ. 252
Աղօթք	Յուլ. 4, 15, 25, 28, Օգ. 28, Սեպ. 3, 13
Ամուսնություն	Օգ. 23
Առատաձեռնություն	Յուլ. 27
Աստուծոյ Ընտանիքը	Յուլ. 4, Սեպ. 17
Աստուծոյ Նկարագիրը	Յուլ. 2, 5, 12, 29, Սեպ. 3
Աստուծոյ Սերն ու Հոգատարությունը	Յուլ. 24, 29, Օգ. 19, 22, 24, Սեպ. 9, 18, 30
Աստուծոյ Սպասել	Յուլ. 5, 25
Աստուծոյ Վաստահիլ	Յուլ. 5, 7, 18, 19, Սեպ. 7
Աւետարանչություն	Յուլ. 21, Օգ. 3, 13, Սեպ. 28
Բարեկամություն	Սեպ. 26
Բժշկություն	Սեպ. 21
Գոհունակություն	Յուլ. 16, Օգ. 18
Գութ եւ Արդարություն	Յուլ. 12, Օգ. 29, Սեպ. 18, 20
Դրախտ	Սեպ. 1
Եկեղեցի	Սեպ. 2, 9, 16, 23
Չղջում	Օգ. 23
Ընտանիք	Օգ. 2, 9, 16, 22, 23
Իմաստություն	Յուլ. 20, Օգ. 7, 31
Ծառայել Ուրիշներու	Յուլ. 8, Օգ. 12, 24, Սեպ. 10, 23, 28
Ծեռություն	Յուլ. 17
Ծնողք Ըլլալ	Յուլ. 18
Հալածանք	Յուլ. 16
Համայնք	Սեպ. 2, 24
Հանգիստ	Օգ. 28, 31, Սեպ. 12
Հաշտություն	Օգ. 8, 14, 15
Յարություն՝ Հաւատացեալներու	Սեպ. 15
Հաւատացեալներու հետ Միություն	Յուլ. 9, 14, Օգ. 25, Սեպ. 16
Յաւիտենական Կեանք	Օգ. 18

Յոյս եւ Երջանկութիւն.....	Օգ. 6, 10, Սեպ. 11, 19, 21
Հաւատքի Պատմութիւններ	Օգ. 21, Սեպ. 7
Հեղութիւն.....	Սեպ. 2
Հոգեկան Աճում.....	Յուլ. 3, Օգ. 1, 26, 27, Սեպ. 4, 25
Հոգեկան Նուէրներ.....	Յուլ. 1, 8, 15, 23
Հոգեկան Պատերազմ	Յուլ. 6
Մեղք.....	Յուլ. 10, 26, Սեպ. 29
Մեղքերու թողութիւն	Յուլ 26, Օգ. 13
Մտահոգութիւն	Յուլ. 25
Ներել Ուրիշներու.....	Օգ. 8, 14, 15
Որոշում Կայացնել	Օգ. 7
Ուրիշ Հաւատացեալներու հետ Ապրիլ.....	Սեպ. 24
Պաշտամունք.....	Յուլ. 13, 16, 28
Սեր՝ Ուրիշներու	Յուլ. 27, Օգ. 5, 9, 12, 14, 17, Սեպ. 5
Սուրբ Գիրքի Սերտողութիւն.....	Օգ. 10, 11
Սուրբ Հոգիին Պտուղները	Օգ. 9
Սրբութիւն.....	Յուլ. 26
Վախ.....	Օգ. 19
Վաւերականութիւն	Օգ. 1, 8, 15, 22, Սեպ. 6
Վերջին Օրերու Աստուածաբանութիւն... Սեպ. 1, 18, 15, 23	
Տառապանք.....	Յուլ. 7, 19, 25, 27, Օգ. 6, 10, Սեպ. 11, 21
Տօնակատարութիւն	Յուլ. 2, 9, 16, 23
Յեղապաշտութիւն	Յուլ. 9
Փրկութիւն	Յուլ. 11, 15, 31, Օգ. 12, 24, Սեպ. 10, 23, 28
Զաջալերութիւն.....	Յուլ. 20, Օգ. 10, 17
Զրիստոս՝ Անձ/Գործ	Յուլ. 31, Օգ. 24, Սեպ. 20
Զրիստոս՝ Յարութիւն.....	Սեպ. 15
Զրիստոս՝ Վերադարձ.....	Սեպ. 1, 8, 15, 22
Զրիստոսի Ինքնութիւնը	Օգ. 1, Սեպ. 6, 10
Զրիստոսի Հետ Միութիւն	Օգ. 16, 27, Սեպ. 17, 23, 26
Զրիստոսի Համար Ապրիլ	Յուլ. 8, 17, 30, Օգ. 4, 21
Զրիստոսի Նման Ապրիլ	Յուլ. 10, Օգ. 5, 11, Սեպ. 5, 29

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ, կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրօնին վրայ եւ դրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.–

Սփիւռքի հասցէ՝

Armenian Missionary Association

31 West Century Road

Paramus, NJ 07652

Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝

Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն

Բաղրամեան Փողոց, Թիւ 18

Երեւան, Հայաստան

հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....